

ՆԱԴԻՐ ՇԱՀԻ  
ԴԱՐԱՇՐՋԱՆԻ  
ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ  
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ



ԵՐԵՎԱՆ • 2010







ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

197482

**ՆԱԴԻՐ ՀԱՀԻ  
ԴԱՐԱՀՐՁԱՆԻ  
ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ  
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ**

**Աշխատասիրությամբ  
ԱՐՏԱԿ ՄԱՂԱԼՅԱՆԻ**



**Ե Ր Ե Վ Ա Ն**  
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
2010

*Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ*

*Խմբագիրներ՝  
պ. գ. թ. Բ. Կոստիկյան  
պ. գ. թ. Ա. Մալխասյան*

Նազիր շահի դարաշրջանի պատմագրական հուշարձանները  
Լ 142 *(աշխատասիրությամբ Արտակ Մաղալյանի)*. – Եր.:  
*«Գիտություն» հրատ., 2010, 168 էջ + 32 էջ ներդիր:*

*Գրքում ընդգրկված են Իրանի XVIII դարի պատմության երկու սկզբնաղբյուրների՝ «Յաղագս պատմութեանցն Պերսիու երկրին» երկի և ռուս պատմադիր Վասիլի Բրատիչչևի «Բացատրութիւն անցիցն անցելոց ի մէջ Շահ Նազիրայ եւ աւագ որդւոյ նորին Ռզա-Ղուլի Միրզին տրտմալի պատահմանց» աշխատության հայերեն թարգմանությունները: Այդ աշխատությունները կարող են օգտակար լինել Իրանի և հարակից երկրների XVIII դարի պատմության բազմաթիվ հարցերի լուսաբանման համար:*

*Գիրքը նախատեսված է պատմաբանների, արևելագետների և ընթերցող լայն հասարակայնության համար:*

## ԱՌԱՋԱԲԱՆ

**Իրանի մեծագույն տիրակալներից մեկը՝ Նադիր շահը (1736–1747)** պատմության թատերաբեմում գտնվել է ընդամենը 20 տարի, սակայն նրա կյանքի և գործունեությունը վերաբերյալ ստեղծվել է ավելի մեծաքանակ գրականություն, քան շուրջ 230 տարի Իրանում իշխած Սեֆյան արքայատոհմի մասին: Նադիր շահի գործունեությունը նվիրված սկզբնաղբյուրների շարքում չափազանց կարևոր տեղ են զբաղեցնում նաև հայ պատմագիրների հետևյալ աշխատությունները.

ա) **Աբրահամ Կրետացի, Պատմություն, քննական բնագիր, ռուսերեն թարգմանություն, առաջաբան և ծանոթագրություններ՝ Ն. Ղորղանյանի, Երևան, 1973:**

բ) **Աբրահամ Երեւանցի, Պատմութիւն պատերազմացն 1721–1736 թուի, հրատարակեց Հ. Սահակ Ճեմճեմեան, Վենետիկ–Ս. Ղազար, 1977:**

գ) **Հակոբ Ծամախեցի, Նադիր շահի արշավանքները, աշխատասիրությունը Ս. Տեր-Ավետիսյանի, Երևան, 1940:**

դ) **Քյուչուք Արուսի, Պատմություն թահմազ Ղուլու, «Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու», Երևան, N 1, 1941, էջ 101–128<sup>1</sup>:**

Այս սկզբնաղբյուրներից բացի լույս են տեսել նաև օտար հեղինակների՝ Նադիր շահին նվիրված հետևյալ աշխատությունները հայերեն թարգմանությունները.

ե) **Հանուէ, Պատմագրութիւն վարուցն եւ գործոց Նադիր շահ թագաւորին Պարսից, թարգմանեալ յանգլիացոց բարբառոյ ի հայ բարբառ ի Միրզայեան Պօղոսէ Ամիթեցոյ, Մադրաս, 1780:**

<sup>1</sup> Նշված են միայն հիմնական հրատարակությունները:

զ) Վասիլի Բրատիչչեւ, Բացատրութիւն անցիցն անցելոց ի մէջ Շահ Նադիրայ եւ աւագ որդւոյ նորին Ռզա-Ղուլի Միրզին տրտմալի պատահմանց ի յերկրին Պարսից յամս 1741 եւ 1742, յամի 1778 թարգմանեցեալ ի բարբառս հայոց Յարութիւն Դաւթեհիւ Ջուղայեցւոյ, աշխատասիրությամբ Արտակ Մաղալյանի, Երևան, 2009:

Ահա այսքանով սահմանափակվում է Նադիր շահին նվիրված սկզբնաղբյուրների հայերեն տպագրութիւնների ցանկը: Այժմ վերոհիշյալ հրատարակութիւններին գալիս է ավելանալու ևս մեկ նորահայտ սկզբնաղբյուր՝ «Յաղագս պատմութեանցն Պերսիու երկրին» աշխատութիւնը, որը թարգմանել է Հարութիւն Դավթյան Դելանյան Ջուղայեցին: Նրա կատարած թարգմանութիւններն առավել ամբողջական ներկայացնելու նպատակով, առանց էական փոփոխութիւնների, այստեղ վերահրատարակում ենք նաև XVIII դարի ռուս պատմագիր Վասիլի Բրատիչչեւի վերոնշյալ աշխատութիւնը:

Վասիլի Բրատիչչեւի «Բացատրութիւն անցիցն անցելոց ի մէջ Շահ Նադիրայ եւ աւագ որդւոյ նորին Ռզա-Ղուլի Միրզին տրտմալի պատահմանց» աշխատութիւնը հրատարակվել է 1763 թ., Սանկտ Պետերբուրգում, Ռուսաստանի Կայսերական ակադեմիայի կողմից<sup>2</sup>: Այդ աշխատութիւնը հայերեն թարգմանութիւնը, որը կատարել է Հարութիւն Դավթյան Ջուղայեցին 1778 թ., պահվում է Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում, 9648 թվահամարի տակ<sup>3</sup>: Այդ ձեռագիրը XVIII դարի վերջին նրա կողմից կազմված պատմական նյութերի մի մեծարժեք ժողովածու է: Ինչպես տեղեկանում ենք «Կռուսկ

<sup>2</sup> Братищев В., Известие о происшедших между шахом Надиром и старшим его сыном Реза-Кулы-Мирзою печальных приключениях в Персии 1741 и 1742 гг., СПб., 1763.

<sup>3</sup> Մատենադարանի ձեռագրացուցակում սույն ձեռագիրը ներկայացված է այսպես. «ԺԸ դ. (1778-ից հետո): Թերթ՝ 79: Թուղթ: 33,5 x 21,1: Միասյուն: Նոտրգիր: Տող՝ 32-36: Կազմ՝ կաշեպատ ստվարաթուղթ: Հիշատակարան մախագաղափար՝ 3ա (1723 թ.), 48ա (1763 թ.), 65ա (1782 թ.)» (տես Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, Ե., 1970, էջ 967):

Հայոց աշխարհին» հանդեսում տպագրված Պետրոս դի Սարգիս Գիլանենցի «Ժամանակագրութեան» առաջաբանից, որի հրատարակումը կատարվել է այս ձեռագրից, այդ աշխատությունը հրատարակության պատրաստող «Գէորգ Ախվերդեանցը վեր է առել էդ ձեռագիրը հանդուցեալ իշխան Յովհաննէս Զաքարեան Արղութեանցից... Իշխան Յովհաննէս Արղութեանցին հասել է էդ ձեռագիրը Յովսէփ կաթողիկոսից, որն որ Յովհաննէս Արղութեանցի հօր՝ Զաքարի հօրեղբօր որդին էր, և յառաջ քան կաթողիկոս ընտրվիլը Ռուսաստան բնակվող և Աշտորխան բնակվող հայերի արքեպիսկոպոս էր»<sup>4</sup>: Այստեղից կարող ենք ենթադրել, որ հենց Հովսէփ Արղությանն էլ եղել է այս մատյանի պատվիրատուն:

Սույն ձեռագիրն ընդգրկում է հետևյալ աշխատությունները.

ա) Պետրոս դի Սարգիս Գիլանէնց, Ժամանակագրութիւն (3ա-24ա)<sup>5</sup>,

բ) Յաղագս պատմութեանցն Պերսիոս երկրին սկսեալ Շահ Սուլթան Հուսէինիցն մինչև ցայսօր («Թարգմանեցեալ ի Յօլանդիզի կազէթից») (25ա-47ա),

գ) Վասիլի Բրատիչչև, Բացատրութիւն անցիցն անցելոց ի մէջ Շահ Նադիրայ եւ աւագ որդւոյ նորին Ռզա-Ղուլի Միրզին տրտմալի պատահմանց ի յերկրին Պարսից յամս 1741 եւ 1742, իսկ այժմ յամի 1778 թարգմանեցեալ ի բարբառս հայոց Յարութիւն Դաւթենիւ Զուղայեցւոյ (48ա-64ա),

դ) Դէլօրիեր, Առարկութիւն առ իւրոյ պապական սրբութեանն Պիոսի Վեցերորդի (65ա-78ա),

ե) Կարգադրութիւն Ավստրիոս Յովսէփոյ կայսեր («Թիւն 1785, նոյեմբերի 27-էն Ավստրիոս համար 100 կազէթն տպեցեալ է») (78բ-79բ):

<sup>4</sup> «Կռուճկ Յայոց աշխարհին», 1863, թիւ Բ, էջ 82:

<sup>5</sup> Պետրոս դի Սարգիս Գիլանէնց, Ժամանակագրութիւն, «Կռուճկ Յայոց աշխարհին», 1863, թիւ Բ, էջ 81-112, թիւ Գ, էջ 181-212:

Նույն թարգմանության մեկ այլ արտագրություն՝ կատարված թիֆլիսեցի Ստեփան դի Մանդենովի կողմից 1803 թ., պահվում է Մատենադարանում, 10889 թվահամարի տակ<sup>6</sup>: Դատելով ձեռագրի հիշատակարաններից՝ վերջինս մատյանի ընդօրինակումը սկսել է 1803 թ. հունվարի 22-ին, և ավարտին հասցրել նույն թվականի փետրվարի 24-ին:

Վ. Բրատիչչևի աշխատության հայերեն թարգմանությունը, որը Հարություն Դավթյան Ջուղայեցին իրականացրել է ռուսերեն հրատարակությունից ընդամենը տասնհինգ տարի անց, պայմանավորված էր Նադիր շահի կյանքի և գործունեության նկատմամբ եղած մեծ հետաքրքրությամբ: Պատահական է, որ ճիշտ նույն ժամանակաշրջանում մեկ այլ հայորդի՝ Պողոս Միրզայան Ամիթեցին հեռավոր Կալկաթայում ձեռնարկել և, «առանց ոչինչ վարձու, և ոչ ումեք է ակնկալութեան», իրականացրել է անգլիացի ճանապարհորդ Ջոնս Հանվելի հայտնի աշխատության<sup>7</sup> Նադիր շահին նվիրված մասի հայերեն թարգմանությունը, որը 1780–1783 թթ. լույս է տեսել Մադրասում, Հակոբ Շահամիրյանի տպարանում, ընդամենը 200 օրինակ տպաքանակով<sup>8</sup>:

Սակայն, ի տարբերություն Հանվելի գրքի՝ Պողոս Միրզայանի թարգմանության, Հարություն Դավթյան Ջուղայեցու թարգմանությունը տակավին մնացել էր անտիպ:

Մատենադարանում պահվում են Հարություն Դավթյան Ջուղայեցու ընդօրինակած մի քանի ձեռագրեր, որոնց հիշա-

<sup>6</sup> Մատենադարանի ձեռագրացուցակում սույն ձեռագիրը ներկայացված է այսպես. «1803 թ.: Թիֆլիս: Գրիչ՝ Ստեփան դի Մանդենով: Թերթ՝ 26: Թուղթ՝ 21,8 x 17,3: Միասին: Ստորգիր: Տող՝ 19–23: Պահպանակ՝ 2 + 2, սպիտակ թուղթ: Կազմ՝ մոմյաթապատ ստուրաթուղթ, աստառ՝ թուղթ: Յիշատակարան՝ 1ա, 26ա» (տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, Ե., 2007, էջ 244):

<sup>7</sup> Jonas Hanway, An historical account of the British trade over the Caspian sea, vol. I-II, London, 1754.

<sup>8</sup> Հանուէ, Պատմագրութիւն վարուցն եւ գործոց Նադըր շահ թագաւորին Պարսից, թարգմանեալ յանգլիացոց բարբառոյ ի հայ բարբառ ի Միրզայեան Պօղոսէ Ամիթեցույ, Մադրաս, 1780:

տակարանների շնորհիվ հնարավոր է դառնում լույս սփռել նրա կենսագրութան որոշ էջերի վրա: Այսպես, նա 1767 թ. Աստրախանում ընդօրինակել է Գրիգոր Կամպանյանի «Երգարանը», որի վերջում տեղ գտած հիշատակարանում կարդում ենք. «Օրինակեցալ յամի Տեառն 1767 փետրվարի 9, ի նաւահանգիստն Աստրախան, ձեռամբ մեղապարտ Յարութիւն Դավթենէ»<sup>9</sup>:

Մեկ տարի անց՝ 1768 թ. դեկտեմբերին, նա Աստրախանում ավարտել է Միքայել Ասորու «Ժամանակաց զրոյցք» («Ժամանակագրութիւն») աշխատության ընդօրինակումը, որի ձեռագիրը գրանցված է Մատենադարանում 3517 թվահամարի տակ: Այդ մատյանի վերջում նրա թողած հիշատակարանում կարդում ենք. «Խնդրեմ Աստուածասէր Հարցդ և եղբարցդ, ո՛վ ոք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեսլիք առ յոյսն բնաւից Քրիստոս զնուստ Յարութիւնս Զուղայեցի, զհայրն իմ Դաւիթն և զմայրն իմ Սօլթանաղէն, որք հանդուցեալք են ի Տէր: Եւ մանաւանդ զնորաբողբոջ որդիքն մեր՝ զԴաւիթն և զՄարգարայն, որք ծառայք ձեր են ամենեցւոյն, թերևս աղօթիւք ձերովք զարգասցին ուղիղ հաւատով, երկիւղիւ և աստուածպաշտութեամբ ի փառս անուան իւրոյ. ամէն... Եղև աւարտումն ի թուին ՌէձՎԸ (1768) դեկտեմբեր Ի (20). ի Աստրախան քաղաքի»<sup>10</sup>: Այս հիշատակարաններից պարզ է դառնում, որ Հարություն Դավթյան Զուղայեցին 1760-ական թթ. վերջերին ապրել է Աստրախանում, որտեղ էլ, ամենայն հավանականութեամբ, սովորել է ուսեւրեն:

Այնուհետև Հարություն Դավթյանն ընդօրինակել է մի ժողովածու (Մատենադարան, ձեռ. N 8003), որն ընդգրկում է Կեղծ-Կալիսթենեսին վերագրվող «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ» աշխատությունը և Պետրոս Բերդումյանի

<sup>9</sup> Մատենադարան, ձեռ. N 9840, էջ 36ա:

<sup>10</sup> Մատենադարան, ձեռ. N 3517, էջ 224ա:

«Աստուածանմանութիւն» երկը<sup>11</sup>: Թեև սույն ժողովածուն ան-  
թվակիր է, սակայն ակնհայտ է, որ ձեռագիրն ընդօրինակված  
է 1769-ից հետո, քանի որ Պ. Բերդուլմյանն իր աշխատության  
չարագրումն ավարտել է այդ թվականին: Ալեքսանդրի վարքի  
վերջում Հ. Դավթյանը թողել է մի համառոտ հիշատակարան,  
որը թեև կենսագրական որևէ տեղեկություն չի պարունակում,  
սակայն խոսում է այս բազմաբղջուն գրչի պատրաստվածութ-  
յան մասին. «Իսկ զայս Պատմութիւնս աշխարհակալին Աղեք-  
սանդրու, զոր գրեց իմով անարժան Յարութիւն Դաւթեանի  
ձեռամբս՝ սրբագրեալ, առընթեր ունելով երկու օրինակս: Բայց  
ի տեղիս տեղիս բառ և բան անհամեմատք էին, որ և որչափն  
կարի մեր նուաստագոյն ուղղելով գրեցի և ոմանք բառք ու  
բանք, զորս վասն այլայլութեան գրողացն չհասկացայ, այն-  
պէս գրեցեցի՝ ստուգապէս ընդ համեմատ օրինակացն և ոչ  
աւելի կամ պակաս՝ սակա օգտի ինձ նուաստիս և այլ համ-  
բակաց, որք կամին օգտիլ ի Աղեքսանդրէ»<sup>12</sup>: Հարություն  
Դավթյան Ջուղայեցու. ընդօրինակած ձեռագրերի մանրա-  
կրկիտ ուսումնասիրությունը մեզ բերեց այն համոզման, որ  
գործ ունենք իր ժամանակի առավել բանիմաց և գրագետ անձ-  
նավորություններից մեկի հետ: Թերևս Մեծն Ալեքսանդրի  
պատմության ընդօրինակումն է նրան հուշել «երկրորդ Ալեք-  
սանդր» հորջորջված Նազիր շահին նվիրված Վ. Բրատիչչևի  
աշխատության թարգմանության գաղափարը:

Հետագայում Հարություն Դավթյան Ջուղայեցին ևս մեկ  
անգամ անդրադարձել է Ալեքսանդր Մակեդոնացու թեմային՝  
ուսներենից հայերեն թարգմանելով *Մարի հռոմեացի պատմիչ  
Քվինտոս Կուրտիոս Ռուփոսի «Գիրք պատմութեանց Մեծին  
Աղեքսանդրի»* աշխատությունը, որի ձեռագիրը ևս պահվում է  
Մատենադարանում, 2870 թվահամարի տակ: Այս ձեռագրի հի-

<sup>11</sup> Գրատ. տես Բերդումեան Պ., Աստուածանմանութիւն, Կալկաթա, 1827:

<sup>12</sup> Մատենադարան, ձեռ. N 8003, էջ 176ա, հրատ. տես Պատմութիւն Աղեք-  
սանդրի Մակեդոնացու, աշխ. Գ. Սիմոնյանի, Ե., 1989, էջ 47:

չատակարանը Հաղորդում է նաև նրա ազգանունը. «Թարգմանեցեալ ի լաթինականէ ի ռուստաց լեզու: Հատոր առաջին: Իսկ այժմ արտահանեցեալ անտի ի բարբառս Հայոց Յարութիւնի Դաւթեան Դիլանեանց Զուղայեցւոյ»<sup>13</sup>: Զեռագրում առկա Մակեդոնացու նկարի շրջանակի ներքևի մասում գրված է. «Մեծն Աղէքսանդր Մակեդոնացի. ի Սանկթ Պետրբուրղ փորագրեալ: Ի 1793 յամի Տեառն. ՌՄԽԲ», հետևաբար՝ երկի թարգմանությունը կատարվել է 1790-ական թթ. կեսերին:

Կուրտիոս Ռուփոսի և Վ. Բրատիշչևի երկերի թարգմանությունից բացի նա 1798 թ. Աստրախանում ռուսերենից հայերեն է թարգմանել Ֆեոդոր Էմինի «Գիրք խոստովանական անուանեալ ճանապարհ փրկութեան» աշխատությունը, որը ձեռագիր վիճակով պահվում է Մատենադարանում, 7504 համարի տակ: Թարգմանությունը կատարված է Ֆ. Էմինի գրքի առաջին հրատարակությունից<sup>14</sup> տասնութ տարի անց: Այս ձեռագրի հիշատակարանը հաղորդում է. «Այժմ թարգմանեալ Յարութիւն Դաւթեան Դելէանեան Զուղայեցւոյ. յամի Տեառն 1798. ի Աստրախան»<sup>15</sup>:

Նա 1806 թ. Աստրախանում ընդօրինակել է Դյուլորիեի՝ իր իսկ թարգմանած և N 9648 ժողովածուից մեզ նախածանոթ «Առարկութիւն առ պապն Պիոս» երկը, որի ձեռագիրը գրանցված է Մատենադարանում 23 թվահամարի տակ: Այդ ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Այժմ թարգմանեալ ի բարբառս Հայոց նուստ և ապիկար Յարութիւնէ Դաւթեան Զուղայեցւոյ Դելանեան, ի Աստրախան քաղաքի, 1806 ամի»<sup>16</sup>:

Ենթադրում ենք, որ նա է ընդօրինակել նաև հայ իրավագիտական մտքի կարևոր հուշարձաններից մեկի՝ «Աստրախանի Հայոց Դատաստանագրքի» մի խմբագրությունը, որի գրչագիրը պահվում է Մատենադարանում, 448 համարի տակ: Այդ

<sup>13</sup> Մատենադարան, ձեռ. N 2870, էջ 1ա:

<sup>14</sup> Эмин Ф., Путь ко спасению или разные набожные размышления, СПб., 1780.

<sup>15</sup> Մատենադարան, ձեռ. N 7504, էջ 1ա:

<sup>16</sup> Մատենադարան, ձեռ. N 23, էջ 1ա:

Դատաստանագիրքը հրատարակության պատրաստած Ֆ. Պոդոսյանը իրավացիորեն նկատել է. «Հիշատակարան չունենալու պատճառով հայտնի չէ բնագրի խմբագրման թվականը: Բայց առաջաբանից երևում է, որ այն գրվել է 1802 թ. ոչ շուտ և 1805 թ. ոչ ուշ, որովհետև այնտեղ խոսվում է ներառյալ մինչև 1802 թ. եղած ցարական այն հրովարտակաների մասին, որոնք այս կամ այն չափով վերաբերում են հայերին»<sup>17</sup>:

Այսպիսով, Մատենադարանի N 3517 ձեռագրի հիշատակարանում առկա գրչի որդու Դավիթ անունը և նրա «Դեկանեան» ազգանունը որևէ կասկած չեն թողնում, որ վերոնշյալ աշխատությունների թարգմանիչ և բազմադրույն գրիչ Հարություն Դավթյան Դելանյան Ջուղայեցին ոչ այլ ոք է, եթե ոչ ռուսական բանակի գեներալ-մայոր, 1812 թ. Հայրենական պատերազմի հերոս Դավիթ Դելյանովի (Դելանյան, 1761-1830) հայրը: Վերջինիս որդին՝ պետական գործիչ, կոմս Իվան (Հովհաննես) Դելյանովը (1818-1897) 1882-1897 թթ. եղել է Ռուսաստանի հանրային կրթության նախարարը<sup>18</sup>: Նրան նվիրված լրագրային մի հոդվածում հայ նշանավոր պատմաբան Ալ. Երիցյանը գրում է. «Այդ պաշտօնում, որպէս յայտնի է, նա պարգևատրուեցաւ Կոմսութեան տիտղոսով, որ յետ կոմս Լօռու-Մելիքեանի՝ երկրորդ օրինակն էր Ռուսիոյ հայերից այդպիսի փառաց և պատուի բարձրանալուն»<sup>19</sup>: Սակայն, միաժամանակ, Ալ. Երիցյանը լռությամբ շրջանցում է այն փաստը, որ Ի. Դելյանովը իր պաշտոնը ոչ միայն որևէ կերպ չծառայեցրեց իր ազգի շահերին, այլև նրա պաշտոնավարության օրոք 1885 թվականին փակվեցին բազմաթիվ հայկական դպրոցներ:

Նույն հոդվածում Ալ. Երիցյանը հակիրճ անդրադառնում է նաև հանգուցյալ կոմսի տոհմական ծագմանը: Ներկայացնե-

<sup>17</sup> Դատաստանագիրք Աստրախանի հայոց, աշխ. Ֆ. Պոդոսյանի, Ե., 1967, էջ 6ԺԶ:

<sup>18</sup> Նրա մասին տես Хрущов И., Памяти графа И. Д. Делянова, СПб., 1898.

<sup>19</sup> Երիցեանց Ա., Հանգուցեալ մախարար կոմս Յովհաննէս Դ. Դելեանեանցի եւ նրա տոհմական ծագումը, «Արծազանք», 1898, N 2, էջ 2:

լով Նոր Զուղայի մեծահարուստների XVIII դ. կեսերի գաղթը դեպի աշխարհի տարբեր երկրներ, նա գրում է. «Զուղայի այդ գաղթականների մէջ կային նաև յայտնի նշանաւոր Դիլաքեանց կամ Տէլաքեանց տոհմից երկու եղբայրներ՝ Յարութիւն և Խաչատուր Դիլաքեանք... Թողնելով Զուղայի փարթամ կեանքը, յիշեալ եղբարց կրտսերը — Խաչատուրը գաղթեց Տաճկաստան, բայց թէ ո՞ւր հաստատուեց և կամ այժմ կա՞յ արդեօք նրա սերունդը — մեզ յայտնի չէ»:

«Իսկ աւագ եղբայր Յարութիւնը, — շարունակում է հոգեւածագիրը, — գրեթէ միաժամանակ միւս ջուղայեցի գաղթական Ղազար Լազարեանի հետ, դիմեց դէպի Ռուսաստան՝ հաստատելով իւր բնակութիւնը նախ Աշտրախանում...»<sup>20</sup>: Հայտնի է, որ Ղազար (Աղազար) Լազարյանը Աստրախան է տեղափոխվել 1747 թ.: XVIII դարի կեսերին՝ կապված Իրանում հետզհետե սաստկացող բռնութիւնների և Նազիր շահի սպանութիւնից հետո ծայր առած անիշխանության հետ, «Զուղայից այստեղ էին գաղթել 24 ընտանիք, 11 ընտանիք գաղթել էր Արդաբիլից, 8-ը՝ Թավրիզից, 7-ը՝ Ղազվինից»<sup>21</sup>: Ամենայն հավանականութեամբ, 1740-ական թվականների վերջերին Աստրախանում հաստատված ջուղայեցիների մեջ էր նաև Հարություն Դիլաքյանը: «Ռուսաց տէրութիւնը ընդունեց նրան ազնուականաց շարքում: Ահա այդ միջոցում Յարութիւն աղայն, իւր Դիլաքեան ազգանունի մէջ ք տառը փոխելով աւելի գործածական ն տառին, վերակոչուեցաւ Դիլանեանց, որ ապա դարձաւ Դելեանեանց»<sup>22</sup>, իսկ նրա ժառանգների օրոք, ի վերջո՝ Դելյանով: Ի դեպ, ազգանվան աստիճանական ուսականացումը դժվար չէ նկատել նաև նրա ընդօրինակած ձեռագրերի հիշատակարանները թերթելիս:

<sup>20</sup> Նույն տեղում:

<sup>21</sup> Դիլոյան Վ., Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեւոյան պատմութիւնից, Ե., 1966, էջ 28:

<sup>22</sup> «Արծազանք», 1898, N 2, էջ 1:

Հարուժյուն Դելանյանը 1795-ից հայերեն է դասավանդել Աստրախանի ժողովրդական գլխավոր ուսումնարանում<sup>23</sup>, իսկ հետագայում Աստրախանից տեղափոխվել է Պետերբուրգ, որտեղ ստացել է ազնվականի կոչում<sup>24</sup>: Նա մտերիմ հարաբերություններ է մեջ է եղել Հազարյանների և ռուսահայոց թեմի առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղունի ճեմ<sup>25</sup>:

Արժանին պետք է մատուցել Հարուժյուն Դավթյան Դելանյան Ջուղայեցուն հրապարակվող աշխատությունների բարձրարժեք թարգմանություն համար: Դրանք Հանվեյի երկի՝ Նադիր շահին նվիրված մասի հայերեն թարգմանություն հետ մեկտեղ անվարան կարելի է դասել XVIII դարի հայ թարգմանական գրականության լավագույն հուշարձանների շարքը:

\* \* \*

«Յաղագս պատմութեանցն Պերսիու երկրին սկսեալ Շահ Սուլթան Հուսէինիցն մինչև ցայսօր» աշխատության հայերեն թարգմանությունը գտնվում է Մատենադարանի N 9648 ժողովածուի 25ա-47ա էջերում: Երկը, ինչպես հուշում է թարգմանիչ Հ. Դելանյանի ծանուցումը, նախապես հրատարակված է եղել «յօլանդիզի կազէթում»: Յավոք, թարգմանության վրա բացակայում է հեղինակի ազգանունը, իսկ մեր բոլոր որոնումները՝ Հայաստանի գրապահոցներում հայտնաբերելու այն «յօլանդիզի կազէթը», որտեղ առաջին անգամ հրատարակվել է այս երկը, անցան ապարդյուն: Բացի այդ, առավել հակված ենք կարծելու, որ թարգմանությունն իրականացվել է ոչ թե անմիջականորեն հոլանդական հանդեսից, այլ, ինչպես կուրսիոս Ռուփոսի հիշյալ աշխատության դեպքում էր, «արտա-

<sup>23</sup> Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. 1, Ե., 2003, էջ 277:

<sup>24</sup> Нерсисян М., Отечественная война 1812 г. и народы Кавказа, Е., 1965, с. 222.

<sup>25</sup> Դիւան հայոց պատմութեան, գիրք Թ, Յովսէփ Արղութեան, հրատ. Գիւտ Աղանեանց, Թիֆլիս, 1911, էջ 26, 36:

հանվել» դրա ուսերեն թարգմանությունից: Այս տեսակետի օգտին է վկայում «ըսկամի» («скамья»), «օֆիցեր» («офицер»), «սօլդատ» («солдат») և «ֆամիլի» («фамилия») ուսերեն բառերի առկայությունը հայերեն թարգմանության մեջ:

Սակայն, նկատի ունենալով սույն աշխատության կարևորությունը և, հատկապես՝ հայոց պատմությանը վերաբերող բազմաթիվ տեղեկությունների առկայությունն այս երկում, որոշեցինք այն հանձնել ընթերցողների դատին: Համոզված ենք, որ այս մեծարժեք աշխատության հետ կապված շատ հարցեր կարող են լրացուցիչ պարզաբանում ստանալ հայերեն թարգմանության հրապարակումից և դիտական լայն շրջանակների սեփականությունը դարձնելուց հետո միայն:

Աշխատության մեջ որոշ դեպքեր նկարագրված են այնպիսի մանրամասնություններով, որ թվում է թե հեղինակն անձամբ ականատես է եղել այդ իրադարձություններին, կամ այդ գլուխները շարադրել է ականատեսների հաղորդած տեղեկությունների հիման վրա: Այսպես, ներկայացնելով աֆղանների կողմից 1722 թ. Սպահանի պաշարման ընթացքում քաղաքում տիրող իրավիճակը, հեղինակը գրում է. «Եւ որքան զնալով առաւել ևս սովն սաստկանայր, մինչ զի ի քաղաքումն ոչ ևս մնաց զկերակուր, մինչև Գազ կոչեցեալ գեղն շուն, կատու և ձին հատաւ ուտելով զնոսին: Այլև վայանդիղի քապիտանին բազում ամաց հետէ ի յամբարուոջ մնացեալ շաքար կայր, որ մին ամիս քաղաքն զայն շաքարն պահեաց, որ զիտրն մին թումանէն մինչի երկու թուման ծախեցին»<sup>26</sup>: Խոսելով այդ ընթացքում Նոր Զուղայում տիրող իրավիճակի մասին, նա գրում է. «Բայց Զուղայ աղուանին ձեռացն էր, ուտելիքն կարի աժան էր, այսպէս որ մին կովն Զուղու միջումն ԲՃ (200) դիան էր գինն սպիտակ դրամովք և մին ոչխարն Մ (50) դիանովն ին տալիս» (30ա):

<sup>26</sup> Մատենադարան, ձեռ. N 9648, էջ 30ա (այսուհետև սույն ձեռագրի էջերը հղելու ենք շարադրանքում):

Ներկայացնելով Սպահանի գրավումից հետո քաղաքում տիրող իրավիճակը, հեղինակը գրում է. «Շահ Մահմուդն հրաման արար՝ քաղաքն յիստակեցին, զոր ինչ մեռեալք կային տարան ի դուրս, և ջառ կանչեցին, որ էլ մարդ չսպանեն... Դարձեալ Մահմուդն հօլանդիզի քապիտանիցն ԻՌ (20.000) թուման յինք առավ, և պատճառն այս էր՝ ասաց, թէ. «Վասն քոյ շաքարին մին ամիս սարգէրդան (Թափառական – Ա. Մ.) արարիր, որ կարացի ոչ շուտով քաղաքն առ[ն]ուլն» (30բ): Եվ այսպես բազմաթիվ վկայութիւններ: Նկատի ունենալով այս փաստարկները, չենք բացառում, որ «Յաղազս պատմութեանցն Պերսիու երկրին» աշխատութեան հեղինակը կարող է լինել Սպահանի պաշարման ընթացքում քաղաքում գտնված հուանդացիներից մեկը:

Ինչպես երևում է աշխատութեան ուսումնասիրութիւնից, հեղինակն օգտվել է նաև մի քանի սկզբնաղբյուրներից: Թեև իր օգտագործած աղբյուրները նա հանվանն չի նշում, սակայն ընդհանուր ձևով հիշատակում է դրանց մասին: Այսպես, 7-րդ գլխում, ուր խոսվում է Սեֆյան Իրանի աստիճանական թուլացման մասին, հեղինակը գրում է. «Եւ երկիրն այս կերպիւն նվազեցաւ, որպէս գրի ի պատմութեան գիրս ֆռանկաց» (27բ): Կամ, նույն գլխում մեկ այլ տեղ նա գրում է. «Ժողովուրդքն մնում ան անճար և անօգնական ի մէջ նեղութեան և տառապանաց, որպէս պատմագիրքն գրէ» (28ա): Երկի 12-րդ գլխում, խոսելով աֆղանների կողմից Նոր Զուղայի իշխանների կրած տառապանքների և աֆղան Մահմուդ շահի կողմից նրանց ներում շնորհելու մասին, հեղինակը գրում է. «Եւ առաքեաց թագաւորն պարգևս ծիրանիս և ընձայ պատուելի անձին Յակոբջանին, զոր առեալ ի քարվանսարայէն և տարան ի տուն իւր, որ և գրեալ է ի պատմութիւնս ֆռանկսաց» (31բ): Լրացուցիչ տեղեկութիւնների բացակայութիւնը դժվարացնում է պատասխանել այն հարցին, թե հատկապես ո՞ր սկզբնաղբյուրն ի նկատի ունի հեղինակը:

Աշխատությունը սկսվում է Սեֆյան շահ Սուլթան Հուսեյնի (1694–1722) իշխանության շրջանից և ավարտվում է Քերիմ խան Ջենդի իշխանության գալու պատմությամբ: Երկի ժամանակագրական վերջին եզրը 1754 թվականն է, ուստի վերնագրի «մինչև ցայսօր» նշումը հուշում է, որ աշխատության շարադրումն ավարտվել է 1750-ական թթ. կեսերին: Փաստորեն, 29 գլխից բաղկացած այս երկն ընդգրկում է շուրջ 60 տարվա պատմություն:

Աշխատության առաջին գլուխներում հեղինակը ներկայացնում է աֆղանների առաջնորդ Միր-Վեյսի գլխավորած հակաիրանական հուժկու ապստամբությունը, երբ Իրանում իշխում էր թուլամորթ շահ Սուլթան Հուսեյնը: Վերջինիս մասին Իրանում Ռուսաստանի դեսպան Ա. Վոլինսկին գրում է. «Դժվար է հավատալ, բայց այժմ այստեղի գլուխը այնպիսի մեկն է, որ ինքը ոչ թե հպատակների վրա է, այլ հպատակ է իր հպատակների մոտ և հազվադեպ կարելի է գտնել նման հիմարի ոչ միայն թագակիրների, այլ նույնիսկ հասարակ հպատակների մեջ: Այդ պատճառով ինքը ոչ մի գործի մեջ մտնել չի բարեհաճում և ամեն բանում վստահում է իր փոխանորդ էսթեմադե-դովլեին, որն ամեն տեսակ անասունից էլ հիմար է»<sup>27</sup>: Իր ձեռնարկած անվճռական քայլերով Սեֆյան շահին չհաջողվեց ճնշել աֆղանների ապստամբությունը: «Այնույնտեղ թագաւորն այլ ոչինչ համարելով՝ էլ ղօշուն (ղորք – Ա.Մ.) չաղարկեց, – գրում է հեղինակը: – Եւ աղուանն քանի տարի մնալով Ղանդահարն ձեռնումն՝ զօրութիւն ստացեալ մնայր վասն ապագայ դառնութեան Սպահանայ և Զուղայու» (26ա–26բ):

Սեֆյան դահակալի կրավորական պահվածքը, ի վերջո՞, հանգեցնում է այն բանին, որ Միր-Վեյսի մահից հետո (1717) նրա որդին և հաջորդը՝ Միր-Մահմուդը, այլևս վստահ իր

<sup>27</sup> Соловьев С., История России с древнейших времен, кн. IX, том 18, М., 1963, с. 367.

ուժերի վրա, 1722 թ. առաջնորդում է իր բանակը պարսկական քաղաքների վրա: Անգամ այդ ժամանակ, երբ, թվում է, անգործությունը հավասարազոր էր կործանման, շահ Սուլթան Հուսեինը հույս էր փայփայում, թե աֆղանները կբավարարվեն ընդամենը մեկ-երկու քաղաք թալանելով և կնահանջեն:

Սեփական երկրի անվտանգության հանդեպ ցուցաբերած հանցավոր անտարբերությունը բերում է նրան, որ սկզբնական շրջանում իրապես ավարառուական ու հետախուզական նպատակներ հետապնդող այդ ձեռնարկը վերածում է նվաճողական արշավանքի, և աֆղանները շուտով հայտնվում են մայրաքաղաք Սպահանի մատույցներում: 1722 թ. մարտի 8-ին տեղի ունեցած Գյուլյնաբադի ճակատամարտում, չնայած թվական գերակշռությանը, բարոյալքված պարսկական բանակը ծանր պարտություն է կրում և նահանջում է մայրաքաղաք<sup>28</sup>: «Բազումքն ի նոցանէ քաղաքին ժողովուրդքն էին,— գրում է հեղինակը,— որք զնացին ճակատեցան ընդ աղուանսն, ինքեանք կոտրվեցան, փախեան եկին մտան Սպահանայ քաղաքն և ճանապարհքն պնդեցին» (28բ):

Աֆղանները պաշարում են Սպահանը: «Շահ Սուլթան Հուսեին ակն ունէր, զի ի յերկրից իւրոց եկեսցէն օգնութիւն, բայց ոչ եկին» (30ա-բ),— շարունակում է հեղինակը: Շահը հատկապես մեծ հույսեր էր կապում որդու թահմասպի հետ, որը, սակայն, գործնականում ոչինչ չարեց պաշարված մայրաքաղաքին օգնության հասնելու համար: Սպահանի ութամսյա պաշարումը (1722 թ. մարտ — հոկտեմբեր) ավարտվում է շահ Սուլթան Հուսեինի խայտառակ անձնատուլությամբ: 1722 թ. հոկտեմբերի 23-ին շահն անձամբ է ներկայանում աֆղանների առաջնորդ Միր-Մահմուդին, սեփական ձեռքերով իր թագը դնում է նրա գլխին և հայտարարում. «Հրամայի՛ր երթ ի քաղաքն, զի Աստուած թագաւորութիւնն քեզ է տուեալ» (30բ):

<sup>28</sup> Lockhart L., The fall of the Safavi dynasty and the Afghan occupation of Persia, Cambridge, 1958, pp. 130-143.

Լատ իրանցի ժամանակակից պատմաբան Ռ. Շաբանիի «դա աննախադեպ իրողություն էր համաշխարհային պատմության մեջ»<sup>29</sup>:

Շահ Սուլթան Հուսեյնի որդին՝ Թահմասպը, որին հաջողվել էր աֆղանական զորքերի օղակը ճեղքելով հեռանալ Ղազվին և այնտեղ 1722 թ. նոյեմբերի 10-ին թագադրվել, «մի կերպ քարշ էր տալիս իր գոյութիւնը հիւսիսում, որպէս Սեֆիդներին վաղեմի փառքի անշուք խրտուիլակ»<sup>30</sup>: Աֆղանները նրան Ղազվինից քշում են Թավրիզ, այնտեղից էլ թուրքերը նրան ստիպում են հեռանալ դեպի Արդեբիլ, այնուհետև՝ դեպի Մազանդարան: 1724 թ. Ռուսաստանի ու Օսմանյան Թուրքիայի հետ պայմանագրեր կնքելուց հետո Թահմասպ II-ի իշխանության տակ է մնում Արդեբիլը, Սուլթանիեն և Ղազվինն ընդգրկող մի փոքր շրջան: Թեև նրա իշխանությունն ավելի շատ ձևական էր, այն տևում է շուրջ 10 տարի<sup>31</sup>:

1722–1729 թթ. ընթացքում իրանում փաստական իշխանությունը գտնվում էր աֆղան կառավարիչներ Միր-Մահմուդի (1722–1725) և Աշրաֆի (1725–1729) ձեռքում: Աշխատության 12–18-րդ դարերում հեղինակը ներկայացնում է իրանում տիրող ծանր իրավիճակը աֆղանական ռազմակալման շրջանում: Միր-Մահմուդն իր գահակալությունը սկսում է շահ Սուլթան Հուսեյնի որդիների և Սեֆյան ավագանու դատան կոտորածով: Երկի 13-րդ դարում ներկայացված է այդ արյունալի սպանդը: «Եւ Մահմուդն հրամայեաց, զի զորդիս շահ Սուլթան Հուսէյնին սպանցեն, – արձանագրում է հեղինակը, – որոյ ժԳ (13) որդիսն և զեղբայրն նորին զԱբաս Միրզէն սպանին: Եւ հրամանաւ թագաւորին շահին սպանեալ որդիքն և զեղբայրն տարան Ղում քաղաքումն թնջեցին» (32ա):

<sup>29</sup> Шабани Р., Краткая история Ирана, Санкт-Петербург, 2008, с. 206.

<sup>30</sup> Հովհաննիսյան Ա., Պետրոս դի Սարգիս Գիլանեց, Ս. Էջմիածին, 1916, էջ 15:

<sup>31</sup> Կոստիկյան Բ., Թահմասպ II-ի հայերին ուղղված հրովարտակները և 1730–1731 թթ. նրա արշավանքը դեպի Երևան, «Սերժավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXIII, Ե., 2004, էջ 356:

Շուտով Միր-Մահմուդի դաժանությունները սկսեցին տարածվել ոչ միայն պարսիկների, այլև հենց իր հայրենակիցների վրա: Թեև այս երկում ևս հեղինակը հետևում է աղբյուրներում լայնորեն տարածված՝ Միր-Մահմուդի «խելագարության» կամ «վրեժխնդրություն տանելու» մասին զրույցներին, սակայն, առավել հավանական է կարծել, որ նա զոհ է դարձել իր գործողություններից դժգոհ աֆղանական վերնախավի կազմակերպած դավադրությանը<sup>32</sup>: 1725 թ. ապրիլին Միր-Մահմուդը գլխատվել է իր հորեղբորորդու՝ Աշրաֆի կողմից: Այդ ժամանակ Սեֆյան պետությունը կործանողն ընդամենը 27 տարեկան էր<sup>33</sup>:

Միր-Մահմուդին հաջորդած Աշրաֆը իր նախորդից պակաս արյունարբու չէր: Նա առաջին հերթին ազատվում է աֆղան այն մեծամեծերից, որոնց պարտական էր գահի համար<sup>34</sup>: Սակայն, ինչպես ներկայացնում է հեղինակը, «այս Աշրաֆս յոյժ սիրեաց զղզլբաշի ժողովուրդն, և զղլբաշի շիայ ազգէն բազում այրք իւրն ծառայեցուց և իւր զօրաց բազումքն զզլբաշք էին, մինչ զի զիւր վէզիրն ևս զղլբաշ էր (ընդգծումը մերն է – Ա. Մ.)» (32ա): Այս տեղեկությունը կարիք ունի լրացուցիչ մեկնաբանություն:

Բանն այն է, որ նոր միայն մեկ միասնական ազգի կազմավորման գործընթացում գտնվող աֆղանները<sup>35</sup>, որոնց կառավարման միակ գեները մինչ այդ եղել էր սուրը, այժմ «հարկադրված» էին իշխել քաղաքակրթական մակարդակով իրենց բազմիցս գերազանցող իրանցիներին: Այդ պայմաններում Աշրաֆին այլ ելք չէր մնում, քան սիրաչափել նոր տերերին իրենց ծառայությունն առաջարկած հին սպասավորներին:

<sup>32</sup> Миклухо-Маклай Н., Из истории афганского владычества в Иране, «Ученые записки ЛГУ», Л., 1954, вып. 4, N 179, с. 146.

<sup>33</sup> Լեն, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, Ե., 1973, էջ 217:

<sup>34</sup> Иванов М., Очерк истории Ирана, М., 1952, с. 90.

<sup>35</sup> Рейснер И., К вопросу о складывании афганской нации, «Вопросы истории», 1949, N 7, с. 66-85.

Այստեղ ոչ պակաս կարևոր է Սեֆյան նախկին աստիճանավորների վարժունքի բացատրությունը: Տաք անկյան, մեղկ կյանքի և ծանր քսակի սովոր ստրկամիտ պաշտոնեուլթյան այդ տեսակը, որը եղել է, կա և կլինի բոլոր ժամանակներում և բոլոր վարչախմբերի օրոք, պատրաստ էր դլուխ տալ և խոնարհվել ո՛ւմ առջև ասես և ե՛րբ ասես, պարսիկ լիներ տերը, թե աֆղան՝ միևնույնն է: Պատահական է, որ Սեֆյան արքայատոհմի կողմնակից շեյխ Մուհամմեդ Ալի Հազրինը իր հուշերում խոր ատելուլթյամբ է խոսում ստրկամիտ այդ աստիճանավորների մասին<sup>36</sup>:

Այսպիսի ծանր վիճակում էր հայտնվել Իրանը, երբ պատմության թատերաբեմում հայտնվում է թուրքմենական աֆշար ցեղին պատկանող մի ռազմիկ՝ Նադիրը, որը շատ շուտով դառնալու էր Իրանի ազատագրական շարժման փաստացի ղեկավարը: Շահ Թահմասպ II-ի արքունիքում Ռուսաստանի ներկայացուցիչ Ս. Աբրամովի օրագրում նշված է անգամ այն օրը, երբ Նադիր-Ղուլին, — այդպես էր այն ժամանակ կոչվում խորասանցի մարտիկը, — իր ծառայուլթյուններն է առաջարկում աստանդական գահակալին: Այդ օրը 1726 թ. սեպտեմբերի 8-ն էր<sup>37</sup>: Թահմասպ II-ը նրան վերանվանում է Թահմասպ-Ղուլի խան<sup>38</sup>, այսինքն՝ Թահմասպի ստրուկ, ստրուկ, որը հետագայում ստրկացնելու էր շահին:

1729 թ. սեպտեմբերի վերջերին Մեհմանդուստ գետի հովտում և նույն թվականի նոյեմբերի 13-ին Սպահանից 60 կմ հեռու գտնվող Մուրչեխորթ գյուղի մոտ զլխովին ջախջախելով աֆղանական զորքերին, Նադիրը հաղթական մուտք գործեց Սպահան, որից անմիջապես հետո շահ Թահմասպ II-ը վերադարձավ մայրաքաղաք և բաղմեց հոր գահին<sup>39</sup>:

<sup>36</sup> Миклухо-Маклай Н., Из истории афганского владычества в Иране, с. 148.

<sup>37</sup> Миклухо-Маклай Н., «Записки» С. Аврамова об Иране как исторический источник, «Ученые записки ЛГУ», Л., 1952, вып. 3, N 128, с. 93.

<sup>38</sup> Там же.

<sup>39</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Ե., 1972, էջ 179:

Երկի 18–26-րդ գլուխներում ներկայացված է Նադիրի սրընթաց վերելքը և անփառունակ վախճանը, իսկ վերջին երեք գլուխներում խոսվում է նրա սպանությանը հաջորդած գահակալական արյունոտ պայքարի մասին, որն, ի վերջո, ավարտվեց Քերիմ խան Զենդի (1750–1779) հաղթանակով:

Այդ մասին ավելի հանգամանորեն կխոսենք ստորև: Իսկ այժմ ցանկանում ենք քննության առնել սույն աշխատության պատմագիտական նշանակությունը որպես Իրանի հարակից երկրների և ժողովուրդների XVIII դարի առաջին կեսի պատմության սկզբնաղբյուր:

Մեզ համար առանձնահատուկ կարևորություն են ներկայացնում «Յաղագս պատմութեանցն Պերսիու երկրին» երկի հայերին վերաբերող տեղեկությունները: Ընդհանուր առմամբ, աշխատության 29 գլուխներից հինգը նվիրված են հայերին, իսկ չորս գլուխներում կան առանձին տվյալներ հայության մասին: Այդ տեղեկությունների մի զգալի մասը, հասկանալի պատճառներով, վերաբերում է Նոր Զուղայի հայությանը: Հեղինակը մի շարք արժեքավոր տեղեկություններ է հաղորդում աֆղան Միր-Մահմուդի կողմից 1722 թ. Նոր Զուղայի գրավման մասին: Այստեղ չափազանց ուշագրավ է հեղինակի մեկնաբանությունը Սեֆյան իշխանությունների՝ այդ վաճառաչահ քաղաքը աֆղաններին զոհաբերելու միջոցով «փրկվելու» մտադրության մասին. «Դարձեալ զզլբաշն, որ Զուղու առաջնորդն և յիշեալ իշխանաց կանայքն տանում է քաղաքն՝ այս պատճառի, որ թէ աղուանն գայ Զուղայ գերի վարէ տանի, Զուղայու իշխանքն այլևս յետս դառցեն վասն կանանց իւրեանց, և ջուղեցոց գէնքն և երիվարքն, որ տանում է՝ այս պատճառի, որ հայքն կարողանան ոչ իւրեանց օգնելն. աղուանն միայն է և աղքատ, Զուղայ կու կողոպտէ, բաւական գանձս և ինչս ստանալով՝ յետ կու դառնայ, կու գնայ իւր երկիրն, բայց ոչ գիտէին յիմար ողորմելիքն, թէ իւրեանց զինչ պատահելոց էր» (29ա):

Հեղինակը երիցս իրավացի էր: Առհասարակ, Սպահանի պաշարման ընթացքում շահ Սուլթան Հուսեյնի պահվածքը կարելի է բնութագրել որպես քաղաքական անհեռատեսություն մի բացառիկ օրինակ: Ինչպես ցույց տվեց ժամանակը, Սեֆյան շահը չարաչար սխալվեց իր «հաշվարկներում», ինչի համար, ի վերջո, հատուցեց կյանքով (գլ. 14): Սուլյն աշխատությունը մի շարք մանրամասներ է ավելացնում աֆղանների կողմից Նոր Զուղայի գրավման մասին Պետրոս դի Սարգիս Գիլանենցի<sup>40</sup> և Խաչատուր Զուղայեցու<sup>41</sup> հաղորդած տեղեկություններին:

Մեծ արժեք է ներկայացնում հեղինակի տեղեկությունը Արցախի սղնախների և Շուշիի բերդի մասին: 1724 թ. հունիսի 12-ին Կ. Պոլսում կնքված ռուս-թուրքական ամոթալի պայմանագրից հետո հայկական զինված ուժերը շարունակել են պայքարը օսմանյան ռազմական մասնաճյուղի դեմ: Ավելին, Անդրկովկասում թուրքական ծավալապաշտություն առջև ծառայած ամենալուրջ խոչընդոտը հենց Արցախն ու Սյունիքն էին, որոնք այդ տարիներին ողջ տարածաշրջանում հայտնի էին պետականություն իմաստ պարունակող Հայոց սղնախներ անվանումով<sup>42</sup>: Խոսելով 1720-ական թթ. կեսերին թուրքական զորքերի դեմ Արցախի սղնախների մղած հերոսական պայքարի մասին, հեղինակը գրում է. «Դարձեալ օսմանցին կամենում է, որ հայոց ուզբաչէքն էլ իւրեան հնազանդեն, բայց ոչ հնազանդին, վասն այն պատճառի, որ Շուշոյ բերթն իւրեանց հետ է, մանաւանդ՝ իւրեանց տեղն էլ շատ պինդ տեղ այ: Որ և քանիցս անգամ բազում օսմանցուց ղօշուն է դնում, որ սոցա հախտահարի, բայց ողորմութեամբն Աստուծոյ կարողանում չեն: Բայց ընդդէմ նոցին բազում անգամ հայոց Ավան խանն բազում զօրովք:

<sup>40</sup> Պետրոս դի Սարգիս Գիլանենց, Ժամանակագրութիւն, «Կոունկ Յայոց աշխարհին», 1863, թիւ Բ, էջ 81-112, թիւ Գ, էջ 181-212:

<sup>41</sup> Խաչատուր Զուղայեցի, Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 225-237:

<sup>42</sup> Aivazian A., The Armenian Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal, Yerevan, 1997, pp. 84-85.

Հայոց օսմանցուն հետ կոպում է և միշտ յաղթում, որ և այսու գործովք օսմանլուն ձեռն է վեռման Հայոց սղնաղէն և երկիւղ է կրում: Այլևս ղօշունն չեն աղարկում ի վերայ նոցա, և Հայքն սղնաղու բոլորն մնում են աներկիւղ» (33ա):

Այդ թվականներին տարածաշրջանում ստեղծված իրավիճակը լավագույնս ներկայացրել են Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանն ու Արցախի մելիքները՝ 1723 թ. նոյեմբերի 1-ին Պետրոս I-ին հղած հայտնի նամակում. «Թագաւորն Պարսից յոյժ նուազեցաւ, և ոչ իսկ երևի, և իշխանութիւն օսմանցոյն տակաւին առ մեզ ոչ է հասեալ»<sup>43</sup>: Եվ հենց կենտրոնական իշխանության բացակայության այդ պայմաններում է, որ Հայոց սղնախները, որպես ռազմաքաղաքական միավորումներ, իրականացրել են իրենց երկրամասի կառավարումը և անվտանգության ապահովումը<sup>44</sup>:

Թանկարժեք այս վկայութիւննը, թուրք պատմագիր Իսմայիլ-Ասրմ էֆենդի Չելեբի-Չաղեի «Թարիխի Չելեբի-Չաղե» երկում առկա տեղեկության հետ մեկտեղ<sup>45</sup>, ամբողջացնում է օտար սկզբնաղբյուրների այն ցանկը, որոնք հաղորդում են 1720-ական թթ. Շուշի քաղաքի տեղում հայկական պաշտպանական ամրության գոյության մասին: Այդ տեղեկութիւնների լույսի ներքո անհեթեթ են դառնում ազրբեջանցի պատմաչինարարների պնդումները՝ 1750-ական թթ. սկզբին Փանահ խանի կողմից Շուշիի բերդի շինության մասին:

Հայերի մասին որոշ տեղեկութիւններ էլ ցրված են աշխատության վերջին գլուխներում: Դրանք վերաբերում են Նազիր շահի հրամանով ջուղայեցի մեծահարուստներ Հարություն Շահրիմանյանին և էմնիաղ Մինասյանին մահապատժի

<sup>43</sup> Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. II, Ереван, 1967, с. 48-49.

<sup>44</sup> Մաղալյան Ա., Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դդ., Ե., 2007, էջ 43:

<sup>45</sup> Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա. կազմեց Ա. Սաֆրաստյանը, Ե., 1961, էջ 159:

ենթարկելուն (գլ. 23), Նոր Շամախի քաղաքի շինությանը (նույն տեղում) և Նաղիրի հրամանով հայ վարդապետների իրականացրած Աստվածաշնչի պարսկերեն թարգմանությանը (գլ. 24):

Հայերին առնչվող վերջին տեղեկությունը վերաբերում է Քերիմ խան Ձենդի իշխանության շրջանին (գլ. 29): Ներկայացնելով նրա կողմից Սպահանի գրավումը, հեղինակը գրում է. «Քէրիմ խանն կրկին Սպահանայ քաղաքն տիրում է, և քաղաքին բոլոր ժողովրդացն բազում յոյս է տալիս, և քաղաքն լաւ պահում է, մանաւանդ ողորմելի ազգին հայոց խղջում է, որ և բոլոր Սպահանու ժողովուրդքն մնում են հանգիստ» (էջ 46բ): Թեև այս տեղեկությունները հիմնականում հայտնի էին նաև այլ սկզբնաղբյուրներից, սակայն սույն աշխատությունը ճշգրտում և մանրամասնում է այդ աղբյուրների տվյալները:

Ինչ վերաբերում է Հայաստանի տարածքում տեղի ունեցած թուրք-պարսկական պատերազմների նկարագրությունը, ապա, պետք է նկատել, որ այդ հատվածների պատմագիտական արժեքն առանձնապես մեծ է:

Սույն աշխատությունը հաղորդում է նաև Վրաստանի պատմությունն առնչվող որոշ տեղեկություններ, որոնք վերաբերում են Քարթլիի թագավորներ Գեորգի XI-ի (Գորգին խան, 1703–1709), Քայխոսրոյի (Քեյ Խոսրով, 1709–1711) և Վախթանգ VI-ի (1716–1724) գործունեությունը: Ինչպես հայտնի է, «իրանցիների կողմից վրաց թագավորները ճանաչված էին սոսկ որպես «կառավարիչներ» կամ «վալիներ» ու «խաներ»: Այդ արգելք չէր, որ վրաց նույն այդ իշխողները թագավորներ կոչվեին Վրաստանում և որպես այդպիսիներ նաև ճանաչվեին: վրաց միջնադարյան հանրություն կողմից»<sup>46</sup>:

XVIII դ. սկզբին Սեֆյան շահը, կիրառելով «մորիկյան» քաղաքականությունը, հենց Քարթլիի թագավորներին էր

<sup>46</sup> Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք I, Ե., 1957, էջ 159:

ուղարկում աֆղանների հակաիրանական ապստամբությունը ճնշելու համար: Այստեղ տեղին է հիշել Պետրոս դի Սարգիս Գիլանենցի՝ այդ առթիվ ասված մի արտահայտությունը. «Աղվանն վրացուցն շատ այ վախման, չուն որ էստի յառէչ վրացուն զօռն տեսել ան»<sup>47</sup>: Իրական ապստամբների դեմ ուղարկելով հետագա հնարավոր խռովարարներին, փաստորեն, Սեֆյան իշխանությունները հանդիսանում էին աֆղանա-վրացական չհայտարարված հակամարտության իրական հաղթող կողմը: Սուլյն երկի չորրորդ գլխում կան ուշագրավ տվյալներ աֆղանների առաջնորդ Միր-Վեյսի կողմից Գեորգի XI-ի սպանության ու Ղանդահարի պարսկական կայսրի ոչնչացման մասին, որն, ի դեպ, հիմնականում համալրված էր վրացիներով և վրացահայերով: Նույն գլխում կա տեղեկություն նաև 1711 թ. շահ Սուլթան Հուսեյնի կողմից աֆղանների դեմ ուղարկված հաջորդ պատժիչ զորախմբի անփառունակ վախճանի մասին, որը գլխավորում էր Քայխոսրոն:

Երկի 6-րդ և 16-րդ գլուխներում հեղինակը որոշ տվյալներ է հաղորդում Քարթլիի թագավոր Վախթանգ VI-ի մասին: Այսպես, 6-րդ գլխում ներկայացված է այն դրվագը, երբ Վախթանգը փաստացի պատանդի կարգավիճակով պահվում էր Իրանում, իսկ այդ ընթացքում Քարթլիում իշխում էր նրա որդին՝ Բաքարը (1717–1719): Սակայն, հեղինակը քրիստոնեական բարեմտությունը շրջանցել է այն փաստը, որ Վախթանգին միայն մահմեդականություն ընդունելուց հետո է թույլատրվել վերադառնալ հայրենիք (1719 թ.)<sup>48</sup>:

1724 թ. Անդրկովկասում ստեղծված ռազմաքաղաքական ծանր իրադրություն պայմաններում, Վախթանգ VI-ը հարկադրված թողել է Վրաստանը և ընտանիքով ու մեծ շքախմբով անցել է Ռուսաստան: Այդ իրողությունն իր արտացոլումն է

<sup>47</sup> Պետրոս դի Սարգիս Գիլանենց, Ժամանակագրութիւն, էջ 189:

<sup>48</sup> Бердзенишвили Н., Джавахишвили И., Джанашиа С., История Грузии, ч. I, Тбилиси, 1950, с. 392.

գտել 16-րդ գլխում, որտեղ կարդում ենք. «Վախտանկ խանն օգնութիւնն ոչ ումեքէ ունելով՝ ոչ կարողանայ պատերազմել ընդ օսմանցւոց, այլ փախստական ելեալ յերկրէ իւրմէ, և օսմանյուռն Թիլֆիզու բերթն տիրում է: Եւ Թիլֆիզու վալին, որ է Վախտանկ խանն, ընդանեօք իւրովք և երեք հարիւր արամբք գնում է Ռուստաց երկիրն: Եւ թագաւորն Ռուստաց բազում կերպիւ պատիւս ետ նմայ և ընդունեաց զնա և ընծայս բաշխեաց նմայ, և Վախտանկ խանն բնակեցաւ ի մէջ երկրին Ռուստաց՝ հանդերձ ընդանեօք և ծառայեօքն իւրովք» (32բ–33ա): Այս տվյալները կարող են օգտակար լինել Վրաստանի XVIII դարի առաջին քառորդի պատմութեան ուսումնասիրման համար:

Կարևոր նշանակութիւն ունի երկի 20-րդ գլուխը, որտեղ հեղինակը հանգամանորեն նկարագրում է Նադիր շահի հընդ-կական արշավանքը: Մողոլական Հնդկաստանի ամենազոր տիրակալներ Աքբարի և Շահ Զահանի անզոր հետնորդը՝ Մուհամմեդ շահը (1719–1748), ոչ միայն չկարողացավ քիչ թե շատ լուրջ դիմադրութիւն ցույց տալ Նադիր շահի բանակին, այլև, ինչպես գրում է պատմաբան Ղուլամ Հուսեյնը, «ճանապարհներն ու լեռնանցքները չէին պաշտպանւում, և ամեն ոք կարող էր [անարգել] անցնել դրանցով ցանկացած ուղղութեամբ՝ մնալով աննկատ: Տեղի ունեցող իրադարձութիւնների մասին ո՛չ մի հետախուզական տվյալ չէր հաղորդւում արքունիք, և ո՛չ փառիշահը, ո՛չ էլ վեզիրը երբևէ նույնիսկ չէին հարցնում, թե ինչու չեն ստացվում այդ տեղեկութիւնները»<sup>49</sup>: Այս խորապատկերում ամենևին էլ զարմանալի չէ, որ երբ Նադիր շահը 1739 թ. փետրվարի 24-ին տեղի ունեցած Կառնալի ճակատամարտում գրոհի էր առաջնորդում իր զինվորներին, Մուհամմեդ շահը զվարճանում էր հարեմում<sup>50</sup>:

<sup>49</sup> Синха Н., Банерджи А., История Индии, М., 1954, с. 278.

<sup>50</sup> Кишмишев С., Походы Надир-шаха в Герат, Кандагар, Индию и события в Персии после его смерти, Тифлис, 1889, с. 195, 198.

Տրամաբանական է նաև այս իրադարձությունների վերջաբանը. Կառնալի ճակատամարտում հնդկական բանակը ջախջախելուց հետո 1739 թ. մարտի 20-ին Նադիր շահը հաղթականորեն մտնում է Դելի: Կողոպտվում է Մեծ Մողոլների՝ շուրջ 700 միլիոն ռուպի արժողությունամբ հարստությունը<sup>51</sup>, այդ թվում և Մողոլ շահերի հպարտությունը հանդիսացող «Կոհ-ի-նուր» («Լույսի լեռ») հայտնի ադամանդը և «Սիրամարգի գահը»: Տիրանալով այդ երկրի անբավ հարստություններին, Նադիր շահը 1151 հ. թ. զի հեջլե ամսի (1739 թ. մարտի 12–ապրիլի 10) հրովարտակով Իրանի բնակիչներին երեք տարով ազատում է պետական հարկերի զգալի մասից<sup>52</sup>: Եվ մինչդեռ նա Մեծ Մողոլների անսահման հարստությամբ բռնավորված վերադառնում էր Իրան, Մուհամմեդ շահը օգնություն խնդրանքով իր արնաքամ եղող պետության տարբեր նահանգներն էր հղում աղերսազրեր հիշեցնող հրամանագրեր<sup>53</sup>: Սուլյն գլուխը էականորեն լրացնում և ամբողջացնում է հայ պատմագիր Քյուչուք Արուսթինի «Պատմություն Թահմազ Ղուլու» աշխատության<sup>54</sup> տեղեկությունները Նադիր շահի հնդկական արշավանքի մասին:

Երկի 28-րդ գլխում կա նաև մի ուշադրավ տվյալ Նադիր շահի սպանությունից հետո նրա գորավար Ահմեդ խանի (այդուհետև՝ Ահմեդ շահ Դուրրանի, 1747–1773) կողմից 1747 թ. աֆղանական պետականության հիմնադրման մասին: Թագադրությունից հետո Ահմեդ շահը իր բազալի ցեղը վերանվանեց «դուրրանի» («մարգարտյա») անունով, իսկ ինքը ստացավ «դուրր-ի դուրրան» («մարգարիտ մարգարիտների մեջ») տիտղոսը, որն, ինչպես նկատվել է իրավացիորեն, համարժեք էր ֆեոդալական եվրոպայում տարածված «առաջինը հավասար»

<sup>51</sup> Синха Н., Банерджи А., указ. соч., с. 279.

<sup>52</sup> Арунова М., Ашрафян К., Государство Надир-шаха Афшара, М., 1958, с. 87-93.

<sup>53</sup> Паниккар К., Очерк истории Индии, М., 1961, с. 258.

<sup>54</sup> Զյուլուք Արուսթին, Պատմություն Թահմազ Ղուլու, «Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու», N 1, 1941, էջ 101-128:

ների մեջ» Հայտնի բանաձևին<sup>55</sup>: Անկախության հռչակումից հետո Աֆղանստանը այլևս երբեք չմտավ Իրանի կազմի մեջ<sup>56</sup>: Թեև հեղինակի շարադրանքում առկա են որոշ անճշտություններ, բայց և այնպես, պետք է փաստել, որ աֆղանական պետությունը հիմնադրումը ևս չի վրիպել նրա տեսադաշտից:

Այս ամենից դատ, աշխատությունը զգալի տեղեկություններ է հաղորդում նաև ժամանակաշրջանի ռազմարվեստի, զորքի ու զինատեսակների, շահական արքունիքի նիստ ու կացի և վարք ու բարքի մասին: Այդ տվյալները կարող են օգտակար լինել ժամանակաշրջանի առօրեական պատմության ուսումնասիրման համար: Երկի մյուս կարևորագույն արժանիքն էլ այն է, որ հեղինակն անկողմնակալ է մնացել ողջ շարադրանքի ընթացքում: Թերևս, դա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ հոլանդացիները քաղաքական նպատակներ չէին հետապնդում Իրանում՝ հանդես գալով միայն որպես վաճառականներ:

Հարկ է նշել, որ սույն աշխատությունը գերծ է նաև փաստական որոշ սխալներից: Դրանց մեջ առաջին հերթին պետք է նշել Մուղանի կուռուլթայի (ավագանու ժողով) սխալ թվագրումը: Հանրահայտ է, որ Մուղանի դաշտում գումարված խորհրդաժողովը, որի ժամանակ Նադիրը տիրացել է Իրանի գահին, տեղի է ունեցել 1736 թ., մինչդեռ հեղինակն այն սխալմամբ թվագրում է 1740 թ.: Նադիր շահի հնդկական արշավանքի նկարագրության մեջ նշված ամսաթվերը շուրջ 10 օրով տարբերվում են դեպքերի իրական ժամանակագրությունից<sup>57</sup>:

Հեղինակը ոչինչ չի գրել Նադիր շահի՝ 1741–1743 թթ. դաղստանյան անհաջող արշավանքի և այնտեղ նրա կրած

<sup>55</sup> Рейснер И., Развитие феодализма и образование государства у афганцев, М., 1954, с. 331.

<sup>56</sup> Иванов М., указ. соч., с. 106.

<sup>57</sup> Նադիր շահի հնդկական արշավանքի ճշգրիտ ժամանակագրությունը տե՛ս Мухаммад-Казим, Поход Надир-шаха в Индию, М., 1961, с. 24-28.

ծանր պարտությունները մասին: Խիստ մակերեսային է ներկայացված 1743–1746 թթ. թուրք-պարսկական պատերազմը: Այս ամենին կարող ենք ավելացնել նաև որոշ իրադարձությունների ոչ ճիշտ և պարզունակ մեկնաբանությունները: Սակայն, նկատված անճշտությունները հեշտությամբ ուղղելի են այլ սկզբնաղբյուրներով և որևէ կերպ չեն նսեմացնում սույն աշխատության պատմագիտական արժեքը:

Ինչ վերաբերում է «Յաղագս պատմութեանցն Պերսիու երկրին» աշխատության գրական առանձնահատկություններին, ապա պետք է նշել, որ երկի լեզուն չոր է և աչքի չի ընկնում գեղարվեստական արժանիքներով:

Նշենք, որ սույն երկը կարևոր սկզբնաղբյուր է ոչ միայն Իրանի, այլև Հայաստանի, Վրաստանի, Օսմանյան Թուրքիայի, Մողոլական Հնդկաստանի և Դուրրանիական Աֆղանստանի XVIII դարի պատմության համար: Իր հաղորդած հարուստ և բազմազան տեղեկություններով «Յաղագս պատմութեանցն Պերսիու երկրին» աշխատությունը, իրավամբ, կարող է համարվել Իրանի և հարակից երկրների XVIII դարի առաջին կեսի պատմության համառոտ հանրագիտարան:

\* \* \*

Իրանի Նազիր շահի կենսագրությունը դեռևս նրա կենդանության օրոք վիպական կերպարանք էր ստացել: Եվրոպական լեզուներով գրվում և հրատարակվում էին նրա համառոտ և ընդարձակ կենսագրականները, որոնցում ներկայացվում էր թուրքմենական աֆշար ցեղից սերված այս շարքային ռազմիկի սրընթաց վերելքը դեպի Սեֆյանների գահը:

Այս թաղիքագործի որդին, որն իր ընտանիքի ապրուստը վաստակում էր վառելափայտի վաճառքով, իր հայրենի Խորասանում գլխավորել էր ապստամբությունը աֆղանական տիրապետության դեմ: 1726 թ. ծառայություն էր անցել շահ

Թահմասպ II-ի (1722–1732) մոտ, իսկ 1729–1731 թթ. Հաղթել էր Իրանի մի շարք շրջանները զավթած աֆղաններին ու թուրքերին: Այդ Հաղթանակները մեծ ժողովրդականություն են բերում Նադիրին: «Շահ Թահմասպ II-ի պարտությունները թուրքական զորքերից և նրա դեմ ծագած դժգոհությունները Հարմար առիթ են ընձեռում Նադիր խանին նրան գահընկեց անելու Համար, որից հետո Նադիրը գահ է բարձրացնում Թահմասպի Ծամայա որդուն՝ Աբբաս III-ին (1732–1736)՝ վերջինիս առնելով իր խնամակալություն տակ: Սակայն, խնամակալի դերը ևս չի գոհացնում Նադիրին և նա ինքն է գահ բարձրանում 1736 թ. մարտի 8-ին»<sup>58</sup>: Այսպիսի կյանքի ճանապարհ անցած Նադիրը փնտրված կերպար էր հերոսական պատմությունների սիրահար Եվրոպայի Համար:

Նադիր շահի եվրոպական վարքադրություններում շատ հաճախ էին միախառնվում իրականն ու առասպելականը: Այդ կապակցությունը Հայ նշանավոր պատմաբան Լեոն նկատում է. «Եվրոպայում տեսակ-տեսակ պատմություններ էին շրջում Նադիրի ծագման մասին: Ոմանք ասում էին, թե նա շվեյցարացի է, ոմանք՝ հոլանդացի, ոմանք՝ անգլիացի, ոմանք՝ ֆրանսիացի: Նույնիսկ հավատացնում էին, թե նա ծնվել է Բրաբանտ նահանգում, ուր, իբր թե, ապրում էր նրա քույրը՝ իր երկու երեխաներով: Կար և մի պատմություն, որ հավատացնում էր, թե նա, ընդհակառակն, կովկասյան լեռնաբնակներից է և ծնվել է Դերբենդի մոտ: Միաժամանակ ասողներ էլ կային, թե նա զտարյուն պարսիկ է, սերված մի շատ հուշակված տոհմից»<sup>59</sup>: Նադիրի անվան շուրջ հյուսվող նմանատիպ պատմությունները դեռևս այն ժամանակ գրիչ վերցնելու են մղում : առավել մոտիկից իրականությունը քաջատեղյակ անձանց:

<sup>58</sup> Կոստիկյան Ք., Թահմասպ II-ի հայերին ուղղված հրովարտակները և 1730–1731 թթ. նրա արշավանքը դեպի Երևան, էջ 363:

<sup>59</sup> Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, էջ 220:

Հենց այդպես է բացատրում իր աշխատության ծնունդը Վասիլի Բրատիչչևը, որը 1736-1745 թթ. գտնվում էր Իրանում՝ սկզբում որպես թարգմանիչ, իսկ հետագայում որպես Ռուսաստանի կառավարութայան ռեզիդենտ<sup>60</sup>: «Ես ինքնին գոյով անդ և լինելով ի բնիկ յերկիրն Պարսից,— գրում է նա,— և ունելով զբաւական յարմար և զդիպուկ ժամանակս իմանալ հաւաստի յաղագս կացութեանց և որպիսութեանցն տեղոյն յայնորիկ, վասն որոյ ոչ կամեցայ լռել, այլ պարտականութիւն համարեցի ինձ ծառայել հասարակութեան... քանզի ի բազմաժամանակեայ լինելութեան իմում ի յերկրին Իրանայ, նաևս առաւել գոյով իմ դրունսն արքունական Նադիր շահին աստիճանաւ Ռուստաց կայսերական դեսպանութեան, նաևս ոչ սակաւ, այլ ըստ չափու և կարողութեան իմոյ գիտելոյս զլեզուս պարսից ունէի բարեգոյն և վայելուչ հնարս պատկանաւոր ձեռամբ զանազան հաւատարմաց սակս զստուգութեան յայնպիսի անցիցն անցելոց զհաւաստի որպիսութիւնսն ստանալ և հաստատել ի նոսա, նաևս յաղագս բազմաց ակննատես ես իսկ լեալ» (48բ–49ա): Այդ է պատճառը, որ չնայած փոքր ծավալին Վ. Բրատիչչևի աշխատությունը առ այսօր չի կորցրել իր նշանակությունը, և կարևոր սկզբնաղբյուր է Նադիր շահի կյանքի ու գործունեության ուսումնասիրման համար:

Վ. Բրատիչչևի աշխատությունը սկսվում է 1738 թ. իրադարձությունների ներկայացմամբ, երբ Նադիր շահը շուրջ մեկ տարի տեւած պաշարումից հետո գրավել էր Աֆղանստանի Ղանդահար քաղաքը և արշավանքի դուրս եկել դեպի Հընդեկաստան: Այդ ժամանակ, ապահովագրելով իրեն զանազան անախորժություններից, Նադիր շահը Իրանի փոխարքա է նշանակում իր ավագ որդի Ռզա-Ղուլի Միրզային<sup>61</sup>: Վերջինս

<sup>60</sup> Энциклопедический словарь, изд. Ф. Брокгауз, И. Ефрон, т. IV<sup>А</sup>, СПб., 1891, с. 603; Тер-Мкртчян Л., Армения под властью Надир-шаха, М., 1963, с. 13.

<sup>61</sup> Мухаммад-Казим, указ. соч., с. 70.

իր պաշտոնավարումը սկսում է Սեֆյան շահ Թահմասպ II-ի և նրա մանկահասակ որդիների դատան սպանությունը:

Եվ մինչդեռ Նադիր շահը առաջնորդում էր իր բանակը դեպի քաղաքական ճգնաժամի մեջ գտնվող Հնդկաստան, Իրանում մի խումբ դավադիրներ՝ արքայազն Ռզա-Ղուլի Միրզայի գլխավորությամբ, իշխանությունը խլելու նպատակով մահափորձ են կազմակերպում նրա դեմ: Արքայազնից բացի դավադրողները մասնակցում էին նաև նրա քեռին՝ սարդար Լոթֆալի խանը, հազարապետ Մահմեդ բեկը և մի վարձու մարդասպան, որի անունը Վ. Բրատիչչևը չի հաղորդում: Սակայն, 1741 թ. մայիսի սկզբին տեղի ունեցած մահափորձը ձախողվում է. կրծքին դրած ձեռքը փրկում է շահին անխուսափելի մահից: Այդ ընթացքում շահը հասցնում է տեսնել իր վրա կրակողի դեմքը: Նրա հրամանով պատկերահանները նկարում են վարձու մարդասպանի դիմանկարը, որը տարածվում է երկրով մեկ: Հենց այդ պահից էլ երկում սկսվում է իրադարձությունների սրընթաց զարգացումը:

Այստեղ հեղինակը վարպետորեն ներկայացնում է շահական արքունիքի՝ խարդավանքներով լի բարքերը: Պալատականներից ոմանք, օգտագործելով պատեհ առիթը, շահի առջև ամբաստանում են միմյանց՝ փորձելով նրա ձեռքով վրեժ լուծել իրենց հակառակորդներից: Սակայն, Նադիր շահը «հասու եղեալ ստույգանց մատնչացն՝ արձակեաց զնոսա թարց պատժոց, ոչ ևս ընդունելով զայնպիսի զրպարտությունք» (57բ):

Այդ դեպքից հետո լեզգիների կողմից 1738 թ. սպանված եղբոր՝ Իբրահիմ խանի վրեժը լուծելու նպատակով 1741 թ. Նադիր շահը 100 հազարանոց բանակով արշավում է Դաղըմստան, որտեղ կրում է իր կյանքի ամենածանր պարտությունը<sup>62</sup>:

<sup>62</sup> Սանրամասն տե՛ս Магомедов Р., Разгром войск персидского завоевателя Надир-шаха в горах Дагестана, Махачкала, 1940; Гаджиев В., Разгром Надир-шаха в Дагестане, Махачкала, 1996; Сотавов Н., Крах «Грозы Вселенной», Махачкала, 2000; Алиев Б., Борьба народов Дагестана против иноземных завоевателей, Махачкала, 2002, с. 246-399.

«Աստանօր տիրապետ և յաղթօղն հզօր Նատիրն այնքան խոնարհեցաւ, — գրում է Հանվելը, — մինչ զի քսան հազար խորտակեալ զօրօք միայն մնաց»<sup>63</sup>:

Հենց այդ ծանր պարտությունից հետո էլ Նադիրի մոտ են բերում Բուխարայում բռնված վարձու մարդասպանին, որը, շահի հրամանով կուրացվելուց հետո, նրան պատմում է ողջ ճշմարտությունը դավադիրների մտադրության մասին: Շահը շուրջ վեց ամիս լռություն պահպանելուց հետո 1742 թ. ամռանը հրամայում է զորքի առջև խեղդամահ անել հազարապետ Մահմեդ բեկին: Վերջինիս իրեն զթալու խնդրանքին Նադիրը պատասխանում է. «Յայնժամ ողորմիցէի զքեզ, եթէ մեք զՌզա-Ղուլի Միրզին ևս խնայիցէաք» (60ա):

Այնուհետև շահը Դերբենդի մոտ գտնվող իր բանակատեղին է կանչում արքայազն Ռզա-Ղուլի Միրզային: Այնտեղ էլ 1742 թ. հոկտեմբերի վերջին Նադիր շահի հրամանով Ռզա-Ղուլի Միրզան կուրացվում է<sup>64</sup>: Այս փաստի հիշատակումով էլ Վ. Բրատիչչևի աշխատությունն ավարտվում է:

Այս իրադարձությունը, որն ընկած էր Վ. Բրատիչչևի երկի հիմքում, ճակատագրական նշանակություն ունեցավ ոչ միայն կուրացվողի, այլև կուրացնողի համար: Այդ դեպքից հետո Նադիր շահի աստղը միանգամից խամրեց: Փաստորեն, Վ. Բրատիչչևի աշխատությունը Նադիր շահի անձնական ողբերգության պատմությունն է, անձնական ողբերգություն, որը վերածնց պետական դժբախտության:

Այդուհետև Նադիր շահի մղած պատերազմները, լավագույն դեպքում, ավարտվում էին անարդյունք: Իրանը թուրքաֆղանական ռազմակալումից ազատագրած ժողովրդական հերոսը վերածվել էր նենգ ու կասկածամիտ մի բռնակալի, որն

<sup>63</sup> Պանոև, նշվ. աշխ., էջ 147:

<sup>64</sup> Տե՛ս նաև Бутков П., Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 год, ч. I, СПб., 1869, с. 217-218.

իր մոտից «գրեթէ երբէք անվնաս ոչ թողոյր զոք գնալ»<sup>65</sup>: Մանր հարկապահանջությունը, որը հատկապես սաստկացել էր Նադիր շահի կառավարման վերջին տարիներին, լիակատար քայքայման էր հասցրել երկրի տնտեսությունը: Ժողովրդական ապստամբությունները ցնցում էին Նադիր շահի պետութ-  
յան խարխլված հիմքերը<sup>66</sup>: Այսպիսի վիճակում էր հայտնվել Իրանը, երբ 1747 թ. հունիսի 20-ին Նադիր շահը դավադրաբար սպանվեց Խորասանի մոտ գտնվող ռազմաճամբարի իր վրա-  
նում, իր թիկնազորի պետ Սալեհ բեկի ձեռքով:

Նադիր շահի սպանությունից հետո գահ բարձրացավ նրա եղբորորդին՝ Ադիլ շահը (1747–1748), «արդարադատ» հոր-  
ջորջված անարդար մի կառավարիչ, որի միակ հիշարժան գոր-  
ծը եղավ Նադիրի սերնդի ոչնչացումը: Հոր կողմից կուրաց-  
ված Ռզա-Ղուլի Միրզան Նադիրի մահից շատ չանցած իր 13  
որդիների հետ Քելաթում սպանվեց հորեղբորորդու կողմից:  
Նույն ճակատագրին արժանացավ նաև Նադիրի մյուս որդին՝  
Նասերոլլահ Միրզան, որը սպանվեց Մեշհեդում: Շուտով եղ-  
բոր՝ Իբրահիմ խանի կողմից սպանվեց նաև Ադիլ շահը: Այս-  
պիսով, Նադիր շահի ստեղծած լայնածավալ պետությունը  
արագորեն մասնատվեց, իսկ Իրանը սուղվեց գահակալական  
պայքարի հորձանուտը:

Ավելի քան երկուս ու կես դար է անցել Նադիր շահի իշ-  
խանության տարիներին. այդ ընթացքում նրա մասին գրվել  
են բազմաթիվ աշխատություններ, սակայն Նադիրին նվիրված  
մեծաքանակ գրականության առկայության պայմաններում էլ  
Վ. Բրատիշչևեի փոքրածավալ երկը մնում է լավագույններից  
մեկը «երկրորդ Ալեքսանդր» հորջորջված Նադիր շահի բարդ  
ու հակասական կերպարի ներկայացման տեսանկյունից:

<sup>65</sup> Չամչյանց Ս., Հայոց պատմություն, հ. 9, Ե., 1984, էջ 815:

<sup>66</sup> Ашрафян К., Антифеодальные движения в империи Надир-шаха (1736-1747), «Ученые записки Института востоковедения», т. VIII, М., 1953, с. 166-204.

Հրապարակելով սույն աշխատությունների հայերեն թարգմանությունները՝ փակագծերում նշել ենք ձեռագրի էջահամարները, բացել ենք հապավումները, իսկ բաց թողնված տառերը լրացրել ուղղանկյուն փակագծերի մեջ, ինչպես նաև անտեսել ենք «ի» նախդիրից առաջ դրված ապաթարցները և կետադրությունը սրբագրել ըստ արդի հայերենի կանոնների: Անտեսել ենք նաև թարգմանչի կողմից երբեմն բառամիջում անհարկի օգտագործվող «ը» տառը:

Զփոխելով թարգմանությունների ուղղագրությունը, տառասխալները նշել ենք սովորականից տարբերվող տառատեսակով: Որոշ դեպքերում, ընթերցողների շահերից ելնելով, միջամտել ենք նաև թարգմանչի պարբերաբաժանմանը՝ մեծ պարբերությունները տրոհելով ավելի մանր հատվածների:

Գահակալների իշխանության տարեթվերը նշելիս հիմնականում օգտվել ենք Ս. Լեն-Պուլի և Ք. Բոսվորտի հայտնի աշխատություններից<sup>67</sup>: Բնագրերում ընդգծված վարչական, հարկային և սոցիալական տերմինների բացատրությունը տրված է գրքի վերջում զետեղված բառարանում: Իսկ օտար և բարբառային բառերի բացատրությունը տրված է տողատակում՝ աստղանիշ ծանոթագրություններով:

Հուսով ենք, որ սույն գրքի հրատարակումը կնպաստի Իրանի մեծագույն տիրակալներից մեկի կյանքի և գործունեության ուսումնասիրմանը Հայաստանում:

**ԱՐՏԱԿ ՄԱՂԱԼՅԱՆ**

<sup>67</sup> Лэн-Пуль С., Мусульманские династии, СПб., 1899; Босворт К., Мусульманские династии, М., 1971.

**ՅԱՂԱԳՍ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑՆ  
ՊԵՐՍՈՒ ԵՐԿՐԻՆ  
ՍԿՍԵԱԼ ՇԱՀ ՍՈՒԼԹԱՆ ՀՈՒՍԷՒՆԻՑՆ  
ՄԻՆԶԵՒ ՑԱՅՍՕՐ**

**Թարգմանեցեալ ի Յօլանդիզի կազէթից  
եւ լսողութեամբ գրեցեալ համառօտիւ**



(25ա) ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ  
ՎԱՍՆ ՂԱՆԴԱՀԱՐԱՅ ԲԵՐԹԻՆ ՈՐՊԻՍՈՒԹԵԱՆ

Թիւն Փրկչին 1690, ի թագաւորութեան շահ Սուլթան Հուսէյնին<sup>68</sup>, Ղանդահարայ բերթին խանն, որ է Միրվէխան՝ ապստամբեալ դօնմիշ է ելէլ<sup>\*</sup> և բերթն զաֆտել այ: Յետ այնորիկ զզլբաշի թագաւորն քանի տարի բազում անգամ ղօշուն<sup>\*\*</sup> և սարասկար է աղարկում, որ գնում են Ղանդահար, Միրվէխանն հետ կռիւ են անում: Միրվէխան զզլբաշի ղօշունին կոտորում է և ամենայն ինչքն և զէնքն զաֆտում է և զօրութիւն է ըստաման, մինչև թիւն 1695 շահ Սուլթան Հուսէյնին հրամայում է Վրաստանայ վալի Գօրգին խանին<sup>69</sup>, որ Վրաստանայ վրացիք և փոքր ինչ զզլբաշի ղօրօք ի միասին Ծ (50) հազարօք գնում է Ղանդահար:

Միրվէխան բազում աղուանի ղօրօք գալիս է, միմեանց հետ կռվում էն, աղվանն կոտորվում է, և Գօրգին խանն Միրվէխանին բռնում է և բազում աղուան է կոտորում և բերթն զաֆտում է: Յետ այնորիկ Միրվէխանին կենդանի աղարկում է Սպահան շահին ղուլուղն<sup>\*\*\*</sup>, և շահին գրում է. «Ահա՛ թշնամիդ քո կենդանի ուղարկեցի ղուլուղ, որպէս հաջոյ լիցի տէրութեանդ, ընդ նմին այնպէս դատիցես և արասցես», և այլն:

<sup>68</sup> Այստեղ հեղինակը սխալվում է: Շահ Սուլթան Յուսէյնը թագավորել է 1694–1722 թթ.: Այդ ժամանակ Իրանում իշխում էր Սուլեյման շահը (1666–1694):

<sup>\*</sup> Դօնմիշ լինել – երես դարձնել, դավաճանել:

<sup>\*\*</sup> Ղօշուն – զորք:

<sup>69</sup> Խոսքը Քարթլիի թագավոր Գեորգի XI-ի (Գորգին խան, 1703–1709) մասին է: Եկարագրվող դեպքերը տեղի են ունեցել 1703թ.: Աֆղանների ապստամբութեան առաջին փուլի ճնշումից հետո Գորգին խանը շահ Սուլթան Յուսէյնի կողմից նշանակվել է Ղանդահարի կառավարիչ:

<sup>\*\*\*</sup> Ղուլուղ – ծառա, ծառայություն:

**ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ**  
**ՎԱՍՆ ԳԱԼՍՏԵԱՆ ՄԻՐՎԷԻՍԻՆ**  
**Ի ՔԱՂԱՔՆ ՍՊԱՀԱՆ ԱՌԹԱԳԱԻՈՐԴ**

Նոյն Միրվէէիս խանն Ղանդահարայ վեր է կենում, որ գայ Սպահան, խորամանկուլթեամբ խորհրդով բազում ընծայ է պատրաստում, իւր հետ բերում է Սպահան: Քանի ամիս անդ մնում է, թագաւորին խորհրդակցացն և ներքինեացն և որք սպասաւորք են առաջի թագաւորին բազում ընծայ է պարզեւում, որ առ թագաւորն վասն ինքեան բարեխօս լիցեն, և նոքայ (25բ) վասն սմայ թագաւորի մօտ բարիս են խօսում՝ ասելով, թէ՛ Միրվէէիսն լաւ մարդ է և ձերն է, և խնդրում է ողորմուլթիւն ի թագաւորէ մերմէ, զի կամի հրամանաւ թագաւորիդ գնալ հաջն և գալ, և վասն թագաւորին աղաչել զԱստուած, որ թագաւորին յերկար կեանս պարգևեսցէ: Եւ Շահ Սուլթան Հուսէի թագաւորս այս ողորմած գոլով՝ արձակում է, որ հրամանաւ թագաւորին Միրվէէիս խանն գնայ հաջն՝ այսու պայմանաւ, որ այլև յետ գայցէ:

**ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ**  
**ՎԱՍՆ ԳՆԱԼՈՅՆ ՄԻՐՎԷԻՍԻՆ ՀԱԶՆ**  
**ԵՒ ԱՆԴԻ ՅԵՏ ԳԱԼՆ**

Վերոյ Միրվէէիս խանն հրամանաւ շահին գնաց հաջն<sup>70</sup>, զիարաթ՝ արար և դարձեալ յետ եկաւ Սպահան: Նախարարքն շահին արգ արարին՝՝ զգալուստ նորին և բազում գովասանու-

<sup>70</sup> Միր-Վեյսի ուխտագնացությունը դեպի Սեքքա տեղի է ունեցել 1708 թ.: Սեքքայում նա կապ է հաստատել օսմանյան իշխանությունների հետ և սուլունի բարձրագույն հոգևորականությունից ստացել ֆեթվա, որով աֆղաններին կոչ էր արվում պայքար սկսել Սեֆյան իրանի դեմ (տե՛ս Рейснер И., Падение державы Сефевидов и нашествие афганцев на Иран (1722–1729 гг.), «Доклады и сообщения исторического факультета МГУ», кн. 10, М., 1950, с. 73-74):

՝ Ձիարաթ – ուխտագնացություն:

՝՝ Արգ անել – տեղեկացնել, զեկուցել:

Թիւնք ի Միրվէլիսէն ասացին առաջի շահին՝ այնչափ, մինչ զի շահն ողորմած գոլով՝ սորայ մեղքն բաշխեաց: Եւ Միրվէլիսն խորհուրդ արարեալ՝ բազում ընծայս մատոյց թագաւորին և նախարարացն, և խնդրեաց ի նոցանէ, որ շահիցն ողորմութիւն խնդրեն, որ իւրն թողեալ գնասցէ Ղանդաճար, մին մէջիդու մասի ըստ ծերութեան իւրոյ, աղօթք առ ի շահին յերկար կեանս խնդրիցէ և շահին դօլվաթիցն իւր ընդանեաց մօտ մին պատառ հաց ուտիցէ: Որ և այսու խնդրանօքս դարձեալ նախարարքն նոյն քանիցս անգամ ևս դովասանութիւն և ծերութիւն Միրվէլիսին արզ արարին շահին՝ ասելով, թէ՝ Միրվէլիսն մեծի թագաւորէդ մերմէ ողորմութիւն է խնդրում, որ հրամայեալ արձակիցես, զի գնասցէ:

Վասն աղաչանաց սորայ և բարեխօսութեամբ նախարարացն շահն հրաման է գրում և տալիս էն Միրվէլիսին և արձակում ան, որ գնայ Ղանդաճար՝ տեղն Գօրգին խանին հետ միախորհուրդ զերկիրն զայն կառավարիցեն: Միրվէլիսն թագաւորական նամակն հետ ինքեան գնում է ի քաղաքն Ղանդաճար, զի որպէս պատուիրեալ է, այնպէս արասցէ:

**ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ**  
**ՎԱՍՆ ՄԻՐՎԷԼԻՍԻՆ ՂԱՆԴԱՋԱՐ ԳՆԱԼՆ,**  
**ԹԷ ՈՐՊԷՍ ԵՂԵԻ**

(26ա) Յիշեցեալ Միրվէլիս խանն Սպահանայ գնաց Ղանդաճար՝ հանդերձ շահին տված գրովն: Յետ այսր ամենայնի Միրվէլիսն խորամանկութեամբ բազում սէր, խոնար[հ]ութիւն և քաղցրութիւնն ցոյց ետ Գօրգին խանին, մինչև Գօրգին խանն սորայ հաւատաց: Յետ այսօրիկ մին տարի այսպէս, ըստ իւրում խորհրդոյ, ժամանակ անցոյց՝ մինչև Գօրգին խանն ի սմանէ աներկիւղ մնաց:

Այլ Միրվէլիսն ի ծածուկ զօրս պատրաստեաց աղվան ազգից ի գեղօրէից լեռանակողմանց, և սպասէր միշտ գտանել

զժամանակ: Եւ յետ այսորիկ թշնամիք գոյին Գորգին խանին հեռու ի նմանէ երկու աւուր ճանապարհ, վասն որոյ զգօրս իւր ամենայն առաքեաց հեռագոյն քան զինքենէ երկու կամ երեք աւուր ճանապարհ՝ կոտորել զնոյն թշնամիսն: Եւ Գորգին խանն ինքն երկու հարիւր արամբք զնացեալ և նստեալ ի այգոյ միում և սկսաւ գինի ըմբել և ուրախութիւնն առնել, և ի բազում արբեցմանէն անզգայ եղեալ, վասն որոյ զնացեալ ոմանք իմացուցին աղուան Միրվէխսին, թէ՛ Գորգին խանն այգումն արբեալ է և ոչ գոյն բազմութիւնք ընդ նմին, այլ զօրս իւր ոչ է ի քաղաքոջա՝ ահա՛, ժամանակ է, որպէս կամիս արայ ընդ նմին: Եւ Միրվէխսն ԲԻ (2000) արամբք զնացեալ է այգին և պաշարեալ զչորեսին կողմսն, և պատերազմեալ ընդ երկու հարիւր արս նորին և յաղթեալ զնոսա, և սպանեալ զԳորգին խանն՝ հանդերձ արամբքն իւրովք<sup>71</sup>, և բերթն տիրեալ՝ պնդում են:

Եւ վրացու զօրքն, որ դաշտումն են լինում, եկեալ՝ տեսանեն, զի Գորգին խանն սպանեալ են և բերդն տիրեալ և պընդեալ են: Վրացին և զզլբաշն յետ ան դառնում, աղուանի զօրքն յետնէն զնում է, կռիւ են անում, աղուանն այլևս կոտորվում է: Ղզլբաշի զօրքն զնում է Մաշաղ[է]ն Սպահան՝ շահին յիմացում են տալման: Շահն էլ կրկին խօստորով խանն<sup>72</sup> բազում զօրօք և մեծ պատրաստութեամբ աղարկում է, զնում են: Աղուանի ղօշունն էլ գալիս է, ավդալի ղօշունով միաբան, ի միասին Հարաթայ բերթին մօտ կռվում ան՝ զզլբաշի զօրքն կոտորման է, որն փախնում են, որն կոտորման է. աղուանն Հարաթայ բերթն զաֆտում է:

<sup>71</sup> Միր-Վեսյի կողմից Գորգին խանի (Գեորգի XI) սպանությունը և Ղանդահարի պարսկական կայազորի ոչնչացումը տեղի է ունեցել 1709 թ.: Աֆղանների առաջնորդ Միր-Վեսյը վախճանվել է 1717 թ.:

<sup>72</sup> Խոսքը Քարթլիի թագավոր Քայխուրոյի (1709–1711) մասին է, որը ևս 1711 թ. սպանվել է աֆղանների դեմ մղված կռվում (տե՛ս Бердзенишвили Н., Джавахишвили И., Джанашиа С., указ. соч., с. 391):

Յետ այնորիկ քանի տարի էլ որ զզլբաշի թագաւորն զօրք է ողորկում՝ կոտորվում են: Այնուչետե թագաւորն այլ ոչինչ համարելով՝ (26բ) էլ զօշունն չաղարկեց: Եւ պղուանն քանի տարի մնալով Ղանդահարն ձեռնուամն՝ զօրութիւն ստացեալ մնայր վասն ապագայ դառնութեան Սպահանայ և Ջուղայու:

**ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ  
ԽՈՐՀՈՒՐԴՆ ՖԱԹԱԼԻ ԽԱՆԻՆ,  
ՈՐ ԿԱՄԵՐ ԹԱԳԱՒՈՐ ԼԻՆԵԼ**

Թագաւորն շահ Սուլթան Հուսէին էր բարի և խղճաբարու և ողորմած, բայց ոչ ունէր զկառաւարութիւն զորպիսութիւնն երկրին իւրոյ վերահասու լինելոյ, վասն որոյ նախարարք սորայ փորձ առեալ էին և տեսանելով զանկառավարութիւնն՝ միշտ կային աներկիւղ<sup>73</sup>: Եւ զզլբաշի երկրին գէղօրէքն բազում մասն թագաւորն տուեալ էր խանէրին և ներքինեացն իւրոց, և հարկս, զորս պարտէին տալ թագաւորին, տային նախարարացն և ներքինեացն, որ և այսպէս լինելով երկրին խազինէն բոլորն նոքայ ին տիրում, և ոչինչ մտանէր ի գանձարանս արքունի: Եւ ռոճիկ ունեցողք ծառայքն իւրաքանչիւր ոք սկսան արուեստիւ իմեք զանձն իւր պահել, և ի լրանալ տարոյն երթային ծառայքն, խնդրէին զռոճիկս իւրեանց, և տային նոցա իւրաքանչիւր չափոյ ռոճիկի իւրեանց երկու, ոմանց՝ երեք թումանի գիր, զի երթիցեն ի հեռագոյն գեղօրէից առցեն: Սոյն ծառայքն՝ մտածելով, եթէ ինքեանք երթիցեն ի հեռաւոր տեղիս ոչ լինի ձեռնատու, ևս առաւել քան զիւր ռոճիկն պարտ է խարջել՝ մնային ողորմելի կենօք: Եւ վասն այսոց անճարու-

<sup>73</sup> Հայ պատմագիր Խաչատուր Տուղայեցին արքունիքում ստեղծված այդ իրավիճակը ներկայացնում է այսպես. «Ինքն արքայն՝ գլխովին պորտաբուծ եղեալ ծառայէր իսկ խենչուութեան և որովայնի. և ամենայն ծառայք դրանն արքունի իւրաքանչիւր ոք փութայր զօրծել զօգուտ անձին իւրոյ, և ոչ ոք այն իսկ գոյր արդեօք, որ զՀինութենէ հասարակաց խորիել իսկ ջանայցէր» (տե՛ս Խաչատուր Տուղայեցի, Պատմութիւն Պարսից, էջ 226):

Թիւնն տեսանելով՝ խանէրն մարդ են պատրաստում, որ այս ծառայեաց երեք թոււմանի գիրն մին թոււմանով կամ էլ պակասօք առնում են, և նոքա անճար գոլով տալիս են, և առնօղքն այս գրեանց, ինքեան ելանելով նոյն զեղարէից, որքան նստելով աւելորդօք պահանջում են և աւերում: Մարդիքն ի տեղեաց իւրեանց փախստական լինելով՝ գնում են այլ թագաւորի երկիր:

Վասն այս պատճառի թագաւորին ղուլուղումն մին տղայ կայր, շատ կեղեցիկ, թագաւորն սորայ շատ կու սիրէր և անուն նորա Յաթալի խան է[ր], որ փոքր ժամանակում, որ իշխանութիւն տվեց մինչև այս Յաթալի խանին իւրն վէջիր շինէց, և սայ շատ խոհեմ և խորամանկ մարդ էր, և թագաւորական ամենայն բանն և գործն սորայ ձեռացն էր: Եւ այլ նախարարք և խանէրն բոլորն (27ա) ի նմանէ երկնչէին, և ում կամենէր մեծացուցանէր, և սայ ի յերկիրս զլլբաշին ուր և խան գոյր՝ փոխարկեաց և ամենայն քաղաքաց ուղարկեաց զհաւատարիմս իւր և նստոյց զխանս և շատ մեծացաւ: Բոլոր ժողովուրդքն սմանէ երկնչէին և ո՛չ ի թագաւորէն, և այնչափ մեծացաւ, մինչ թագաւորին գիրն ի յոր քաղաքս գնայր ո՛չ ընդունէին, մինչև Յաթալի խանին գիրն ոչ լինէր: Եւ ժողովեաց բազում գանձս, ավելի քան զթագաւորին, և վասն առաւել գանձուն և իւր իշխանութեան սաստիցն հպարտացեալ՝ փոխարկեաց զմիտս իւր դէպ առ թագաւորն անհավատարիմ գոլ, և կամեցաւ ստանալ ինքն զթագաւորութիւն նորայ:

**ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ  
ՎԱՍՆ ՖԱԹԱԼԻ ԽԱՆԻՆ,  
ՈՐ ԿԱՄԷՐ ԻՆՔՆ ԹԱԳԱԻՈՐԵԼ**

1720 զայս Յաթալի խանս բոլոր երկրին նախարարքն ձգեաց առ ինքն, բայց մնացեալ մին ղօռչիպաշին և Թիֆլիզու

Վախտանկ վալին<sup>74</sup>, որ գրեաց ի բերանէ թագաւորին առ Վախտանկ վալին, թէ. «Կանուխ գաս ինձ մօտ, որ գոյ գործ ինչ ընդ քեզ»:

Եւ վալին այնու գրովն գնում է Սպահան, բայց չէ ընդունում զխորհուրդ Ֆաթալուն, վասն որոյ հրամայում է՝ շատ անպատիւ ան պահում վալուն: Վալին խոհեմ գոլով տեսանում է, որ թագաւորն ոչինչ գիտէ յայսմ բանիս, վասն երկիւղի և առանց պատուութեանն անճար գոլով՝ ընդունեաց զխորհուրդ Ֆաթալուն, զի ազատեսցի: Յետ ընդունելոյն բազում փառօք և պատուով վալուն ճանապարհորդեցին, որ գնայ Թիֆլիզ: Այնուչետև Ֆաթալուն բան ոչինչ համարեաց, իւր զերկիրն պահէր դարձեալ:

Ֆաթալի խանն, քանզի չար խորհրդոյ էր, իւր հօրեղբայր Լօթվալի խանին ժՔՌ (12.000) զօրօք աղարկում է Շիրազ՝ պատվիրելով նմայ, թէ. «Ես թագաւորն առեալ՝ կերթամ Մաշադն Իմամ Ռէզէն<sup>75</sup> զիրարթ անել, ճանապարհին թագաւորին վերջ կառնեմ<sup>76</sup>, դո՛ւ պատրաստ լինիս, որպէս գրիցեմ, նոյնպէս առնիցես»:

Եւ Ֆաթալին, թագաւորն ընդ իւր ելեալ, գնում են Ղազվինու քաղաքն: Ֆաթալին դաղտուկ մին գիր է գրում, չափաւօւ\* աղարկում է Լօթվալի խանին, գրում է.

<sup>74</sup> Խոսքը Քարթլիի թագավոր Վախթանգ VI-ի (1716–1724) մասին է:

<sup>75</sup> Խոսքը շիա մահմեդականների ութերորդ իմամի՝ Ռեզայի Մեշիեդում գտնվող դամբարանի մասին է:

<sup>76</sup> Ֆաթալի խանի կազմակերպած դավադրության մասին հայ ժամանակագիր Մարտիրոս դի Առաքելը գրում է. «Ի սոյն թվ. 1721, յորժամ շահն էր Թէրան քաղաքի բնակեալ զօրօքն, սորա էթիմադօվէն, որ է վագիրն, որ էր անունն Ֆաթայալի խան, ազգաւ լազգի, Շամխալի տոհմէ, ապստամբեալ գաղտնի խորհէր սպանանել զշահն: Որմէ իմացեալ շահին զենգութիւնն նորա, իսկոյն Բ (2) աչացն խաւարեցոյց և զամենայն ինչս նորա և գտունն գրաւեաց» (տե՛ս Արրահամյան Ա., Մարտիրոս դի Առաքելի ժամանակագրությունը, «Մատենադարանի գիտ. նյութերի ժողովածու», N 1, 1941, էջ 97): Իրականում Ֆաթալի խանը կուրացվել է 1720 թ. (տե՛ս Петров П., Ферман шаха Султан-Хусейна Вактангы VI, «Советское востоковедение», 1957, N 4, с. 128):

\* Չափար – սուրհանդակ:

«Քոյ զօրօքն փութով (27բ) գաս Սպահան, որ ես տեղս  
թագաւորին Ֆիքրն կանեմ, կու գամ այդը»:

Ղօռչիբաշին յիմանալով՝ մարդ է կարգում, ճանապարհին  
սպասում են, Յաթալուն գրած գիրն բռնում ան, բերում տալիս  
ղօռչիբաշուն: Գաղտուկ գիրն կարդում է, փութով գիրն տա-  
նում է այլևս ի գաղտ շահին ցոյց է տալիս: Թագաւորն շատ  
երկիւղ է կրում, ղօռչիբաշուն ասում է. «Ի՞նչ պիտի առ-  
[ն]ենք»:

Նա ասում է. «Հրամանն ինձ շնորհեա, ես հոգսն կանեմ»:

Թագաւորն հրաման է տալման ղօռչիբաշուն՝ ասելով.  
«Գնա՛յ, զոր ինչ պիտոյն է, արայ վաղվաղակի»: Եւ ղօռչիբա-  
շին ԲՃ (200) արամբք գաղտ գնում է և համամի միջումն Յա-  
թալի խանին գտանում է, բռնում. դալաք ան բերում կանուխ  
և յանկարծ Յաթալի խանին աչկերն խանում ան, և եղեալ զոս-  
կէ սինում վերոյ ղօռչիբաշի խանն տանում է մատուցանում  
Թագաւորին, բայց Թագաւորն փոշիմանում է:

Ինչևիցէ, ղօռչիբաշին Թագաւորին վեր է առնում, ի միա-  
սին գնում են Սպահան, և անդի վաղվաղ[ակ]ի գրում են Շի-  
րազ, Լօթվալի խանին անդ բռնում ան, և ղօռչիբաշին վէզիր է  
դառնում: Եւ Թագաւորն հրաման է անում, որ Յաթալի խանին  
և նորին հօրեղբայր Լօթվալուն որքան գանձ և կայիք ունի-  
ցին՝ առցեն ի նոցունց և հասուցեն ի գանձարանս արքունի,  
բայց Յաթալին կարի բազում գանձս ունելով քան զԼօթվա-  
լունն՝ բոլորն առեալ եղին ի գանձարանս արքունի:

**ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ  
ՎԱՍՆ ՂԶԼԲԱՇԻ ԵՐԿՐԻՆ  
ԱՆԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՆՑԱՆՔՆ**

Ղզլբաշի շահ Սուլթան Հուսէ[ի]ն Թագաւորն ինքն խըղ-  
ջայբարու մարդ գոլով, բայց ժողովուրդքն իւր ի մէջ նեղու-

\* Ֆիքր – միտք, մտադրություն, խորհուրդ:

թեան գոլով՝ ոչ անսային արզից նոցին և ոչ հետևէին, այլ ան-  
իրաւ և անագորունք մարդիք աղքատ մարդկանց նեղութիւն և  
տառապանք տալով՝ բազումք ի գեղ և գաւառաց ժողովրդե-  
նէն փախստականք եղեն և գնացին այլ թագաւորի երկրում  
բնակեցան:

Եւ երկիրն այս կերպիւն նվազեցաւ, որպէս գրի ի պատ-  
մութեան գիրս Քռանկաց, թէ՛ ի թուին Բրիստոսի 1720 Սպա-  
հան քաղաքումն երևեցան գողք 30 կամ 40 անձինք, գիշերն  
աներկիւղաբար (28ա) իւրեանց զինուքն՝ ումեմն ձեռին սան-  
դուխս, ումեմն ճրագ, այսինքն՝ մաշալ\*, ումեմն ուտելիք, աշ-  
կարայ առանց երկիւղի համարձակ դուրս են գալիս՝ շրջայգա-  
յելով փողոցս և ի պողոտայս: Եւ տեսանելով զնոսա այնպիսի  
զինուք վառեալք՝ պահապանքն քաղաքին երկիւղս կրելով ի  
նոցանէ՛ փախստական են դառնում: Եւ նոյն գողքն, որ տանն  
որ կարծիս ունեն գանձոյ՝ գնում են, սանդուխն դնում պատին  
վեր ելման, գնում ան դուրսի դուռն բանում, բոլորն ի միասին  
աներկիւղ մտնում են տունն, և օթադումն նստում են ուտում,  
խմում, ի տանէն որքան կամենում են գանձ և ասլրանք վեր  
ան առնում, և այլ ինչ կամենում են անում, այլևս աներկիւղ  
դուրս ան գալիս գնում: Յերբ լուսանում այ տանուտէրքն կամ  
այլ ժողովուրդք գնում ան դատաւորին աղաչում, թէ. «Իսպառ  
քանդվեցանք, էս գողէրին մին հնար և ճար արարէք»:

Ասում ան. «Գնացէ՛ք գողն ողջ բռնեցէք՝ սպանէք ոչ,  
թֆանգովտէք ոչ»:

Ժողովուրդքն մնում ան անճար և անօգնական ի մէջ նե-  
ղութեան և տառապանաց, որպէս պատմագիրքն գրէ, թէ՛ իշ-  
խանաց երիտասարդ որդիքն էին, հանդերձ ծառայեօքն իւ-  
րեանց, զի ոչ ումեքէ երկնչէին, մինչ զի յայտնի եղև ընդ ամե-  
նայն տեղիս:

\* Մաշալ – յուղոտ լաթ:

Եւ դրացիք երկրին ոչ ևս երկնչէին ի տէրութենէ շահին, որպէս ազգն աղուանից ապստամբեցաւ, և զամենայն երկիրն անապահով էր յաղազս ապստամբելոյն, մինչ զի հարկն թագաւորական ի յերկրէն Գիլանայ, որ ուղարկէին Սպահան, ի մէջ Ղազվիհնու մօտ անբարլուն<sup>77</sup> բռնութեամբ էհաս ի վերայ և աւար էհար զամենայն ինչսն և զօրքն էսպան, մնացեալքն վիրավորեաց, որք փախստական եղեն, և զամենայն ինչսն և զանձն անբարլուքն տարան, և ոչ ոք էր, որ փութս ունիցէր վասն այսր ամենայնի:

**ԳԼՈՒԽ ՈՒԹՆԵՐՈՐԴ  
ՎԱՍՆ ԳԱԼՈՅՆ ՄԱՀՄՈՒԴ ԽԱՆԻՆ,  
ԱՅՍԻՆՔՆ՝ ԱՂՈՒԱՆԻՆ, ԵՒ ՍՊԱՀԱՆ ԱՌՆՈՒԼՆ**

Թիւն 1722-ումն աղուանի խանն, որ է Մահմուդն, ԺԲՌ (12.000) արամբ<sup>78</sup> Ղանդահարիցն վեր է կենում, գալիս Քրմանայ բերթին վերայ<sup>79</sup>, պաշարում է, բայց կարում էէ առնուլն: (28թ) Նոյն բերթն և Եզդու բերթն թողնում է, փութանակի գալիս է Սպահանայ երեք աղաջ ճանապարհ հեռու, մնում է անդ այնպէս: Բայց այնպէս է լինում գալն նորա, որ զլլբաշն էէ յիմանում գալուստն նորին. յետ իմանալոյն զօրս քաղաքումն ոչ ունէր, զի երթիցեք կռուիլ ընդ նմայ, քանզի բազումք ամք էին, յորմէ հետէ ոչ էին կռուեալ վասն զօրք չունելոյն: Վէ-զիրագամն ՀԻ (70.000) արամբ<sup>80</sup> դուրս ելալ, բայց բազումքն

<sup>77</sup> Ենթադրում ենք, որ խոսքը աֆղանական արքայի ցեղախմբի մասին է:

<sup>78</sup> Հայ ժամանակագիրներ Պետրոս դի Սարգիս Գիլանեցը և Մարտիրոս դի Առաքելը ևս Միր-Մահմուդի զորքի թիվը հաշվում են 12.000 հոգի (տես Պետրոս դի Սարգիս Գիլանեց, ժամանակագրութիւն, էջ 94, Մարտիրոս դի Առաքելի ժամանակագրութիւնը, էջ 98), իսկ Եղիա Կարնեցիմ նրանց թիվը նշում է 5000–6000 մարդ (տես Եղիա Կարնեցու դիվանը, Ե., 1968, էջ 119): Կարծում ենք, 12.000-ը առավել հավաստի է:

<sup>79</sup> Միր-Մահմուդը Քերմանի վրա արշավել է 1722 թ. հունվարին:

<sup>80</sup> Ըստ Պետրոս դի Սարգիս Գիլանեցի՝ Սպահանում գտնվող պարսկական զորքը բաղկացած էր ընդամենը 30.000 հոգուց, որոնք ունեին նաև 24 թնդամոք (տես Պետրոս դի Սարգիս Գիլանեց, ժամանակագրութիւն, էջ 94-95):

ի նոցանէ քաղաքին ժողովուրդքն էին, որք գնացին ճակատեցան ընդ աղուանան<sup>81</sup>, ինքեանք կոտրվեցան<sup>82</sup>, փախեան եկին մտան Սպահանայ քաղաքն և ճանապարհքն պնդեցին:

Աղուանն եկաւ, քաղաքն պաշարէց, և ջուղայոց ճանապարհն սաստիկ պնդէլ ին: Եւ ղզլբաշն հրաման է անում՝ դալիս են Ջուղայու ղէնքն և ձիանքն ուղում են, տանում ան: Նոյնպէս և Ջուղայու քալանթարն և առաջնորդն<sup>83</sup> ան ուղում տանում քաղաքն, ևս Ջուղայու եօթն իշխանաց կանայքն ան ուղում տանում քաղաքն, որ այս եօթն կանանց անուանքն են այսոքիկք՝ Խալդարէնց Յակոբջանի կինն, Խալդարէնց Փանոսի կինն, Խալդարէնց Սահրադին կինն, Շարիմանէնց Մանուէլի կինն, Շարիմանէնց Յարութիւնին կինն, Խօջայ Մինասէնց էմնիազին կինն և մինն Խօջայ Աղայիիբէնց Մուրադաղէ կինն, որ այս եօթն կանայքն տանում ան քաղաքն, Բաղիբադում տեղ ան տալման, որ տեղն կենում ան: Յետ այսոքիկ եօթն իշխանքն գլխաւորք մնում ան Ջուղայ, որ սոքայ երգում ան ուտում, որ միախորհուրդ լինեն, հնարիւք իմիք իւրեանց և բոլոր քրիստոնեայք ժողովուրդքն ազատեն այնպիսի նեղութենէ և վնասից:

Եւ Մահմուդ խանն գնում է, Ջուղայու դաշտումն թաղաւորին մին յատուկ տուն ունի՝ Ֆարաբադ անուամբ, որ դարմանալի շինուածք և ամարաթ այ, տիրում է և տեղն նստում: Բայց ջուղեցոյց երկիւղ է կրում՝ մտածելով, թէ սոքայ վաճառականք են, միշտ այլ երկիր շրջագայում են, կռիւ անելն

<sup>81</sup> Խոսքը 1722 թ. մարտի 8-ին տեղի ունեցած Գյուլնաբադի ճակատամարտի մասին է (այդ ճակատամարտի մասին մանրամասն տե՛ս Lockhart L., The fall of the Safavi dynasty and the Afghan occupation of Persia, pp. 130-143):

<sup>82</sup> Ըստ Պետրոս դի Սարգիս Գիլանենցի՝ Գյուլնաբադի ճակատամարտում «Ղզլբաշն Անէն (1700) մարթ այ վեր ընկել և Աղվանիցն ԱճԼ (130) մարթ այ վեր ընկել. և Ղզլբաշին թամամի զինաթն և սանդուղխանէն, ԻԴ (24) թօին և քաթախանէն, ինչ որ Ղզլբաշին ելել այ, Աղվանն զաֆտել այ» (տե՛ս Պետրոս դի Սարգիս Գիլանենց, Ժամանակագրութիւն, էջ 96):

<sup>83</sup> Այդ ժամանակ Նոր Ջուղայի թեմակալ առաջնորդը Մովսես Ջուղայեցին (1706-1724) էր (տե՛ս Բայբուրդյան Վ., Նոր Ջուղա, Ե., 2007, էջ 118, 133):

կարողված են: Մարդ է աղարկում Ջուղայ եօթն հայոց իշխանաց մօտն՝ ասելով, թէ. «Դուք այլ ազգ էք, կռիւ կանէք կամ ոչ, ասացէ՛ք»:

Ջուղայու իշխանքն ի միասին խորհուրդ են անում՝ իւրեանց զէնքն և երիվարքն խօմ զզլբաշն տարէլ այ և նոցա, այսինքն՝ զզլբաշին, ձեռնահաս չէ, որ իւրեանց օգնի: Եւ (29ա) տեսման ան, որ մնում ան անօգնականի, վասն այս պատճառի չարին փոքրագունն ընտրելով՝ Ջուղայու իշխանքն Մահմուդին պատասխանն այսպէս ան տալման, թէ. «Մեք այլ ազգ անք և վաճառականք և ըռահաթ անք և ոչ կռիւ անող»:

Աղուանն զայս լսելով՝ որդմամբ ասում այ, թէ. «Մեզանէ ձեզ ոչ ինչ նեղութիւն չկայ, բայց եթէ զիս ընդունէք ոչ՝ ես զօրութեամբ իմով պատերազմիմ ընդ ձեզ և ձեզ մաշեցից ի սուր իմ»:

Ջուղայու իշխանքն լսելով զայս՝ հարան մեծի երկիւղի, զի ոչ ոք ունէին օգնական, բայց մի Աստուած, այլ ընդունեցին Մահմուդին: Եւ աղուանիցն մարդ է գալիս հրամանաւ Մահմուդին, բազում գանձ է ուղում Ջուղայուց: Վերոյ եօթն իշխանքն խոստանում ան Հր (70.000) թուման փող տան, որ Ջուղայու ոչինչ կերպիւ նեղութիւն չտան և ժողովուրդս քրիստոնէից գերի չվարեն, և այսպէս դաշինս եղին՝ աղուանն մտաւ Ջուղայ և տիրեաց:

Դարձեալ զզլբաշն, որ Ջուղու առաջնորդն և յիշեալ իշխանաց կանայքն տանում է քաղաքն՝ այս պատճառի, որ թէ աղուանն գայ Ջուղայ գերի վարէ տանի, Ջուղայու իշխանքն այլևս յետս դառցեն վասն կանանց իւրեանց, և ջուղեցոց զէնքն և երիվարքն, որ տանում է՝ այս պատճառի, որ հայքն կարողանան ոչ իւրեանց օգնելն. աղուանն միայն է և աղքատ, Ջուղայ կու կողոպտէ, բաւական գանձս և ինչս ստանալով՝ յետ կու դառնայ, կու գնայ իւր երկիրն, բայց ոչ գիտէին յիմար ողորմելիքն, թէ իւրեանց զինչ պատահելոց էր:

**ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ**  
**ՎԱՍՆ ԶՈՒՂԱՑՈՒ ԵՕԹՆ ԻՇԽԱՆԱՑ ԸՄԲՌՆԵԼՆ,**  
**ԹԷ ՈՐՊԷՍ ԵՂԵԻ**

Վերոյ Մահմուդն Զուղայ որ ընկալաւ՝ հրաման արար, եօթն իշխանն ջուղայեցիք բռնեցին և ՀՌ (70.000) թուժանն, զորս խոստացեալ էին, պահանջէին: Եւ իշխանքն զայն ոչ ունէին ի ներկայ զդրամս, զոր հատուցանէին, և յիշեալ իշխանքն հայոց էին այսոքիկ՝ Խալդարէնց խօջայ Յոհանի որդի Յակոբջանն, Խալդարէնց Գրիգորի որդիք Սահրազն և Փանոսն, Շարիմանէնց խօջայ Մարգարէ որդի Մանուէլն, Շարիմանէնց Միքայէլի որդի Յարութիւնն, (29ք) խօջայ Մինասի որդի էմնիազն և խօջայ Աղայփիւրէնց Աւետաղէ որդի Մուրատաղէն, որ սոցա այս եօթն իշխանացն հրաման արար Մահմուդն, որ Զուղայ մին տան իբր ի բանդի պահեսցեն: Եւ խոստացեալ ՀՌ (70.000) թուժանին գիր յինք առին, որ առանց այլևայլ վճարեսցեն: Եւ սոյն եօթն իշխանքն վերոյ փողն փոքր յետաձգութեամբ այսպէս տվին, զոր որն փող, որն ի տուժն իւրեանց որքան ոսկի և արծաթ որ ունէին՝ տարան ետուժն: Եւ յիշեալ եօթն անձինքն ի միոժ տան ի պահեստի պահէին: Եւ սոյն եօթն իշխանքն իւրաքանչիւր ոք զիւր մհալին տուժնսն հանդերձ աղվանաւ շրջէին, և որքան կամէին և գրեթէ բոլորն մարդկանց և կանանց հանդերձս յազանելիս և ճոթեղէնս ժողովեցին տարան աղուանի մարդկանց և կանանց համար, զի յազանիցեն, քանզի մերկք էին և ոչ ունէին ինչս:

Եւ յետ այսր ամենայնի Մահմուդն Զուղուց աղջկունս պահանջեաց: Զուղայեցիք, անճար գոլով, երեք աղջկունս՝ ետուժն՝ բազում տառապանօք յետ այնորիկ, բազում հնարիւք և երևելի կաշառօք աղջկունքն յետս ետուժն: Եւ Զուղու իշխանքն ի մէջ տան միոյ ըմբռնեալ՝ բազում նեղութեամբ դեռևս կային:

**ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ**  
**ՎԱՍՆ ՍՊԱՀԱՆՈՒ ՔԱՂԱՔԻՆ ՊԱՇԱՐԵԼՆ**  
**ԵՒ ԲԱԶՈՒՄ ՆԵՂՈՒԹԵԱՄԲ ՍՈՎ ԼԻՆԵԼՆ**

Մահմուդ աղուանն, որ եկաւ Սպահան, մօտաւոր գեղօրէքն Սպահանու բոլորն ընդանեօք իւրեանց փախստական եղեալ՝ եկեալ մտին Սպահան, թողեալ զկերակուր և ուտելիս իւրեանց անդ ի տունս իւրեանց: Բայց քաղաքին նախարարք և իշխանքն յիմարեցեալք՝ ոչ մտածէին, թէ արտաքոյ ժողովուրդքն, որք առանց կերակրոյ փախչին և գան քաղաքն, քաղաքին կերակուրն ուտելով՝ քաղաքն սով կու լինի և կու սպառի առանց կերակրոյ: Որ և յետ քանիցս ամսոյ քաղաքին բոլոր կերակուրն կերան, և քաղաքումն եղև սով սաստիկ, զի ոչ կարէին դուրս ելանել ի քաղաքէն, քանզի աղուանն զչորս կողմունս քաղաքին պահէր պնդապէս:

Այսպէս ի բազում և ի սաստիկ սովոյն բազում մարդիք մեռան և սովամահ եղեն, մինչ անճարեցեալք զժողովուրդքն քաղաքին գնացին առ թագաւորն և խնդրէին զկերակուր՝ ասելով, թէ. «Կա՛մ պահեա՛ զմեզ կերակրովք, (30ա) կա՛մ յետս դարձո՛ զթշնամին»:

Եւ որքան գնալով առաւել ևս սովն սաստկանայր, մինչ զի ի քաղաքումն ոչ ևս մնաց զկերակուր, մինչև Գագ կոչեցեալ գեղն շուն, կատու և ձին հատաւ ուտելով զնոսին: Այլև վալանդիզի քապիտանին բազում ամաց հետէ ի յամբարւոջ մնացեալ շաքար կայր, որ մին ամիս քաղաքն զայն շաքարն պահեաց, որ զիտրն մին թումանէն մինչի երկու թուման ծախեցին:

Բայց Զուղայ աղուանին ձեռացն էր, ուտելիքն կարի աժան էր, այսպէս որ մին կովն Զուղու միջումն ԲՃ (200) դիան էր գինն սպիտակ դրամովք և մին ոչխարն Մ (50) դիանովն ին տալիս: Զուղայեցիք գիշերով հաց, միս և գինի կու պատրաստէին, Զանդարուդին գետն անցանէին, քանզի ջուրն սակաւ

էր, և կերակուրն տանէին Բաղիբադուս Զուղու իշխանաց կանանց և խիզանոց\* համար, որք ուստէին և լիանային: Այսու կերպիւ Զուղու խիզանն ի մէջ քաղաքին ոչ մեռան, այլ մնացին կենդանի՝ սպասէին գուցէ ի արտաքոյ զօրս ոմանս օգնութիւնն եկեսցեն, և ոչ եկին ոչ ուստեքէ: Եւ այսպէս մնալով քաղաքումն ի տան և ի բազարում բազում մարդիք մեռան, և ոչ ոք ունէր զկարողութիւնն թաղել զմեռեալն իւր, զի մեռած մարդն էլ իւր տեղումն մնայր, ոմն՝ հոտիւր, ոմն՝ չորանայր:

Եւ իսպառ թշուառացեալք՝ մնացորդ մարդիքն քաղաքին գնացին, շահ Թա[հ]մազն դուրս բերին և եղին թագաւոր<sup>84</sup>: Եւ այս շահ Թա[հ]մազս տեսեալ, զի քաղաքն բոլոր ի ձեռաց ելանէ, քանի մի հաւատարիմ արամբք ի գիշերի միում փախստական եղեալ՝ գնացին ի Թարվէզ:

Եւ մնացորդք ժողովուրդքն, անապաւէն մնալով, գնացին առ շահ Սուլթան Հուսէինն և ասացին բողոքով մեծաւ. «Ահա՛ տեսանես, զի ոչ ունիմք ոչ ուստեքէ օգնական, պարտ է քեզ դուրս ելանել և աղուան Մահմուդն բերել՝ խոնարհելով նմայ, զի մնացորդք քաղաքիս ապրեացին»:

## ԳԼՈՒԽ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

### ՎԱՍՆ ՇԱՀ ՍՈՒԼԹԱՆ ՀՈՒՍԷՒՆԻՆ

#### Ի ՔԱՂԱՔԷՆ ԳՆԱԼՆ ԱՌ ՄԱՀՄՈՒԴ ԱՂՈՒԱՆԻ ԽԱՆՆ

Քանզի թագաւորն շահ Սուլթան Հուսէին ակն (30թ) ունէր, զի ի յերկրից իւրոց եկեսցէն օգնութիւն, բայց ոչ եկին, ապայ յուսահատեալ՝ մարդ ուղարկեաց Ֆահրապատ առ Մահմուդ խանն՝ ասելով, թէ.

\* խիզան – Ջուղայի բարբառով նշանակում է ընտանիք, կին:

<sup>84</sup> Սպահանի պաշարման ընթացքում Սեֆյան շահ Սուլթան Զուսեիմի որդի Թահմասպ II-ին հաջողվում է աֆղանական զորքերի օղակը ճեղքելով հեռանալ Ղազվին, որտեղ 1722 թ. նոյեմբերի 10-ին իրեն շահ է հռչակում: Թեև նրա իշխանությունն ավելի շատ ձևական էր, այն տևում է շուրջ 10 տարի:

«Ես կամիմ գալ և քեզ տեսանել»:

Մահճմուղն ընդունեաց զբանս նորա, հրամայեաց հազար այրք քաջք պատրաստիլ և գնալ, և շահին քաղաքէն դուրս գալոյն փառօք և պատուով, որպէս կու վայելէ, բերցեն ի մօտ իւր: Եւ այսպիսի պատուէր առեալ՝ պատրաստեցան վաղվադակի և գնացին առ շահն: Եւ շահն ելեալ՝ զջղէն՝ իւր էառ եղեալ ի ծոց իւր, և հեծեալ սէվ ձի մի, ի մի կողմն զիւր մօլլայբաշին և զմիւս կողմն իւր վէզիրն, քաղաքէն դուրս եկին:

Աղուանքն զնա պատուով ընկալան, և տարեալ ի Փահրապատ առ ի մօտ Մահճմուղ խանին, և Մահճմուղն պատուով և սիրով ընկալաւ զնա<sup>85</sup>: Եւ շահ, զջղէն իւր հանեալ ի ծոցոյ իւրմէ, ետ ցՄահճմուղ խանն՝ ասելով, թէ.

«Հրամայի՛ր երթ ի քաղաքն, զի Աստուած թագաւորու թիւնն քեզ է տուեալ»:

Եւ երկուքն ի միասին ելեալ եկին և մտան ի քաղաքն: Եւ Մահճմուղն զնաց շահին դօլվաթխանումն թագաւոր նստաւ, և հրաման արարեալ՝ զշահ Սուլթան Հուսէ[ի]նն եղին ի յատուկ ամայրաթոջ միում, իւր պատուօքն և փառօքն անդ մնացէ, հանդերձ իւր պահապանաւքն:

Եւ քանզի Սպահանու քաղաքն վեց ամիս մուսարում<sup>\*\*</sup> էր կապակցեալ, շահ Մահճմուղն հրաման արար՝ քաղաքն յիստակեցին, զոր ինչ մեռեալք կային տարան ի դուրս, և ջառ կանչեցին, որ էլ մարդ չսպանեն, քանզի բազում ժամանակ մուշուլքօշի<sup>\*\*\*</sup> ին անում աղուանին ղօշունն՝ շիայի զզլբաշիցն սպանանում էին: Եւ հրամայեաց՝ ինչ մարդ որ մնացեալք են, իւրաքանչիւր ոք զիւր գործոյն հետևեցէ: Դարձեալ Մահ-

<sup>\*</sup> Ջղա – ակնակուռ զխազարդ, թագ:

<sup>85</sup> Եւս Սուլթան Հուսէինը անձնատվության նպատակով աֆղան Սիր-Սահմուղի ճամբար է գնացել 1722 թ. հոկտեմբերի 23-ին (տե՛ս Шабани Р., Краткая история Ирана, с. 206):

<sup>\*\*</sup> Մուսար – պաշարում:

<sup>\*\*\*</sup> Մուշուլքօշի – հրահրել:

մուղն հօլանդիզի քապիտանիցն ԻՌ (20.000) թուման յինք առավ<sup>86</sup>, և պատճառն այս էր՝ ասաց, թէ.

«Վասն քոյ շաքարին մին ամիս սարգէրդան՝ արարիր, որ կարացի ոչ շուտով քաղաքն առ[ն]ուլն»:

**ԳԼՈՒԽ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ  
ՎԱՍՆ ԶՈՒՂԱՅՈՑ ԻՇԽԱՆԱՑ  
ՍՊԱՆՈՒՄՆ ԹԷ ՈՐՊԷՍ**

Շահ Մահմուդն, որ Սպահան և Զուղայ ընկալաւ, հրամայեաց Զուղու եօթն անձինք ի շխանսն տարան քաղաքն, Աղա Բամալի քարվանսարումն պահեցին: Եւ այս ջուղայեցոցն (31ա) քարվանսարումն՝ իւրեանց օթախանումն, բազում ապրանք ունէին, և այս եօթն անձինքն երկու ամիս էլ քարվանսարումն դուսաղ<sup>\*\*</sup> էին: Եւս հրաման արարին՝ սոցայ քարվանսարումն եղեալ ապրանքն քշեցին, թագաւորական տիրեցին, և այս ապրանաց գինն էր ԼՌ (30.000) թուման: Եւ այսու շահ Մահմուդն ոչ եղև գոհանակ, և յետ այսորիկ թագաւորն պահապանացն հայոց էհարց, թէ. «Դոցայ էլ փող չունե՞ն»:

Պահապանքն ասացին, թէ. «Ոչ»:

Թագաւորն հրամայեաց, թէ. «Գնացէք դոցայ որդիքն բռնեցէք, այնչափ թակեցէք մինչև իւրեանց հարցն եթէ ինչս ունիցեն ասացեն»:

<sup>86</sup> Ըստ անգլիացի վաճառական Ջոն Էլթոնի ուղեգրության՝ «Չուլանտացիները, պաշարման ատեն, նախքան Աֆղաններուն քաղաքը գրաւելը, մեծ հարստութիւն դիզած էին, ծախելով ահագին քանակութեամբ շաքար, դրամի եւ գոհարեղենի փոխարէն: Ատոր համար Շահ Մահոմէտը բանտարկած եւ տուգանքի ենթարկած էր զանոնք ծայրայեղօրէն: Այսուհանդերձ, անոնք բաւական մեծ գումար մը շահած էին, թէւ աղքատ կը ծեւանային» (տե՛ս Քիւրտեան Յ., Ճան Էլթոնի եւ Մընկօ Կրահեմի ուղեւորութիւնը Պարսկաստան 1739-ին, «Չայրեմիք», 1956, N 9, էջ 98):

<sup>\*</sup> Սարգարդան – թափառական, մոլորյալ:

<sup>\*\*</sup> Դուսաղ – բանտ, թակարդ, այստեղ գործածված է բանտի իմաստով:

Ի սպասու եղեալք հաւատարիմ ծառայքն թագաւորին ելեալ գնացին Ջուղայ և Ջուղու իշխանաց որդիքն բռնում են և մին տան միջում պահում են, որ թակեն, զի ի տեղի գանձուց հօրն իւրեանց ասացեն: Եւ իշխանաց որդուց անուանքն են այսոքիկ՝ Խալդարէնց Յակոբջանի որդի Խաչիկն, Խալդարէնց Փանոսի որդի Սաֆարն, Խալդարէնց Սահրադի եղբօր որդի Խօջամալն, Շարիմանէնց Մանուէլի որդի Աղէքսանդրն, Շարիմանէնց Յարութիւնի որդի Փանոսն, Էմնիագի եղբայր Շաֆրագն և Մուրադաղէ եղբայր Նազար աղէն: Որ և այս եօթն իշխանաց որդիքն երեք օր երեք անգամ թէ՛ ոտներին և թէ՛ քամակին, որ է թիկանցն, շատ թակեցին և հարցանէին զխնդրելիս իւրեանց, բայց նոքա ոչինչ բացայայտէին:

Եւ ձանձրացեալ զինուորացն՝ պատմեցին թագաւորին, թէ՛ բազում հարմամբ յետևեցինք, բայց ոչինչ գտանք, և այնու թագաւորն հրամայեաց թողուլ զնոսա, զորս և թողին:

Յետ աւուրց տասն արբանեակն սատանայի՝ վերակացու Մահմադ Նգան խանն, զոր խէթս ունէր ընդ Ջուղու իշխանաց ոմանց, պատճառս բարդեաց առաջի թագաւորին, բողոքեաց և խորհուրդս ետ՝ ասելով, թէ. «Մինչ ո՛չ սպանանենք ի սոցանէ, ո՛չ կարեմք իմանալ ի տեղի մնացեալ գանձուց սոցայ»:

Որով չար խորհրդովն առեալ հրաման ի թագաւորէն, և եկն ի քարվանսարէն Աղա Քամ[ալ]ի, ի յոր իշխանքն Ջուղայու ի պահեստի էին, զոր սկսեաց նախ բանիւ քաղցրութեամբ խօսել ընդ նոսա՝ պահանջելով գանձս և ապրանս ի նոցանէ: Եւ նոքա աղաչելով արտասուէին և ասէին, թէ. «Ձամենայն ինչս մեր զորս ունէաք՝ արծաթ և գոսկի, զականս և կահս և (31ք) կարասիս տուաք, այլ ոչ ևս ունիմք, ողորմեցարուք մեզ»:

Այլ նա խստասիրտ գոլով՝ ոչ անսայր բանից նոցա, ևս քան զևս բարկանայր և երկնչեցուցանէր զնոսա, մինչ առեալ սուրս ի վերայ նոցա: Յորժամ և ոչ եղև բացայայտումն իրաց, յայնժամ հրամանաւ թագաւորին սպան զԽալդարէնց Գրիգորի

որդի Սահրադն, և առեալ զքալանթար Խաչիկն և Սամբուրի Մանուկն՝ ևս սպանեաց զնոսա ի նոյն տեղուոջ: Եւ այսու ամենայնի ոչ շատացեալ՝ յուսալով, թէ բացայայտելոց են զտեղի գանձուցն, և սկսեաց ընդ պատուականայգոյն անձն Խալդարէնց Յակոբջանին, զոր առաջին և հռչակաւորն էր Զուղայու: Եւ հրամայեաց արկանել զնա ի վերայ գետնի, և կացուցեալ տասն և չորս զինուորս, զորս հարկանէին փայտիւք այնքան, մինչ ոչ ևս գոյր զօրութիւնն հարկանողացն: Զնա փոխելով մինչև երկրորդ անգամ զնոսա, այսինքն՝ զինուորս, զոր ըստ կարծեաց ոմանց աւելի քան զերեք հազարս հարուան էր ընկալեալ, և էր անկեալ ի վերայ երկրի իբրև զմեռեալ:

Եւ նորա տեսեալ, զի ոչ ևս եղև յայտնուան ընչից և գանձուց, յայնժամ թողեալ՝ գնաց և պատմեաց թագաւորին: Եւ քանզի հռչայկաւոր անձս այս իմաստութեամբ և բարութեամբ յայտնի էր աշխարհի և առաջի թագաւորին, վասն որոյ սըրտմտեցաւ թագաւորն ի վերայ Մահմադ Նզան խանին, և հրամայեաց վաղվաղակի բժիշկս տանել գոնեայ, զի առողջացի, որով և իշխանքն փրկեցան:

Եւ առաքեաց թագաւորն պարգևս ծիրանիս և ընծայ պատուելի անձին Յակոբջանին, զոր առեալ ի քարվանսարայէն և տարան ի տուն իւր, որ և գրեալ է ի պատմութիւնս Ֆռանկոսիսաց:

**ԳԼՈՒԽ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ  
ՎԱՍՆ ՂԶԼԲԱՇԻ ԵՐԿՐԻՆ ՄԱՀՄՈՒԴԻ ԿԱՌԱՎԱՐԵԼՆ  
ԵՒ ՔԱՂԱՔԱՑ ԱՌՈՒՄՆ**

Շահ Մահմուդն, որ Սպահան ընկալաւ և թագաւորեց, ի զօրաց իւրոց ոմանց արձակեաց, որք գնացին ի Շիրազ զգաւառօքն առին: Եւ ոմանք Քաշան, Ղում, Ղազվինու, Եզդու և Քրմանայ բերթն ընկալան, որ և ի ներքոյ տէրութեան իւրոյ էին, մանաւանդ ևս, որ այս Մահմուդն գրեաց Ղանդահար, որ

ի ազգէ աղուանից ոչ բազում մարդիք եկին զընտանեօք իւրեանց:

Եւ Մահմուդն (32ա) հրամայեաց, զի զորդիս շահ Սուլթան Հուսէյնի սպանեան, որոյ ժԳ (13) որդիսն և զեղբայրն նորին զԱբաս Միրզէն սպանին<sup>87</sup>: Եւ հրամանաւ թագաւորին շահին սպանեալ որդիքն և զեղբայրն տարան Ղուս քաղաքումն թաղեցին:

Եւ յետ այս բանիս շահ Մահմուդն խելագար եղև չարաչար, Ղօսան տարան վերէն կարդացին և հրամայեցին Ջուղուց Աւետարան տանեն կարդան, որ և տարան կարդացին: Ոչինչ օգնութիւն չեղև, քանզի վրէժխնդրութիւն տանէր:

Եւ Մահմուդին հօրեղբոր որդին, որ այր քաջ էր, և Մահմուդին մեծամեծացն հետ խորհուրդ արարեալ՝ զնաց և եմուտ ի տուն Մահմուդին և սպանեաց զնա<sup>88</sup>, և ինքն Աշրաֆն թագաւորեց: Եւ այս Աշրաֆս յոյժ սիրեաց զղզլբաշի ժողովուրդն, և զղլբաշի շիայ ազգէն բազում այրք իւրն ծառայեցուց և իւր զօրաց բազումքն զղլբաշք էին, մինչ զի զիւր վէզիրն ևս զղլբաշ էր<sup>89</sup>: Վասն այսր աղազաւ աղուանի զօրքն շահ Աշրաֆիցն յետս դառցան, այլևս Ղանդահարից զօրս ոչ եկին նմայ օգնութիւն<sup>90</sup>:

<sup>87</sup> Միր-Մահմուդի կողմից շահ Սուլթան Գուսեյնի որդիների և Սեֆյան ավագանու կոտորածը տեղի է ունեցել 1723 թ. հունվարին:

<sup>88</sup> Աֆղան Մահմուդ շահը սպանվել է 1725 թ. ապրիլին:

<sup>89</sup> Ըստ շեյխ Մուհամմեդ Ալի Գազինի հուշերի՝ հենց պարսիկները աֆղանների սովորեցրին կառավարման արվեստը, քանզի վերջիններս «անկիրթ քուլորներ էին» (տես *Миклухо-Маклай Н.*, Из истории афганского владычества в Иране, «Ученые записки ЛГУ», Л., 1954, вып. 4, N 179, с. 148-149): Շահ Աշրաֆի մոտ ծառայության անցած Սեֆյան նախկին աստիճանավորներից մեկը նրա կարգադրությամբ 1725 թ. կազմեց «Tadhkirat al-muluk» կառավարման ձեռնարկը (տես *Tadhkirat al-muluk. A manual of Safavid administration. Persian text in facsimile. Translated and explained by V. Minorsky, London, 1943*):

<sup>90</sup> Իրականում այս մեկնաբանությունը թերի է: Բանն այն է, որ Միր-Մահմուդի եղբայրը՝ Ղանդահարի կառավարիչ Գուսեյն խանը, հրաժարվեց ճանաչել իր եղբորը սպանած Աշրաֆի իշխանությունը և որևէ կերպ աջակցել նրան: Այդպիսով, Աշրաֆը ստիպված էր ապավինել միայն սեփական ուժերին (տես *Рейснер И.*, Развитие феодализма и образование государства у афганцев, с. 312):

**ԳԼՈՒԽ ԶՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ  
ՎԱՍՆ ՇԱՀ ՍՈՒԼԹԱՆ ՀՈՒՍԷՒՆԻՆ ՍՊԱՆՄԱՆՆ**

*Խօնդքարն օսմանցւոց էլլի\* է աղարկում հրովարտակաւ առ շահ Աշրաֆն, որ և գրում է, թէ. «Շատ ուրախութիւն է ինձ, որ դու քուրդ աս, այսինքն՝ սուննի, էտ երկիրն լաւ կու՛ս պահես, բայց այժմ քեզանէ երկու մաթլար\*\* ունեմ և խնդրում եմ, որ կատարումն տաս. նախ՝ էտ երկրումն իմ դազն բանի կենայ, երկրորդն՝ շահ Սուլթան Հուսէ[ի]նն ալևոր ծեր մարդ է, բազում փափակ ունեմ տեսանելոյ, ուղարկես զնա, զի եկեալ աստ՝ տեսից զնա»:*

*Շահ Աշրաֆն էլլին ուզէց, հրաման արար՝ զնացին շահ Սուլթան Հուսէ[ի]նին զլուխն հատին, բերին ի մօտ շահին, որ էլլին ևս էր ի մօտ նորա, էլլչուն ասաց. «Թագաւորն քոյ շահին ուզեցել այ, ահա՛ տար քոյ թագաւորին»:*

*Եւ ի տեսանելն զգլուխն հատեալ՝ երկիւղալից եղև:*

*Յետ աւուրց ինչ եղեալ Սպահանայ զնաց Ստամբօլ և յանցանքն խօնդքարին արդ արար:*

**(32բ) ԳԼՈՒԽ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ  
ՎԱՍՆ ՕՍՄԱՆԼՈՒԻ ՍՈՒԼԹԱՆ<sup>91</sup> ԶՕՐՍ ՈՒՂԱՐԿԵԼՆ  
ԵՒ ԱՂՈՒԱՆԻ ՀԵՏ ԿՈՒՌԻԼՆ**

*Հրաման է անում՝ ԲձՌ (200.000) մարդ պատրաստեցին, և Բաղդատայ Ահմադ փաշէն սարասկար լինի, զնայ Սպահան աղուանի հետ կուլի: Որ յանկարծակի Ահմադ փաշէն զօշուսով գալիս է Համադանայ բերթն տիրում է, և գալիս է Գուլփէքան, որ է Սպահանայ երէք աւուր ճանապարհ, անդ նստում է:*

\* էլլի – պատվիրակ, դեսպան:

\*\* Մաթլար – պահանջ, նպատակ:

<sup>91</sup> Սուլթանի անունը բաց է թողնված: Այդ ժամանակ Օսմանյան կայսրության սուլթանն էր Ահմեդ III-ը (1703–1730):

Եւ շահ Աշրաֆն Սպահան լսում է, բայց ոչ ունեւորով ի պատրաստի բաւական զօրս՝ ԺեՆի (15.000) թէ՛ աղուան, թէ՛ Ղզլբաշի ղօշուենով գնում է օսմանցուն ընդդէմ: Օսմանլուին չարխֆաւակն՝ քաշած Իբրահիմ խանն ԳՃ (300) մարդով բերդան գնում է, չարխֆաւակին մին գուշէն՝՝ բռնում է, թօփխանէն գաֆտում է: Օսմանլուի ղօշուենն կօտրվում է, բազում ջաբախանայ, թօփխանայ և խազինէն գաֆտում է և շատ օսմանլու ան ջառթում: Մնացեալքն օսմա[ն]ցոց ղօրքն ընդ սարասկար Ահմադ փաշին գնում են Բաղդատ, և շահ Աշրաֆն գնում է Սպահան<sup>92</sup>:

**ԳԼՈՒԽ ՎԵՑՏԱՍԱՆԵՐՈՐԴ  
ՎԱՍՆ ՕՍՄԱՆԼՈՒԻՆ ԳԱԼՆ ՅԵՐԵՒԱՆ,  
ԹԱՐՎԷԶ, ԳԱՆՋԱՅ ԵՒ ՇԱՄԱԽԻ ԱՌՆՈՒԼՆ**

Թագաւորն օսմանցւոց լսում է, որ ռուստն Բաքու, Գիլան<sup>93</sup> տիրել այ, վասն որոյ յոյժ երկիւղ է կրում, բազում ղօրս է աղարկում, և եկեալ՝ Երևանայ բերթն<sup>94</sup> և Թարվէզ<sup>95</sup>, Գանջայ<sup>96</sup> տիրում ան:

\* Չարխֆաւակ – ճակատագիր:

\*\* Գուշա – անկյուն:

<sup>92</sup> Աֆղան Աշրաֆ շահի և Թուրքիայի միջև 1727 թ. հոկտեմբերի 23-ին Համադանում Իրանի համար խիստ ստորացուցիչ պայմանագիր է կնքվում, համաձայն որի. 1) շահն ընդունում էր Թուրքիայի սուլթան Ահմեդ III-ին որպէս բոլոր սուլթանի մահնեդականների հոգևոր առաջնորդ՝ խալիֆ, 2) ճանաչում էր իր վասալական կախումը Օսմանյան սուլթանից և 3) բացի 1724 թ. հունիսի 12-ին Կ. Պոլսում կնքված ռուս-թուրքական պայմանագրով նախատեսված տարածքից, Աշրաֆը Թուրքիային էր զիջում նաև Իրանի 2/5-րդ մասը՝ բավարարվելով ընդամենը շահական իր տիրոջը պահպանելու և լեզիտիմ դարձնելու հանգամանքով (տես Ջուլալյան Մ., Արևմտյան Հայաստանը XVI–XVIII դդ., Ե., 1980, էջ 99):

<sup>93</sup> Ռուսաստանի կողմից մերձկասպյան տարածքների գրավման մասին տես *Берже А., Завоевание России в Гиляне (1722 г.), «Русская старина», СПб., 1881, N 10, с. 452-453; Зевакин Е., Прикаспийские провинции в эпоху русской оккупации, «Известия Общества обследования и изучения Азербайджана», Баку, 1927, N 5, с. 123-133.*

<sup>94</sup> Օսմանյան բանակը Երևանը գրավել է 1724 թ. սեպտեմբերի 22/23-ին:

Եւ շահ Թա[՛]մազն ոչ ունելով կարողութիւն կռվելոյ՝ գնում է Արտավելու քաղաքն: Եւ օսմանլուն գնում է Վրացտուն՝ Թիլֆիզու վերայ: Եւ Վախտանկ խանն օգնութիւն ոչ ումեքէ ունելով՝ ոչ կարողանայ պատերազմել ընդ օսմանցլոց, այլ փախստական ելեալ յերկրէ իւրմէ, և օսմանլուն Թիլֆիզու բերթն տիրում է: Եւ Թիլֆիզու վալին, որ է Վախտանկ խանն, ընդանեօք իւրովք և երեք հարիւր արամբք գնում է Ռուստաց երկիրն<sup>97</sup>: Եւ Թագաւորն Ռուստաց բազում կերպիւ պատիւս ետ նմայ և ընդունեաց (33ա) զնա և ընծայս բաշխեաց նմայ, և Վախտանկ խանն բնակեցաւ ի մէջ երկրին Ռուստաց՝ հանդերձ ընդանեօք և ծառայեօքն իւրովք:

Եւ օսմանլուն մարդ է աղարկում Շամախի Սրխովին<sup>98</sup> մօտ՝ հրամայելով, թէ՛ դու նիստ ի Շամախի և տիրեայ, և լեր մեզ հնազանդ, որ և այսու բանիւք Սրխովն հնազանդում է օսմանցուն, և Շամախի մնում է ի ներքոյ ձեռաց իւրոց:

Դարձեալ օսմանցին կամենում է, որ հայոց ուզբաշէքն էլ իւրեան հնազանդեն, բայց ոչ հնազանդին, վասն այն պատճառի, որ Շուշոյ բերթն<sup>99</sup> իւրեանց հետ է, մանաւանդ՝ իւրեանց տեղն էլ շատ պինդ տեղ այ: Որ և քանիցս անգամ բազում օսմանցուց զօշուն է գնում, որ սոցա հախտահարի, բայց ողորմութեամբն Աստուծոյ կարողանում չին: Բայց ընդդէմ նոցին բազում անգամ հայոց Ավան խանն բազում զօրովք հայոց օսմանցուն հետ կռվում է և միշտ յաղթում, որ և այսու գործովք օսմանլուն ձեռն է վեռման հայոց սղնաղէն և երկիւղ է կրում:

<sup>95</sup> 1725 թ. գարնանը, առաջ շարժվելով առանց դիմադրության հանձնված Հանդանից, թուրքական բանակը գրավեց Թավրիզը (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 158):

<sup>96</sup> Թուրքական բանակը Գանձակը գրավել է 1725 թ. հոկտեմբերին:

<sup>97</sup> 1724 թ. Անդրկովկասում ստեղծված քաղաքական ծանր իրադրության պայմաններում, Վախթանգ VI-ը հարկադրված թողել է Վրաստանը և ընտանիքով ու մեծ շքախմբով անցել է Ռուսաստան: Վախճանվել է 1737 թ. Աստրախանում:

<sup>98</sup> Խոսքը Սուրխայ խանի մասին է:

<sup>99</sup> Այս փաստը ևս մեկ անգամ վկայում է, որ Շուշիի բերդը գոյություն է ունեցել դեռևս XVIII դարի սկզբին (տե՛ս Армяно-русские отношения в первой трети XVIII века, том II, ч. I, Ереван, 1964, с. XLI):

Այլևս ղօշունն չեն աղարկում ի վերայ նոցա, և հայքն սղնաղու բոլորն մնում են աներկիւղ:

**ԳԼՈՒԽ ԵՕԹՆՏԱՍԱՆԵՐՈՐԴ  
ՎԱՍՆ ՇԱՀ ԹԱՀՄԱԶԻՆ ԳՆԱԼՈՅՆ  
ԵՒ ՄԱՇԱԴԻՆ ԲԵՐԹՆ ԱՌՆՈՒԼՆ**

Շահ Թա[հ]մազն Արտավէլու վեր է կենում, որ գնայ Խո-րասան, բայց ոչ ունելով ընդ ինքեան առաւել քան զերկու հազար արս: Եւ գնացեալ մօտ ի բերթն Մաշադու, բայց Մէլիք Մահմուդ խանն բերթն տիրեալ ունելով՝ կամ[են]ում է շահ Թա[հ]մազին հետ կռուելն, բայց Քալաթայ գեղիցն Նադէր Ղուլին (այն ինքն է շահ Նադիրն)<sup>100</sup>, Մէլիք Մահմուդին հա-զարապետ լինելով, փախստական է լինում՝ հանդերձ ԳՃ (300) արամբք, և գնում է առ շահ Թա[հ]մազն<sup>101</sup>:

Եւ շահն այս Նադիր Ղուլուս բազում պարգև է ընծա-յում՝ ցուցանելով նմայ զքաղցրութիւն: Եւ Նադիրն խոստա-նում է շահին՝ ասելով, թէ. «Քաղաքն քեզ համար կառնեմ»:

Եւ թագաւորն ի գաղտ գիր է ուղարկում առ իշխանք և ժողովրդոցն քաղաքին, և միտս իւրեանց դարձուցանում են առ շահ Թա[հ]մազն:

Եւ Մէլիք Մահմուդն բերթէն դուրս է գալիս, կռուում ան ընդ շահ Թա[հ]մազին, և այս (33ք) մէլիքին ղօշունն յերեսն յետն դառձուցանում, փախչում են, մտանում բերթն: Եւ ժողո-վուրդն բերթին դուռն բանում են, և շահ Թա[հ]մազն քաղաքն է մտանում: Քաղաքին զօրքն ամենայն դառնում են առ կողմն

<sup>100</sup> Ձեռագրում Նադիր շահի անունը հանդիպում է և՛ Նադիր, և՛ Նադեր ձևերով: Մենք բոլոր դէպքերում Նադիր անվան գրելաձևը թողել ենք ամփոփոխ:

<sup>101</sup> Ըստ Թահմասպ II-ի արքունիքում Ռուսաստանի ներկայացուցիչ Ս. Աբրամո-վի օրագրի՝ Նադիր-Ղուլի բեկ աֆշարն իր հեծելախմբով շահ Թահմասպին է միացել 1726 թ. սեպտեմբերի 8-ին, որին շահը վերանվանել է Թահմազ-Ղուլի խան (տես *Миклухо-Маклай Н., «Записки» С. Аврамова...*, с. 93):

չաՀին, և Նադէր Ղուլին Մէլիք Մահմուդին բռնում է, սպանում<sup>102</sup>:

Եւ յետ այսր ամենայնի շահ Թա[Հ]մազն զօրու[թ]իւն է ըստաման, և Նադիր Ղուլուն շատ սիրում է, և նորա անունն փոխարկում է, իւր անունն դնում է Նադիրն վերայ, և խանութիւն է տալիս և ի վերայ ամենայն զօրաց իւրոց սարասկար է շինում: Եւ հրաման է անում, որ ամենայն ազգն զզլբաշից նորայ անունն Թա[Հ]մազ Ղուլի խան կոչեն: Որ և այս Թա[Հ]մազ խանն ի սննդենէ իւրմէ լօռավար կռուիլ<sup>103</sup> և այլոց պատերազմականաց գործոց և արուեստից հմուտ գոլով և ուսանելով՝ կամեցաւ, և բազում զօրս ժողովեաց, ի յայլոց և քօրդի էլիաթից\* ևս բազում լավ կռվարար ժողովեաց, և կամեցաւ գնալ Սպահան՝ աղուանի շահ Աշրաֆին հետ կռվիւն:

#### ԳԼՈՒԽ ՈՒԹՈՒՏԱՍՆԵՐՈՐԴ

### ՎԱՍՆ ՇԱՀ ԹԱՀՄԱԶԻՆ ԳՆԱԼԸ ՍՊԱՀԱՆ ԱՌ ԱՂՈՒԱՆԸ ԵՒ ԿՌՈՒԻԼԸ ԸՆԴ ՆՄԱՅ ԵՒ ՍՊԱՀԱՆ ԱՌԵՆՈՒԼԸ

Թիւն 1729-ումն շահ Թա[Հ]մազն և Թա[Հ]մազ խանն բազում զօրս ժողովեալ, այսինքն՝ երեսուն հազար այրք քաջ պատերազմողովք ելեալք հանկարծակի գնացին ի Ղազվին: Եւ անդ ի Ղազվին կային սակաւ ինչ զօրս աղուանից՝ գոլով անապահովս ոչ կամեցան կռուիլ ընդ շահին, այլ փախստական եղեալ՝ գնացին Սպահան:

Եւ աղուանից թագաւորն շահ Աշրաֆ սկսաւ զօրօք աղուանից, հանդերձ զզլբաշի ղօշունով, Սպահանայ ելեալ՝

<sup>102</sup> Ըստ Ս. Աբրամովի օրագրի՝ շահական զորքերը Մեշհեդը գրավել են 1726 թ. նոյեմբերի սկզբին, իսկ 1727 թ. փետրվարի 27-ին Մելիք Մահմուդը գլխատվել է Թահմազ-Ղուլի խանի հրամանով (տես Миклухо-Маклай Н., «Записки» С. Аврамова..., с. 95):

<sup>103</sup> Լոռերը Պարսկաստանում հայտնի են իբրև քաջ կռվողներ, հետևաբար՝ «լօռավար կռուիլ» նշանակում է քաջաբար կռվել:

\* Էլ – ցեղ, ժողովուրդ:

գնաց ի մօտ Ղազվինու, կռուեցան ընդ շահին, բայց կոտրվեցան<sup>104</sup>: Յաղագս այսր պատճառի աղուանն ոչ կռուեաց, քանզի որս ունէին ընդ շահ Աշրաֆին, զի ի դուան իւրոց զվլբաչացն սիրէր և ընդուներ, մինչ զի զվէզիրն իւր ևս շիայ էր: Որ և այս նախանձու աղուանքն ասացին շահ Աշրաֆին, թէ. «Գնայ, քոյ դրուցին մարդիք շատ ունես ծառայք, նոցայ ասայ, որ քեզ համար կռուեն»:

Եւ աղուանի զօշուեն սրտաբեկ եղեալ՝ փախեան գնացին, իւրեանց թագաւորին հետ խորհուրդ արարին այսպէս, որ վասն ընդանեաց և կանանց իւրեանց, զոր ինչ զօրութիւն (34ա) ունէին, ժողովեցան ի մօտ Մուշախօր դաշտին, կռուեցան՝ աղուանի զօշուեն կոտրվեց<sup>105</sup>:

Աղուանն յետ դարձոյց յերեսս իւր, գնաց Սպահան, պատրեցան իւրեանց խիզան, ընդանիք և գանձօք իւրեանց, փութով Սպահանու քաղաքէն դուրս եկին, փախստեամբ գնացին մտան Շիրազայ բերթն, որ իւրեանց պակասութիւնն տեսանեն:

Եւ շահ Թա[հ]մազն, հանդերձ Թա[հ]մազ խանովն, որ ապայ եղև շահ Նադիր, եկին Սպահանայ քաղաքն տիրեցին<sup>106</sup>: Յետ այնորիկ Թա[հ]մազ խանն շահ Թա[հ]մազին Սպահան թողէց, և ինքն իւր բոլոր զօրօքն պատրաստեցան գնացին Շիրազայ վերայ: Շահ Աշրաֆն բերթիցն դուրս եկաւ, Թա[հ]մազ խանին հետ կռուեցան, աղուանն յերեսս յետ դարձոյց, փախեաւ և եմուտ ի բերթն Շիրազայ:

Եւ արարին խորհուրդ, զի փախեալ երթիցեն Ղանդահարն և տեսեալ, որ կանայքն իւրեանց ընդ ինքեանց ոչ կարեն

<sup>104</sup> 1729 թ. սեպտեմբերի 30-ին Մեհմանդուստ գետի հովտում պարսից բանակը գլխովին ջախջախեց աֆղանական զորքերին:

<sup>105</sup> Այդ ճակատամարտը տեղի է ունեցել 1729 թ. նոյեմբերի 13-ին մայրաքաղաք Սպահանից 60 կմ հեռու գտնվող Մուրչեխորք գյուղի մոտ:

<sup>106</sup> Նադիրը աֆղաններից ջախջախելուց հետո մտնելով Սպահան՝ 1729 թ. նոյեմբերի 16-ին Թահմասպ II-ին վերահաստատում է Սեֆյանների գահին (տես Կոստիկյան Ք., Թահմասպ II-ի հայերին ուղղված հրովաբարտակները..., էջ 358):

գնալ, և թէ կանայքն թողուցուն և ինքեանք գնան՝ կանայքն իւրեանց անկանխցեն ի ձեռս ղզլբաշից, որ և այս խորհրդով հաւանեցուցին զմիմեանս, և զամենայն կանայս իւրեանց իւրաքանչիւր զկանայս իւրեանց ձեռքն իւրեանց սպանին, և ինքեանք ի գիշերի միում դուրս ելեալ ի Շիրազու, զի փախեալ երթիցեն ի Ղանդազար<sup>107</sup>:

Եւ Թա[հ]մազ խանն մտաւ Շիրազ և տիրեաց: Եւ այսորիկ Թա[հ]մազ խանն ընդ Շիրազայ յետ դարձաւ, և շահ Թա[հ]մազին փոքր զօրօք եթող ի Սպահան, և ինքն զօրօք գնաց ի Խորասան: Եւ շահ Թա[հ]մազ թագաւորն զփոքր զօրօքն իւրօք մնաց ի Սպահան:

**ԳԼՈՒԽ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ՝  
ՎԱՍՆ ԳԱԼՈՅՆ ՕՍՄԱՆԼՈՒԻՆ  
ԵՒ ՇԱՀ ԹԱՀՄԱԶԻՆ ԿՈՏՐՎԵԼՈՅՆ**

Թիւն 1731-ումն թագաւորն օսմանցոց, որ է սուլթան<sup>108</sup>, հրամայում է և հրովարտակ է գրում Բաղդատայ Ահմադ փաշին, որ ԲՃՌ (200.000) զօրօք գնայ ղզլբաշի երկրին վերայ: Եւ այսու հրամանաւ Ահմադ փաշէն իւր զօրօքն գալիս է Համադանայ բերթին մօտն:

Շահ Թա[հ]մազն իւր փոքր զօրօքն գնում է, օսմանցոց հետ կովում են, ղզլբաշն կոտորվում է<sup>109</sup>: Շահ Թա[հ]մազն փա-

---

<sup>107</sup> Շահ Աշրաֆը սպանվել է փախուստի ճանապարհին: Ըստ Խաչատուր Ջուղայեցու՝ «Աշրաֆ սրախողող լեալ սատակի ի ճանապարհին Կրմանայ» (տե՛ս Խաչատուր Ջուղայեցի, Եջվ. աշխ., էջ 246): Նրա հատված գլուխն ուղարկվել է Սպահան՝ Շահ Թահմասպին (տե՛ս Рейснер И., указ. соч., с. 314):

<sup>108</sup> Սուլթանի անունը բաց է թողնված: 1730 թ. վերջին Օսմանյան արքունիքում ծավալված գահակալական պայքարում հաղթանակելով՝ գահ էր բարձրացել սուլթան Մահմուդ I-ը (1730–1754):

<sup>109</sup> Շահ Թահմասպ II-ը պարտություն է կրում Ահմեդ փաշայի զորքերից և հարկադրված է լինում հաշտություն կնքել, որի արդյունքում Թուրքիային են անցնում Համադանը, Քերմանշահն ու Թավրիզը, ինչպես նաև Անդրկովկասի բոլոր այն տարածքները, որոնք Սեֆյանների իշխանության շրջանում Իրանի տիրապետության տակ էին գտնվում (տե՛ս Կոստիկյան Ք., Եջվ. աշխ., էջ 363):

խըստական գալիս է Սպահան: Օսմանլուև Համադանայ բերթն տիրում է և պնդում, յետ ան դառնում, գնում են Բաղդատ:

Եւ յետ (34թ) այսորիկ Թա[հ]մազ խանն, որ է Նադիրն, Խորասան լսում է, որ շահ Թա[հ]մազն օսմանլուին հետ կռվել այ և կոտորվել: Մեծ բարկուլթեամբ բազում զօրօք վեր է կենում, գալիս է Սպահան: Եւ ի մօտանալն Սպահանայ՝ շահ Թա[հ]մազն երկիւղ է կրում, որ առանց Թա[հ]մազ խանին իմացուցանելոյ կռիւ է արարել, փոքր զօրօք՝ Հանդերձ նախարարօք իւրովք, Սպահանայ վեր է կենում, որ գնայ մտի Լոռլստանայ էլիաթին մէջն:

Թա[հ]մազ խանն գալիս է մտնում Սպահանայ մէջն, որ է քաղաքն, և տեսնում է թէ՛ քաղաքին, թէ՛ Զուղայու Հարուստ մարդիքն հետ իւրեան տարած է: Վաղվաղակի յայնժամ Մայեար խանին և մօլլայբաշուն աղարկում է, գնում են Սպահանայ երեք առուր ճանապարհում շահ Թա[հ]մազին տեսնում են, շատ աղաչում ան և երդամբ ասում ան, թէ՛ Թա[հ]մազ խանն քեզ հաւատարիմ ծառայ է: Հազիւ թէ շահ Թա[հ]մազին հաւատացուցանում ան և ճանապարհ[ից] յետ ան դարձուցանում, բերում Սպահան: Եւ Թա[հ]մազ խանն միոյ ժամու ճանապարհ քաղաքէն դուրս է ելանում և շահ Թա[հ]մազին զիւր փառօքն և պատուով բերում է Սպահան:

Եւ յետ միոյ ամսոյ Թա[հ]մազ խանն քաղաքէն դուրս Հազարըրիբ անուամբ բաղումն, այսինքն՝ այգումն, պատրաստութիւն է տեսնում և շահ Թա[հ]մազին պատիւ է կանչում, որ այգումն հաց կերիցէ և ուրախութիւն առնիցեն: Որ և շահն գնում է, այգումն ճաշն ուտում են, և շահ Թա[հ]մազն շատ գինի է ըմբում, քանզի արբեցօղ էր<sup>110</sup>, վասն որոյ արբեցում է և

<sup>110</sup> Շահ Թահմասպ II-ին ժամանակակիցները բնութագրել են որպէս «անբաղդ և անարի և գիմեմող» անձնավորության (տե՛ս Տեր-Ավետիսյան Ա., Լադիոյ շահի արշավանքները (ըստ Յակոբ Շամախեցու), Ե., 1940, էջ 36): Թահմասպի հարբեցողության մասին բազմաթիվ վկայություններ կան նաև Ս. Աբրամովի օրագրում (տե՛ս Миклухо-Маклай Н., «Записки» С. Аврамова..., с. 96-97):

տանում են միւս օթախն, զի ննջիցէ, և ի բազում արբեցմանէն ուր ննջէր՝ փսխեալ անդ<sup>111</sup>:

Եւ այս Թա[Վ]մազ խանն իմացեալ՝ ամենայն նախարարացն կոչեաց և տարեալ նոցա շահ Թա[Վ]մազին ցոյց ետ, և նախարարացն սկսաւ՝ ասելով.

«Ահա՛, տեսէ՛ք, մեր Թագաւորն այս է, բայց ոչ կարէ սայ մեր յերկիրն կառավարել, ես այսպիսի Թագաւորի ծառայութիւնն չեմ առում, դուք ի՞նչ էք ասում»:

Նախարարքն ամենայնքն ասում են.

«Դու ախտիար՝ ունես, որպէս դու կամիս, այնպէս արայ»:

Որ և հրամանաւ Թա[Վ]մազ խանին նոյն ժամայն շահ Թա[Վ]մազին գիշերով քաղաքէն դուրս են տանում՝ հանդերձ ԲՃ (200) արամբք: Հրամայում է, որ տանում են Մաղանդարանայ մօտն բերթումն պահեստի պահում են, որ դուրս չելանէ:

Եւ շահ Թա[Վ]մազին վեց ամսական որդին, որ օրորոցումն է և ծիծ է ուտում՝ դուրս ան բերում (35ա) և Թագաւորեցուցանում են, որոյ անունն էր Աբաս Միրզայ:

Թիվն 1731-ումն Թա[Վ]մազ խանն, որ է Նազիրն, բազում պատրաստութիւն է տեսնում, ութսուն հազար զօրօք գնում է Բաղդատ: Եւ Բաղդատայ Ահմադ փաշէն երկիւղ է կրում, բերթիցն դուրս չէ գալիս: Եւ Թագաւորն օսմանցւոց հրաման է անում՝ ԲՃՌ (200.000) մարդ և սարասկարն Թօփալ Օսման փաշօվն գալիս են Մոսուլ հանցկացած ի Ֆոլմ գետոյ ափոջ նստում են:

Եւ Նազիրն Բաղդատ գոլով՝ իմանում է, Շաղի գետին վերայ ջսիր<sup>\*\*</sup> է կապում, և ԵՌ (5000) ղօշուն յիշեալ ջսիրն վերայ պահապան է դնում, և Նազիրն ինքն յառաջ գնում է ընդ[դ]էմ օսմանցոյն ընդ յայնկոյս գետոյն: Եւ զօրքն օսմանցւոց ի ափն

<sup>111</sup> Նմանատիպ տեղեկություն է հաղորդում նաև հայ պատմագիր Քյուչուք Արուսիքը (տես Քյուչուք Արուսիք, Պատմություն Թահմազ Ղուլու, էջ 124):

\* Ախտիար – իրավունք:

\*\* Ջսիր – կամուրջ:

Ջրոյն բոլորն պատեալ են, և երկու զօրքն ընդ միմեանս պատե-  
րազմում են, զզլբաշն մնում է առանց ջուր: Նադէրն հրաման  
է անում՝ շուտ գնան ջուր բերեն, հասուցանեն զօրացն: Հա-  
զար մարդ են ջոկվում, որ գնան ջուր բերեն, և բոլոր ղօշուենն  
Նադէրին կարծում են, թէ իւրեանց ղօշուենն կօտրվել այ և  
փախչում է: Վասն այս պատճառի Նադիրի ղօշուենն կոտրվում  
է և շատ մարդիք էլ ան ջառթվում, քանզի ոմանք ի ծարաւոյ  
մեռանում են:

Նադիրն փախստական սակաւ արամբք գալիս է Համա-  
դան: Եւ Թօփալ Օսման փաշէն գալիս է Քրդի երկրումն մին  
ղարայ չիման տեղ է, անդ նստում է՝ կարծելով, թէ Նադէրն  
այլ նոյն տարւոջ ոչ կարէ զիւրն զուքել և ժողովել:

Բայց նայ ի մէջ քառասուն աւուր Խորասանայ նոր ղօ-  
շուեն է բերում, և իւրն շինում է քառասուն հազար մարդիք,  
որով այլ ճանապարհաւ գնում է և գիշերով օսմանցոյն զօրացն  
է հասանում: Ի լուսանալ առավօտոյն հանկարծակի Նադէրն  
երիչ\*\* է անում, որոց ոմն քնած են լինում, ոմն նոր ի քնոյ  
զարթնում են: Օսմանցուն զօրացն կոտրում է իսպառ, և չադի-  
րումն ըսկամի\*\*\* էն դնում, Նադէրն նստում է և բազում գան-  
ճըս օսմանցւոց կամ իւրն բանում է, հրաման է անում ամե-  
նայն զօրացն՝ ով ոք որ մին օսմանլուի գլուխ բերցէ՝ մին թու-  
ման փող տան: Որ և բազումն ի օսմանցոց զօրացն ջառթում  
են, և Թօփալ Օսման փաշին գլուխն ևս ան բերում<sup>112</sup>, և քանի  
հազար մարդիք կենդանի են բռնում, (35ք) և ամենայն պատե-  
րազմական զէնք, կահ և կարասին և խազինէն զզլբաշն տի-

\* Ղարա չիման – սև մարգագետին, հովիտ:

\*\* Երիչ – արշավ:

\*\*\* Ըսկամի – նստարան:

<sup>112</sup> Այդ մարտը Յակոբ Շամսիեցին ներկայացնում է այսպես. «Վաղվաղակի  
խանն Թահմազդուլի զօրս կազմէ յետ ամսօրեայ աւուրց և կրկին գնայ ի վե-  
րայ Օսման փաշային յանկարծակի, յադթ զօրսն և փախուցանէ, և սպանանէ  
զնոյն ինքն զօրապետ Օսման փաշայն» (տես Տեր-Ավետիսյան Ա., նշվ. աշխ.,  
էջ 37):

րում է: Բայց յետոյ կենդանիք տիրած մարդկանց բաց է թողնում, արձակում է, ասում այ. «Գնացէ՛ք, գալու տարումն էլի գայք»:

Եւ թօփալ Օսման փաշին գլուխն՝ հանդերձ լաշովն, աղարկում է Բաղդատ<sup>113</sup>, և Ահմադ փաշին, որ Բաղդատ է, գիր է գրում՝ գրում այ, թէ. «Ձեր մասաբովն՝ թաղեցէք»:

Եւ ինքն, որ է Նադիրն, իւր զօրօքն յետ է դառնում, գնում է իւր յերկիրն: Եւ յետ այտորիկ ի Կասպիական ծովափն եղեալք Գիլան, Բաքու, Դարբանդ, որ յայնմ ժամանակին ի ձեռս մեծին Ռուստաց էր, առանց կռուելու սիրով ուղղում է, և Ռուստաց հետ սիրով բնայ են դնում՝ բերթէրն տալման են զղլբաշին<sup>114</sup>, և ինքն իւր զօրօքն գնում է իւր երկիրն:

### ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ

## ՎԱՍՆ ՆԱԴԻՐ ՇԱՀԻՆ ՂԱՆԴԱՀԱՐ ԳՆԱԼՈՅՆ ԵՒ ՀՆԴՍԱՆ ԳՆԱԼՈՒՆ ԵՒ ԱՌՆՈՒԼՆ

Թիւն 1737-ումն շահ Նադիրն ԱՃԿՌ (160.000) մարդով գնում է Ղանդահարայ բերթն պաշարում է, և Ղանդահար սարի վերայ գոլով բազում ջանիւք և աշխատութեամբ և հնարիւք բերթն առման է<sup>115</sup>: Եւ բերթն քանդում է և ի դաշտին յայնմիկ նոր բերթ է շինել տալիս և աղուանի ղօշուենն էլ իւրն հնազանդեցուցանում է:

Եւ չուն խաղինից պակասութիւն է ունենում, կամենում է, որ զնայ Շահջանապատայ վերայ, որ և գնում է, Բարուլին

<sup>113</sup> Այս տեղեկությունը հաստատում է Եակ Աբրահամ Երեւանցին, ըստ որի՝ Նպ֊դիրը «գՕսման փաշայն ծերբակալ արար եւ հատեալ զգլուխն նորա՝ յղեաց ի Բաբիլօն առ Ահմէտ փաշայն» (տե՛ս Աբրահամ Երեւանցի, նշվ. աշխ., էջ 155):

\* Մասաբ – հավատ, դավանանք:

<sup>114</sup> Նադիրը Ռուսաստանից ետ պահանջեց և 1732 թ. պայմանագրով Իրանին վերադարձրեց մերձկասպյան տարածքները:

<sup>115</sup> Նադիրի բանակը Ղանդահարը գրավել է 1738 թ. մարտի 16-ին, շուրջ մեկ տարի տևած պաշարումից հետո: Նադիրն ինքը քաղաք է մտել մարտի 17-ին (տե՛ս Кишмишев С., Походы Надир-шаха..., с. 144-145):

բերթն առնում է, և տեղիցն գնում է Աթալիին դետն յանց է կենում:

Եւ Հնդստանայ թագաւոր Մահմադ շահն 1739 փետրվարի 11, Հանդերձ բազում զօրօք<sup>116</sup>, դուս է գալիս Կառնալայ դաշտումն Եօթն քոս տեղում նստում են: Եւ զբոլոր շուրջանակի իւրեանց ԵՒ (5000) թօփ շարեցին. մէջտեղն թագաւորն էր կարգաւորեալ, մին կողմն վէզիրն իւր՝ [ն]զամ մօլքն և Սահաթ խանն, և միւս կողմն միւս խանէրն ին նստած: Փետրվարի 13-ումն զզլբաշիցն փոքր մարդիկ դուս եկին նոցայ դօվրն\*, բայց ով դուս էր գալիս՝ սպանում ին, ևս որ չորս Հոգի էլ զզլբաշիցն կենդանի բռնեցին, տարան [ն]զամ մօլքին մօտն: Եւ զզլբաշին զօրքն բոլորն ԱՃԿՌ (160.000)-ք էին՝ թէ՛ կռուարարքն, թէ՛ (36ա) նօքար զուլն\*\* կամ օրդուբազարին\*\*\* բովանդակքն զինուորեալք էին պատշաճաւոր պատերազմելոյ: Նոյնպէս և կանայք էին զինուորեալք՝ անձինք եօթն հազար որպէս քաջ պատերազմօղք, որ ոչ էր կարելի զանազանել ընդ արու զօրացն<sup>117</sup>:

Նադիր շահն մարդ է աղարկում [ն]զամ մօլքին մօտն վասն դաշին դնելոյ, քանզի ասում է՝ իզուր տեղն այնքան մարդիկք չկոտորվեն: Բայց ուրիշ պատասխան ոչ ստացաւ, եթէ ոչ կռուելոյ, քանզի ոչ խորհեցան: Փետրվարի 15 եկն համբաւ առ Սահաթ խանն, թէ զզլբաշն իւրեանց մարդկանց բռնանց, այսինքն՝ ուտելեաց և այլ ապրանաց ասպատակեալ՝ բոլորն տարեալ է: Որ և այս Սահաթ խանն՝ Հանդերձ զօրօք,

<sup>116</sup> Հնդկական բանակը բաղկացած էր 300.000 հոգուց, ուներ 2000 փիղ և 3000 թնդանոթ (տե՛ս Мухаммад-Казим, указ. соч., с. 26):

\* Դօվր – շուրջ:

\*\* Ղուլ – ծառա:

\*\*\* Օրդուբազար – բանակատեղի:

<sup>117</sup> Նադիր շահի բանակում գտնվող կանանց մասին Ջ.Հանվեյը գրում է. «Կային անդ և կանայք իբրև վեց հազար, և ունէին զկարմիր վերարկուս ի վերայ պարեգօտին, և երևէին իբրև արս, մինչ զի ոչ ոք կարէր ճանաչել զնոսա ի հեռաստանէ, և բոլորն ի միասին երևէին իբրև զօրս մեծամեծս և ահագնատեսիս» (տե՛ս Հանուէ, նշվ. աշխ., էջ 108):

փոլթանակի գնացեալ, զի օգնութիւնն հասանիցի արանց իւրեանց: Նոյնպէս և ԻԲ (22) էմիր զօրօք իւրեանց գնացին ընդդէմ զզլբաշին, որ կռուիցեն<sup>118</sup>:

Յայսմ ժամանակի շահ Նադիրն հասեալ էր Տիլօֆրի, յերբ այս համբաւն իմացաւ, փոլթանակի ԴՌ (4000) մարդ պատրաստեաց՝ բոլորն ձիաւոր՝ ԳՌ (3000)-ն ճանապարհ[հ]ի մին տեղ թաքեան և ԵՃ (500) ձիաւորն ընդ աջմէ և ԵՃ (500)-ն ձախմէ ուղարկեաց ընդդէմ նոցայ, որ նոցայ յառաջ քաշեն, և եղև:

Յորժամ Հնդստանայ զօշունն մօտեցաւ, այն թաքեալ ԳՌ (3000)-քն էլ դուրս եկին, թափեցան ի վերայ օրդուին և սաստիկ կռվեցան, որ և շահ Նադիրն հազար աֆշարով այլ ուրիշ ոչ առնէր, բաց ի զօրացուցանելոյ զզօրս իւր: Եւ զմնացեալ բազում մասն զօրաց իւրոց թողեալ զնոսա և ոչ երբր ի մէջ կռվոյ, մանաւանդ ամէն թիրայու [ի]րէնց մարդկանցովքն պատրաստի կային, բայց պիտոյ չեղև, և կռիւն երկարէց մինչև մուլթն եղև:

Մահմադ շահին ասկարն կոտրվեցաւ, որքան օմարէք՝ ոմանք սպանեցան, ոմանք կենդանի ըմբռնեցան: Եւ ի մթանալ երեկոյին երկու կողմունքն յետ քաշեցան, և մեռեալքն ի դաշտին յոյժ բազումք էին, բայց զզլբաշիցն ԲԻԵՃ (2500) կռուարար և եօթն մեծաւորք էին անկեալք<sup>119</sup>: Նադիրն հրաման արար որքան զզլբաշք էին ի ծածուկ թաղեցին, որ այլ ոչ երկիցեն:

Փետրվարի 18-ումն [ն]գամ մօլքն, Նիգամ Ալի խանն եկին Նադիր շահին մօտն, որ խաղաղութիւն բնայ դնեն, բայց ինչ անցք էանց՝ ոչ իմացաւ: Փետրվարի 20 Հնդստանայ (36ք) թագաւորն իւր օրդուիցն քանի ամիրով և ԲՃ (200) ձիաւորօք

<sup>118</sup> Այստեղ Կառնալի ճակատամարտի ամսաթիվը սխալ է տրված: Կառնալի ճակատամարտը տեղի է ունեցել 1739 թ. փետրվարի 24-ին:

<sup>119</sup> Այս տեղեկությունը հաստատում է մահ. Ջ. Գանվելը. «Իբրև երկու հազար և հինգ հարիւր արք ի զօրաց Պարսից անկանին, և ի նոյն գիշերի թաղին գնուս» (տե՛ս Գամուէ, նշվ. աշխ., էջ 110):

դուրս եկաւ, որ գայ Նազիր շահին մօտն: Յորժամ չաղիւրին մօտեցաւ, Նազիրին որդին<sup>120</sup> ընդառաջ գնաց և եբեր ի մօտ չաղիւրին: Նաղէրն ձեռն բռնեց, տարաւ կշտին նստացուց: Յետ այնորիկ ի մէջ խօսակցութեան քանի բանիւք թօհմաթ\* տուաւ, որ և Նազիրին խօսելուն ժամանակն միշտ լուռ կայր, մինչև զի ուշաթափ ևս եղև: Եւ իւր չաղիւրն մարդ եկաւ, ասաց. «Ազուղէն\*\* թանկացուցէլ ան, հրաման արար՝ գնան թալանեն»:

Վաղիւն այլ ոչ ումեք գտանիւր զկերակուր, քանզի մին սէրն մին և կէս ուռփի էր, բայց ի բանակս զզբաշից տասն սէրն մին ուռփու էր:

Եւ Նազիր շահին Հնդստանայ բերած խազինէն, այսինքն՝ դրամ, ոսկի, արծաթ, ջուհաիր և այլ ինչ պատուականք և թարաքայ կամ մուհասիլի համար դուս ելածն՝ բոլորն մին հարիւր քրօր էր, որ մին քրօրն մին հարիւր լաք է, որ շահ Նազիրն այսքանիւք եկն ի յերկիրս մեր: Եւ վերոյ յիշեցեալ Կառնալու դաշտումն, որ կուվել ին, բացի վերոյ գրեցելոց սպաննելոցն ի դաշտին, ժե (15) հազար մարդիք դաշտիցն դուրս վասն կերակուր գնելոյ և ստանալոյ սպաննել էին:

Փետրվարի 24-ումն շահ Նազիրն Հնդստանայ օմարէքոցն հրաման է գրում՝ գալ ի մօտ իւր: Մահմադ շահն յիմացեալ՝ կոչեաց զնախարարս և զհազարապետս իւր և խորհուրդ արարեալ ընդ նոսա մինչև ցկէս գիշէր՝ վերջապէս առաջադրութիւնն իւր այս եղև, քանզի ասաց.

«Զբրից մինն պարտ է ինձ առնել, այսինքն՝ կամ մի անգամ ևս կուել, զոր ինչ լինելոց է լինիցի, կամ մահատեղիւ կեանքս վերջացուցանել, կամ հնազանդիցեմ և լինիմ հրամանատար, զոր ինչ շահ Նազիրն հրամայէ, զայն կատարել ինձ», – զոր այս վերջին կամքն կամեցաւ կատարել:

<sup>120</sup> Խոսքը Նազիր շահի միջնակ որդու՝ Նասերուլլահ Միրզայի մասին է:

\* Թօհմաթ – կշտամբանք, ամոթանք:

\*\* Ազուղա – պաշար, պարենամթերք:

Փետրվարի 25-ումն թանկութիւնն այնպէս սաստկացաւ ի բանակս Հնդստանցոց, որ այլ ուտելիք հազիւ և դժուարին գտանիր: Փետրվարի 27-ումն շահ Նադիրն իւր երկու խանի և Հնդստանցու քանի օմարաց հրաման արար, զի երթիցեն, որքան թօփխանայ և ջաքախանայ կայ՝ կարգեսցեն պահնորդս ղզլբաշ արանց ի վերայ բոլորեցունց, և Հնդստանցոյ զօրացն թողուցուն երթալ իւրաքանչիւր զհետ գործոց իւրեանց, և որքան դանձս և ակունս պատուականս (37ա) գտանիցեն՝ տիրեսցեն և բերեալ յանձնեսցեն շահ Նադիրին ինքեան:

Փետրվարի 28-ումն շահ Նադիրն փարայի խազինայ 200 դիանայ ընդրովի թօփ\* հազար հեծելովք ուղարկեաց Քաբուլն և անդի Ղանդահարն, և հրամայեաց, զի զոսօժիկս զօրաց իւրոց երեքամսեայ բաշխեսցեն զամենեցունց: Փետրվարի 29-ումն երեկոյեան քանի ամիրայք չորս հազար թվանկչօք յուղարկեաց բերթն, որ քանի օմարէքոնց կայիքն պահեն:

Մարտի մինումն շահ Նադիրն պատրաստեցաւ, զի երթիցէ Շահջանապատ: Վաղիւն առաւօտեան ի չորրորդ ժամուն 20 հազար ընդրեալ հեծելովք և 4 հազար թվանկչօք և իւր հարեմովն ել դէպ ի Շահջանապատ, բայց հրաման էր արարել, որ զուրուղ լինի՝ ոչ ով չլինի: Եւ շահ Մահմադն շահ Նադիրին հրամանաւն քառասուն արամբք մեծամեծօք իւրովք, ընդ ինքեան տասն հազար ղզլբաշ՝ հանդերձ երկու հազար թվանկչիք, կարգեալք ի վերայ իւր, շահ Նադիրիցն մին քօս յեռու ճանապարհորդեալ դէպ ի Շահջանապատ: Եւ երթայր Սիրբուլիթ խանն<sup>121</sup> զօրօք իւրովք ի մի կողմն Մահմադ շահին կէս քօս հեռու, և նիգամ մօլքն զօրօք իւրոք միւս կողմանէ նորին այլևս կէս քօս հեռու: Եւ նոյն դատարկ ճանապարհի միջէն երթայր զօրքն ղզլբաշից, զի ոչ թողուցուն ի պատահիլ միա-

\* Թօփ – կտորեղենի կապոց:

<sup>121</sup> Ըստ Ջ. Գանվեյի՝ «Եւ Սարբուլանդ խանն էր մի ի Եսխարարացն Գնդստանայ, և էր այր արժանապատիւ, և մեծարեալ յաչս ամենեցուն» (տես Գանուէ, Եջվ. աշխ., էջ 117):

նալ զնոսա: Եւ զայնոսիկ բոլոր զօրաց տեղն 5 քօս երկարու-  
թեամբ և 3 քօս լայնութեամբ պատեալ էր զճանապարհն, որ ի  
Հինգօրեայ ճանապարհ այսպէս կարգաւ զնային, քանզի Հինգ  
աւուր ճանապարհ էր մինչև Շահանապատ:

Մարտի 8 մօտ եղէն քաղաքին, շահ Նադիրն հրամայեաց,  
զի Մահմադ շահն ԲՃ (200) արամբք իւրովք և ԲՌ (2000) զզլ-  
բաշ թվանկօք առեալ՝ երթիցէ ի բերթն և թագաւորական պա-  
լատի իւրում նստիցէ: Եւ շահ Նադիրն ինքն ևս նոյնոյ աւուրն  
մտեալ ի բերթն<sup>122</sup>, և մնացեալ զօրս իւր թողեալ ի դուրս քա-  
ղաքին: Ի մտանիլ շահ Նադիրին ի բերթն եկեալ Մահմադ շահ  
ընկալաւ զնա, և մինչև ցերեկոյ մնացին միայտեղ՝ հետ մի-  
միեանց բազում սէր ցուցանելով: Եւ շահ Նադիրն հրաման  
արար զօրաց իւրոց, որ ոչ ինչ հնդստանցւոյ նեղութիւն չտան  
և ծաղր չառնեն:

(37բ) Մարտի 9 շահ Նադիրն լի բարկութեամբ կոչեաց  
զՍադաթ խանն և բարկութեամբ հրամայեաց վասն խօսեցած  
դրամոյն, որ կանուխ ժողովեն: Սայ գնացեալ տուն ի ահէ շա-  
հին մինչև ցառաւօտ մեռաւ. ոմանք կարծեցին, թէ մահադեղից  
է արբեալ:

Մարտի 10 երեկոյեան ձայն արձակեալ քաղաքումն, իբր  
թէ շահ Նադիրն մեռեալ իցէ կամ սպանեալ: Վասն այսու լրոյ  
բազում մարդիք ժողովեալ շատացեալ եկին ի վերայ բերդին,  
բայց զզլբաշի պահապանքն սոցայ ոմանց սպանեցին, ոմանց  
փախուցին, և յայն գիշերն բազում զգուշութեամբ անցուցին:

Մարտի 11-ումն ժողովուրդքն բազում հարեալք՝ շահ  
Նադիրն դուրս եկեալ լի բարկութեամբ, հրամայեաց զօրաց  
իւրոց, զի յառաջ ջանայցեն դատարեցուցանել զժողովուրդն,  
զի երթիցեն իւրաքանչիւր տեղիս իւրեանց, եթէ ոչ լսիցեն՝ կո-  
տորեսցեն զնոսա: Առաջին թիփն՝ որ գնում է հետևի վասն

<sup>122</sup> Այստեղ ամաթվերը տրված են հին տոմարով: Նադիր շահի բանակը Դելի է  
մտել 1739 թ. մարտի 20-ին (տե՛ս Мухаммад-Казим, указ. соч., с. 27):


\* Թիփ – զորագունդ:



Սեֆյան թագավորական տոհմի հիմնադիր  
Իսմայիլ I-ի (1502-1524) դիմանկարը



Շահ Իսմայիլ I-ի դիմանկարը



Շահ Իսմայիլ I




Շահ Իսմայիլ I-ի ծակատամարտը ուզբեկ  
Մուհամմեդ Շեյքանի խանի դեմ (1510 թ.)



Չալդիրանի ծակատամարտը  
(23 օգոստոսի 1514 թ.)



Շահ Թահմասպ 1-ը (1524-1576) ընդունել է Մեծ Մողոլների պետության փախստական տիրակալ Հումայունին



Շահ Աբբաս 1-ը ընդունել է Բուխարայի կառավարչին


SCHACH ABAS PERSARVM REX.



Շահ Աբբաս I  
(1587-1629)



Շահ Արբաան I-ի դիմանկարը



Շահ Աբբաս I Մեծ  
(հատված ճկարից)




### Ջահանգիրի երազը

(նկարիչ՝ Աբու-լ-Հասան, 1618-1622 թթ.)

Նկարիչը պատկերել է Մեծ Մողոլների պետության տիրակալ Ջահանգիրի (1605-1627) երազը, որտեղ նա գրկախառնված է Սեֆյան շահ Աբբաս I-ի (ձախից) հետ: Նկարը խորհրդանշում է խաղաղությունը Սեֆյան Իրանի և Մողոլական Հնդկաստանի միջև




Շահ Աբբաս II-ի (1642-1666) արքունիքը



Շահ Աբբաս II-ը ընդունել է Մեծ Մողոլների դեսպանին (1663 թ.)



Շահ Սուլեյմանի (1666-1694) արքունիքը  
(նկարիչ՝ Ջաբադարի, 1670 թ.)



Շահ Սուլթան Հուսեյնը (1694-1722)  
նվերներ է բաժանում իր պալատականներին  
(նկարիչ՝ Մուհամմեդ Ալի, 1721 թ.)



Աֆղանների հակաիրանական ապստամբության առաջնորդ  
Միր-Վեյսի դիմանկարը



شاه محمود هوتکی شهنشاه افغان (۱۱۵۳ هـ - ق)

*Chah Mahmoud Hotoki Empereur Afghan (1722)*

Միր-Մահմուդ  
(1722-1725)



Ահմեդ շահ Դուրրանիի թագադրությունը Ղանդահարում (1747 թ.)



Ամենդ շահ Դուրրանի  
(Նադիր շահի գորավարներից, Աֆղանստանի շահ 1747-1773 թթ.)



Քերիմ խան Չենդ

խաղաղութեան, փոխարէն խաղաղելոյն առաւել չարութիւն ան առում մինչև այն հադն, որ շահ Նադիրն գնացեալ էր մէջիդն՝ խաղ իւրեանց կտրնոցէն սկսեցին քար վարելն և ի լուսամտէ միողէ ձգեցին թվանկ գուլուլով շահ Նադիրին վերայ, բայց ոչ դիպաւ, ապայ ի մօտ նորին մին մեծաւորի սպանեաց: Որ և այսու կարի սաստիկ բարկացեալ շահ Նադիրն հրաման արարեալ ընդհանուր կոտորումն առնել, որ այսու հրամանաւ անկեալ ի փողոցս և ի տունս և ի շուկայս մարդ և կին, երեսայ, մեծ և փոքր կոտորեցին, և զշուկայսն կողոպտեցին և բազում տեղիս հրով այրեցին, քանզի ի ութն ժամէ մինչև ցերեկոյ ԱՃԾՌ (150.000) հոգիք էին կոտորեալ<sup>123</sup>: Յաղադս որոյ նգամ մօլքն և Մահմադ շահն եկին շահ Նադիրին մօտն, շատ աղաչեցին, որ հազիւ հրաման արար զօրացն այլ ոչ կոտորել զմարդիք: Եւ զոր ինչ կողոպտեալ էին, բերին մին մասն շահ Նադիրն վեռեց, և բազում ապրանս կրակում այրեալք էին: Եւ ի ժողովրդեանէն բազումք վասն յուսահատութեան իւրեանց տունն կրակ տվին, իւրեանց խիզանն սպանեցին և իւրեանք իւրեանց սպանեցին: Եւ շատ կանայք, որ վասն գեղեցկութեան եսիր են արարէլ, շահ Նադիրն հրաման արար, որ թողուլ, զի երթիցեն ի տունս իւրեանց:

Մարտի 14-ումն հրաման արար, որ քաղաքիցն մարդ դուրս չթողուն, բայց դուրսէն քաղաքն թողուն: Բազում անճարք կային ի (38ա) քաղաքին, գնացին, որ դուրս ելանեն, ըմ-

<sup>123</sup> Ջոնս Դանվելը Դելիի բնակչության կոտորածի մասին գրում է. «Եւ սփռեցան զօրք Պարսից ընդ քաղաքն, և սկսան խորտակել զգրունս տանց և պալատից, և կոտորել զժողովուրդն անսամ սրտմտութեամբ, ոչ ի հասակս և ոչ ի ցեղս խնայէին... Եւ կոտորածն սկսանէր ի յութն ժամէ առաւօտուն մինչև ցերեք ժամն զկնի կեսաւուրն, այսինքն՝ յերկուց ժամուց առաւօտուն մինչև ցիմն ժամն: Եւ արք իբրև չորս հարիր ի Պարսից ազգէն մեռանէին, իսկ ի ժողովրդենէ քաղքին ոչ նուազ քան հարիր և տասն հազար անմիք կորնչէին» (տես Դանուէ, նշվ. աշխ., էջ 116-117): Ինչպես Դանվելի, այնպես էլ սույն երկի հեղինակի տվյալները խիստ չափազանցված են: Ըստ հնդիկ պատմաբանների՝ Դելիի կոտորածի ժամանակ զոհվել է 20000 մարդ (տես Синха Н., Банерджи А., указ. соч., с. 279):

բըռնեալ զնոսա՝ հատին զականջս և քիթս նոցին և անդրէն դարձուցին զնոսա ի քաղաքն:

Մարտի 15-ու մն հրաման արար՝ նզամ մօլքն հազար հեծելազօրօք զզլբաչօք գնացին, որ Սադաթ խանին և Մասուրօլայ խանին կային, որ մհրէլ՝ ին և պահէլ՝ տիրեսցեն: Սադաթ խանին կայիքն մին քրօր ուուփի ձեռն եկաւ, և Մասուրօլայ խանինն՝ չորս քրօր:

Մարտի 16-ու մն շահ Նադիրն հրովարտակ գրէց Պէրսի, որ երէք տարէն խառջ՝ մալջահաթն բաշխեն<sup>124</sup>, և իւր զօրաց մին տարէն ուուփին տվեց և վեց ամսեան էլ աւելորդ բաշխեց: Մարտի 18-ու մն Թահմազ խանին և Մօստօֆայ խանին աղարկէց, նիզամ մօլու և միւս ամիրանոց հետ խօսեցան յաղազս բարիչած քսան քրօր ուուփուն տալէ համար, բայց թագաւորին խազինու մն հազիւ թէ երեք քրօր ուուփի կայր, պարտ էր ունեւորացէ ժողովել: Ապայ մին խազինայ էլ կայր թագաւորական ամբարած, որ գիտակ չէին, որ թագաւորն է դրէլ պահել, այն ևս բացին, աւել քան զթագաւորին խազինէն ոսկի և արծաթ դուս եկաւ: Նիզամ մօլքն և Կոլմիրօղին խանն՝ իւրաքանչիւր հոգին մին ու կէս քրօր փող և ջուհաիր տվին, և երէք քրօր էլ միւս մարդկանցէ և պաշտօնաւորացէ առին: Եւ մին թասվիլ<sup>\*\*\*</sup> շինեցին, ժողովրդաց հարուստ արանց անուանքն գրեցին՝ հանդերձ կայիւքն իւրեանց, տարեալ ետուն շահ Նադիրին, որ որչափ կամիցէ՝ առցէ, կամ որքանն կամիցէ՝ բաշխիցէ: Մարտի 21-ու մն ԲՃ (200) մարդիք ուղարկէց, որ գնան

\* Սիրելի – կնքել:

\*\* խարջ – հարկ:

<sup>124</sup> Նադիր շահը Չնդկաստան արշավելուց և 1739-ին Դեիլն գրավելուց հետո, տիրամալով այդ երկրի անբավ հարստութիւններին, 1151 հ. թ. զի հեջըն ամսի (1739 թ. մարտի 12 – ապրիլի 10) հրովարտակով Իրանի բնակիչներին երեք տարով ազատել է հարկերի զգալի մասից (հրովարտակի բնագիրն ու ուսերեւն թարգմանութիւնը տես **Арунова М.,** Фирман Надир-шаха, «Советское востоковедение», 1958, N 2, с. 116-119; **Арунова М.,** **Ашрафян К.,** ук. соч., с. 87-93):

\*\*\* Թեսփիլ (թաֆսիլ) – մանրամասն նկարագրութիւն:

ձիանքն և ֆիլքն՝ տեսանեն, որքան կամենան և հավանեն՝ առցեն<sup>125</sup>:

Մարտի 25-ումն պատրաստութիւն տեսնեն, որ աթէշբազի՝ շինեն, որ Նասիրօլայ Միրզէ փսակվելէ համար գձեն, քանզի Օվրանկզիբին<sup>126</sup> թոռն, որ է Իզդանբուխին<sup>127</sup> աղջիկն ին տալման<sup>128</sup>, որ մարտի 28-ումն քարին կտրեցին<sup>\*\*\*</sup>, որ էս աղջկան շահ Մահմադն միրէս<sup>\*\*\*\*</sup> տուաւ ԾՌ (50.000) ուսկի փող և ԾՌ (50.000) ուսկու ջուհայիր: Յետ ե (5) աւուր շահ Նազիրն միրէս ազարկէց ջուհայիրեղէն, որ եձՌ (500.000) ուսկու էր:

Եւ վերոյ յիշեցեալ թասվիլն, որ շահ Նազիրն տվել էր նիզամ մօլքին և քանի ամիրայ հրամայել էր, որ վերոյ յիշեալ երեք քօրն՝ գնացէք, տասն օր ձեզ վաղայ<sup>\*\*\*\*\*</sup> բոլորեցէք, (38բ) և էս ամիրանին հինգ սամ արարին՝ իւրաքանչիւր ոք 200 զզլբաշ մուհասիլով գնացին, որ բոլորեն: Բայց թասֆիլն, որ յանուանէ գրել ին, յաղագս վրդովմանց՝ վերահասութեամբ

---

\* ֆիլ – փիղ:

<sup>125</sup> Հայտնի է, որ Յնդկաստանից վերադառնալիս Նադիր շահն իր հետ բազմաթիվ փղեր է բերել Իրան (տես Քյուչուք Արուքին, Գշվ. աշխ., էջ 118):

\*\* Աթէշբազի – հրավառություն:

<sup>126</sup> Աուրենգզեբ (1618–1707) – Մեծ Սողոմոնի կայսրության տիրակալ 1658-ից, Շահ Ջահանի որդին: 1636–1644-ին և 1652–1657-ին եղել է Դեկան երկրամասի փոխարքան, 1658 թ. նվաճել է հոր գահը: Պատերազմներ է մղել տերության սահմաններն ընդարձակելու համար և ավելացրել հարկերը: Նրա օրոք Յնդկաստանում սկսեցին հաստատվել եվրոպական առևտրական ընկերություններ, որոնք և դրեցին գաղութատիրության հիմքերը:

<sup>127</sup> Աուրենգզեբը եզդանբախշ անունով որդի չի ունեցել: Նրա որդիներն էին Մուհամմեդը, Մուազզամը, որն հաջորդել է հորը Բահաթուր շահ (1707–1712) անունով, Ազամը, Աքբարը և Քամբախշը (տես Гаскойн Б., Великие Моголы. Потомки Чингисхана и Тамирлана, М., 2010, с. 270):

<sup>128</sup> Ըստ Մուհամմադ Քյազիմի՝ Նասերուլլահ Միրզան ամուսնացել է Սողոմոնի կայսրության նախկին տիրակալ Ֆարուխ Սիյարի (1713–1719) դստեր հետ (տես Мухаммад-Казим, указ. соч., с. 164-166):

\*\*\* Քարին կտրել – ամուսնանալ, կնության առնել:

\*\*\*\* Միրէս – ժառանգություն:

\*\*\*\*\* Վաղա – ժամկետ, ժամանակ:



«Օֆիցերէրին, որ տօնլուղն՝ դարամութ՝՝ աս տալման, ողջին դարամութն էլ կտրիր՝ տօնլուղն նազդ փող տուր<sup>129</sup>, և ոչ ում թողուլ մի իւր համար յատուկ զօրք պահի: Քեզ համար յամիշայ ԿՌ (60.000) ընդրեալ հեծելագօրք պահիր, իւրաքանչիւր ումեք յիրուր վերայ ամսէն Կ (60) ռուփի տօնլուղ տուր, յամէն Ժ (10)–ն մարդի մին տասնապետ դիր, յամէն տասնապետի մին հարիւրապետ դիր, յամէն տասն հարիւրապետի մին հազարայպետ դիր, բոլորին Փամիլուն և ուրէնցն վերահասու լեր, և մի թողուլ, որ սօլդաթն և օֆիցերն պարապ մնան: Յորժամ (39ա) ինչ տեղ որ զօրք կաղարկէս՝ յաղթութիւն որ կառեն պոծանեն, կանուխ յետս դարձու, զի մի լիցի չար և վաս հետևումն ծնանիցի: Եւ մանաւանդ զգուշ լեր նիզամ մօլքէն, քանզի ես ծանեայ զնա գործովն իւրով, զի լի է խորամանկութեամբ և այեարութեամբ՝՝, և հետևող շահաւէտութեան իւրոյ և առեալ պատուասէր, որ աւել չի պատշաճում, քան զուահաթի միոջ»:

Շահ Մահմադն տեսաւ, որ Նադիր շահն ուղիղ սրտիւ այ ասում և խօսակցութիւն առում, վասն որոյ շնորհակալ եղև և ասաց. «Որովհետև թագաւորութիւնն իմ քեզանէ է կանխեալ, խնդրում եմ, ում որ դու արժանաւոր կու տեսնէս՝ մեծամեծք կարգիր»:

Շահ Նադիրն ասաց.

«Էտ քեզ համար անօգուտ այ, քանզի յետ իմոյ գնալոյս իմ դրած խանէրն քեզ էնպէս պատիւ չեն տալման: Ես որ երթամ՝ դու ընդրեայ քեզ մեծամեծս և իւրաքանչիւր ըստ արժանու իւրոյ մեծութիւն տուր: Եթէ ոչ հնազանդիցեն քեզ, ես

\* Տօնլուղ – բառացի՝ հագուստի դրամ. ռոճիկ:

\*\* Դարամութ (տարաթ) – կողմնակի եկամուտ:

<sup>129</sup> Այս խրատի իմաստն այն է, որ զորահրամանատարներին կողմնակի եկամուտով ապահովելու և ամռոք-փառոք պահելու փոխարեն պետք է բավարարվել միայն կայուն ռոճիկ վճարելով: Ակնհայտ է, որ այդ խրատը նախ և առաջ հիմնված էր անձնական փորձի վրա:

\*\*\* Այարություն – խարդախություն, ճարպկություն:

մարդ կու աղարկեմ, որ թամբեն առեն<sup>\*</sup>, և եթէ քոյ յարկաւորու թիւնն խնդրի՝ Ղանդահարիցն Խ (40) օրուան ես քեզ մօտ կու լինեմ»:

Մայիսի 2-ուան շահ Նադիրն նզա[մ] մօլքին և մեծամեծ ամիրնոց կանչեց և հրաման արար, թէ՛ զգուշ կացէք, շահ Մահմադին հնազանդկէք և ոչինչ կերպիւ խայինութիւն<sup>\*\*</sup> չառէք, որ այսու բանիւք բազում պատուէրս էր տուեալ նոցա:

Յետ այնու շահ Նադիրն Թահմազ խանին և քանի իւր խանէրոց հետ ի մէջ զըուցատրութեան ասացեալ էր, թէ՛ այս բոլոր Հնդստանայ գործոց միջուան երկու բան ղալատ եմ արարէլ. մինն, որ շահ Մահմադին այլևս թագաւոր ղնելս այ, քանզի անպատշաճ իմն էր նորայ այսպիսի մեծ երկիրն Հնդըստանայ կառայվարելն, երկրորդն՝ նիզա[մ] մօլքին չսպանելս է, զրայ շատ քօնայայեար<sup>\*\*\*</sup> մարդ էր, կարելի է մին կերպիւ վըրդովմունք ինչ յարուսցէ, բայց իւրեանց բախտէն էր, չուն ես խօստացել [է]ի, խօսկս իմ ոչ կարացի կոտրելս:

Մայիսի 4-ուան շահ Նադիրն հրաման արար՝ ջառ<sup>\*\*\*\*</sup> կանչեցին էս հրամանիւն, որ յերբ օրդուն կու սկսի վեր կենալն՝ վայ այն մարդին, որ օրդվին հետ վեր չկենայ, այսինքն՝ նոքա, որ զվլբաշի օրդվիցն ան, և վայ էն մարդին, որ Շահջանապատայ թէ՛ մարդ, թէ՛ կին խտուրն<sup>\*\*\*\*\*</sup> վեռու տանի, բաց ի նոցունց, (39բ) որ քաբին կտրելով կին լինեն յինք առէլ՝ էս շարթովն<sup>\*\*\*\*\*</sup>, որ կինն իւր կամաւն եթէ կամենայ գնալն, և այլ բաց ի նոցունց, որոց եսիր լինեն տուեալ և իւրեանք իւրեանց փողովն գնեալ լինեն, վկայ և վկայական ունիցեն:

\* Թամբէ անել – պատվիրել:

\*\* Խայինութիւն – դավաճանութիւն:

\*\*\* Քօնայայեար – նենգամիտ:

\*\*\*\* Ջառ – մուստիկ:

\*\*\*\*\* Խտուր – մտադրվել, մտածել:

\*\*\*\*\* Շարթ – պայման:

Մայիսի 6-ումն շահ Նազիրն վերկացաւ, քաղաքէն դուրսըն մին թագաւորական բաղչում վեր եկավ<sup>130</sup>, իւր գօրացն սան տեսաւ չորս հարիւր մարդ պակաս էին: Սիրօլաթ խանին հրաման արար, որ նոցայ գտանիցէ, յուղարկէ առ շահն, բայց շատ հետեւելով հազիւ վաթսուոն հոգի կարաց գտանել յետ երկուց ակուրց՝ մին բօլլուկ ձիաւորօք առաքեաց զնոսա և հասուց օրդուն: Շահ Նազիրն հրաման արար՝ նոյն 60 հոգւոց գլուխն կտրեցին: Վերոյ յիշեցեալ խանն այլևս քանի հոգիք եկիտ և կամեր յուղարկել օրդուն, յորժամ լուաւ զլուրն զայն, թէ սպանեալ էր զնոսա: Գնաց Մահմադ շահին արդ արար, թէ.

«Բանի մարդ էլ գտեալ՝ պահեալ եմ, զի՞նչ կու հրամայես»:

Յայ[ն]ժամ Մահմադ շահն ասաց.

«Թախեխ՝՝ եթէ էս ողորմելոց էլ ուղարկեմք զնան՝ դոցայ ևս կու սպանանէ, զի արդ մեք նոցայ արեանն պատճառ դառնամք, թո՛յլ տուր երթալ նոցա ուր կամիցին»:

Եւ շահ Նազիրն, որ խասաւ Կառնալօ դաշտն, տեղին ավադուն<sup>\*\*\*</sup> մեծաւորին, որ է Սէմիդարին կոչեաց, ԽՆԻ (40.000) ռուփի ետ, ասաց.

«էս դաշտումն, որ կուի է ելէլ, տեղս մին դեղ կու շինես, անունն զնես Ծաթ[հ]ապատ<sup>\*\*\*\*</sup>»:

Շահ Նազիրն, որ եկաւ Լահոռին մօտ կացաւ, մին գունտ ասկար յուղարկեաց, որ զնան Լահոռ: Յերբ համբաւն եհաս Ջաքարիայ խանին, որ քաղաքապետն էր, հրաման արար՝ քաղաքին վաճառականքն և սառաֆանին ողջն եկին, հետ նոցա բնայ դրէց, և ամենեքեանն քաղաքիցն դուրս եկին: Մարդ :

<sup>130</sup> Նազիր շահը Դելիից դուրս է եկել 1739 թ. մայիսի 16-ին, 57 օր քաղաքում մնալուց հետո (տե՛ս Мухаммад-Казим, указ. соч., с. 28):

\* Բօլլուկ – խուճք, վաշտ:

\*\* Թախեղ (թախիխ) – հաստատ, ստույգ:

\*\*\* Ավադուն – տեր ու տնօրեն:

\*\*\*\* Ճաթհապատ – այսինքն՝ հաղթության բնակավայր:

աղարկէց յառաջ, այսպէս արզ արար, թէ. «Մենք ձեր էտչափ զօրացնդ դէմ կանք կարող չենք, եթէ եկեալ էք որ մեզ սպանէք՝ ահա, պատրաստ անք ի դուրս քաղաքին, եկայք և սպանցուք, եթէ եկեալ էք քաղաքն կողոպտել՝ հրէն քաղաքն դատարկ է, մարդօք գնացէ՛ք կողոպտեցէ՛ք, եթէ փողի համար էք եկել՝ մեր քաղաքն աւելի կարողութիւնն չունի, քան թէ մին քրօր, եթէ կամենեք մին քրօրն տանք՝ թողէք գնացէ՛ք»:

Այս բանս հաճոյ թլեցաւ իշխանացն, որ շահ Նադիրին (40ա) արզ արարին, հրաման արար՝ բարի է, մին քրօրն յինք առուն, թողուն, որ և մին քրօր ուռփին յինք առին, զանց արարին:

Եւ այլ շահ Նադիրն, որ գնացել այ Հնդստան, մինչև Հնդստանայ դուս գալն վերահասու էին ելել, թէ քաղաքում, թէ գեղարանքում աւել քան թէ ԲՃԻ (200.000) հնդստանցու մարդիք էին ջառթվել:

Ներքոյ գրեալս շահ Նադիրին և շահ Մահմադին դրած դաշինի որպիսութիւնն այ: Մահմադ շահին բերանէ այսպէս այ գրման, ի ծառայից իւրոց յառաջ քան զայս կառավարչաց գրիւր այսպէս.

«Բարձրացեալն թագաւորաց, որ բարձր է որպէս մոլորակ արագ և զօրագոյն է քան զՄարսն (որք են չաստուածք պատերազմաց, որ հեթանոսաց ժամանակումն այսպէս ան ելել հաւատման, որ նոյն պատմութենիցն յաղագս մեծ պատիւ տալոյ էս գրում այ) բռնաբարող, քան զօրքն չաստուծոց, թագաւորն թագաւորաց երկրի, իշխան իշխանացն յաւիտենից, ստուերն Աստուծոյ և տեղի փախստեանն իսլամի, իՎր ասել է թէ քուրթի օրէնքն, որ նեղութիւն կրի սորանէ, է՛ կարող փրկվել, զարդարեալ և պայծառ որպէս զԱղէքսանդր է՛ գթած սուլթան: Եւ պայծառ տիրապետողն շահ Նադիր, որոյ տէրութիւնն Աստուած յաւիտենական առնէ, քանզի էլչի ուղարկեաց իմ արքայարանն, յաղագս իմն գործոյ, որ ես կամք ունի յանձն առնելն ի սրտէ: Յետ այնու Մահմադ իսան թուրքմանն Ղանդա-

Հարիցն եկաւ<sup>131</sup>, որ ինձ կրկին յիշեցուցանի, բայց իմ երկրին կառավարիչք ծառայքն սարգէրդան արարին և թագաւորին ջուղապն՝ յետ դձեցին, մեր միջումն մին էսպէս թիւր բանս իմացուցին մեզ: Վասն այն իւր աշողակ զօրքն մինչև Հնդստանայ երկրին մերոյ եղրն եկին և երկուց կողմանց զօրքն ի մէջ դաշտին կռուեցան, ըստ կամացն նախատեսութեանն յաղթուիլն յայտնապէս ի յարևելից երևեցաւ իւր անյաղթելի բախտիցն որպէս հաւասար թագաւորին Օմէշտի (այս մին մեծ յաղթօղ Պերսիոս թագաւոր է)<sup>132</sup> մեծագունեղ մարդին թուրքմանաց աղբիւրն է զօրութեան և բարութեան: Վասն որոյ ես ինձ թողի իւրն՝ հաւատալով, և ի թիկնոց իւրոց ինձ դոհունակութիւն եղև, որ միմեանց պատահեցանք և բախտ ընկալայ, զի կոչեաց զիս պատիւ ընկերակցութեան իւրոյ, որ է որպէս դրախտն հրճուալի: Յետ այնու ի միասին եկանք (40ք) Շահջանապատ, ի յոր ես իւրն ցուց ետու որպէս զպարտաւոր, և ընծայեցի նմայ զամենայն գանձ և ջուհայիրեղէնն իմ և մեծագին իրքն պատուականք թագաւորացն Հնդստանայ<sup>133</sup>, և իւր տէրութիւն խնդրուածովք իմով յանձն էառ, որ մին բաժին վեր առնու որքան կամիցէ և մնացորդքն ինձ շնորհիցէ»<sup>134</sup>:

<sup>131</sup> Ձ. Գանվեյը այդ դեսպանության մասին գրում է. «Մահամատ խան թուրքմանն ի դեսպանութիւն ընտրեցաւ, և ել սայ ամսեամն օգոստոսի ի բարեկամութիւն հրաւիրել գթագաւորն Զնդկաց, և պահանջել ի մնացն գէորս քորս ըռուփի և գէորս գաւառս» (տե՛ս Գանուէ, Եշվ. աշխ., էջ 104):

\* Ձուղապ – պատասխան:

<sup>132</sup> Խոսքը Իրանի առասպելական թագավոր Ջամշիդի մասին է:

<sup>133</sup> Զնդկաստանից Լադիթ շահի առգրաված հարստությունների մեջ էր նա «Կոհ-ի-Նուր» հայտնի ադամանդը: Մուհամմեդ շահն այդ թանկագին ադամանդը թաքցնում էր իր թագի մեջ, սակայն մողոլական արքունիքում վխտացող մատնիչներից մեկն այդ մասին տեղեկացնում է Լադիթ շահին: Լադիթը Լադիթ չէր լինի, եթե չգտներ ելքը: Եվ ահա, մի խնջույքի ժամանակ, ի նշան «եղբայրության», Լադիթ շահը Մուհամմեդ շահին է «նվիրում» իր թագը: Ծարախատյալ մողոլ փառիշահին այլ ելք չէր մնում, քան Լադիթին հանձնել սեփական թագը: Ասում են, թագը ստանալուց հետո Լադիթն անգամ չի համբերել մինչև խնջույքի ավարտը և առանձնացել է իր սենյակում, որպեսզի հիանա ադամանդով: Տեսնելով մութ սենյակը լուսավորող այդ թարը՝ շահը բացականչել է. «Կոհ-ի-Նուր» («Լուսի լեռ»): Այդ օրվանից ադամանդը ստացել է իր անվանումը (տե՛ս **Прокочук Б., Ваганов В.**, От алмаза до бриллианта, М., 1986, с. 14-20):

<sup>134</sup> Թարգմանությունը թերի է և աղավաղված: Այս դժգուհի առավել հաջող թարգմանությունը տե՛ս Գանուէ, Եշվ. աշխ., էջ 127-128:

(41ա) ԳԼՈՒԻ ԲՍԱՆԵՒՄԻՆԵՐՈՐԴ  
ՎԱՍՆ ՆԱԴԻՐ ՇԱՀԻՆ  
ԲՈՒԽԱՐՈՒ ՔՆԱԼՆ ԵՒ ԱՌՆՈՒԼՆ

Թիւն 1740-ումն Նադէր շահն Հնդստանայ յետ դառցաւ, եկաւ Մաշադն և բազում զօրօք գնաց Բուխարայ<sup>135</sup>: Բուխարու խանն հնազանդեցաւ և սիրով ընկալաւ զնայ, և Բուխարու բերթն զգլբաշի զօշունն տիրեաց: Եւ Նադիր շահն մին ամիս մնաց և Բուխարու ԺԲՏ (12.000) օգբէգից զօշուն յինք առէց: Եւ Բուխարու խանին աղջիկն էառ, ետուր իւր եղբայր որդի Ալլահզոուլի խանին<sup>136</sup>, և Բուխարայ Նադէրին հրամանակատար եղև:

Եւ Նադէր շահն իւր զօրօքն, հանդերձ բազում աղուան և օգբէգի զօշունով, յետ էդարձ, եկաւ իւր երկիրն, որ է Մաշադ, անդի գնաց Շամախի և Թարվէզ էառ: Յետ այնու գնաց Գանջու բերթն պաշարէց, քանի ամիս նստաւ օսմանլուն բերթումն, բազում թօփ և ղումբարայ ձգեաց, բայց ոչ կարաց առնուլն:

Ոմն լրտես եկեալ Նադէր շահին պատմեաց, թէ օսմանցուն սարասկարն, որ է Եգան փաշէն, ԲՃՏ (200.000) արամբ եկեալ է, Երևանայ դաշտումն նստեալ: Յայնմ յետէ Նադէր շահն ԼՏ (30.000) մարդ Գանջու բերթին պահապան եղ, որ օսմանլուն բերթէն դուրս չելանեն: Եւ Նադէրն ինքն իւր բազում զօրօքն գնաց Երևան, դէմ յանդիման օսմանցուն նստաւ ի դաշտին, և պատերազմեցան ընդ միմեանս:

Օսմանցուն զօրքն կոտորվեց և փախստական եղև, կարի բազումք կոտորեցան և քանի հազար մարդիկ կենդանի բռնե-

<sup>135</sup> Նադիրի միջինասիական արշավանքի մասին տես Шеманский А., Надир шах и его походы в Афганистан, Индию, Бухару, Хиву, Туркмению, «Средняя Азия», Ташкент, 1911, т. VIII, IX; Чехович О., К истории Узбекистана в XVIII в., «Труды Института востоковедения АН Узбекской ССР», 1954, вып. III, с. 73-75.

<sup>136</sup> Խոսքը ապագա Աղիլ շահի (1747–1748) մասին է:

\* Ղումբարա – ականանետ, ռումբ, ական:

ցին, բազում գանձ, թօփի և զէնս նոցա զզլբաշն տիրեաց և սարասկար Եգան փաշին սպանեցին<sup>137</sup>: Եւ Նադէր շահ ողորմութիւն արարեալ հրամայեաց՝ օսմանցոց բռնած մարդիքն թողուցուն, զի գնասցեն յերկիրն իւրեանց, որ և գնացին, և Նադիրն ասաց.

«Գնացէ՛ք, գալու տարումն թէ կամենէ՞ք՝ էլի՛ գայք»:

Եւ հրամայեաց զգին Եգան փաշին տանեն Ղարս՝ տան տեղին փաշին, զի ըստ մասաբին իւրեանց գօռեն՝: Եւ Նադէրն յետ դառցաւ, յերևանայ բերթն պաշարեաց, և բերթին հետ բազում կռիւլ արար թօփօք և զումբարօք: Տեղին փաշէն ետես, զի ոչինչ օգնութիւն չունի, հուսահատեալ հրեշտակս\*\* (41բ) առաքեաց Նադէր շահին մօտն և խնդրեաց այնու պայմանօք, որ եթէ մեզ նեղութիւն չը լինիցի, մեք բերթիցն դուրս կու գանք, գնանք մեր յերկիրն:

Նադէր շահն ընդունեաց և ասաց.

«Այսու պայմանօք, որ ձեր զէնքն բոլորն բերթումն վեր գնէք, առանց ոչինչ զինու դուս եկէք գնացէ՛ք, ինձանից ձեզ ոչինչ նեղութիւն չէ լինելոց»:

Եւ օսմանլուն անճար գոլով՝ իւրեանց բովանդակ զէնքն ամենայն թողին յերևանայ բերթումն և ինքեանք դատարկ բերթիցն դուրս ելան, գնացին ի յերկիրն իւրեանց Ղարս քաղաքն: Եւ Նադէրն բերթն տիրեաց և մին խան եղ անդ, և բերթն պնդեաց:

<sup>137</sup> Թուրք պատմագիր Սուբհիմ այդ մարտական գործողությունները ներկայացնում է այսպես. «Սերասքեր Եգեն-Մուհամմեդ փաշան, Կարսի և Երևանի միջև պաշարեց Նադիր շահի բանակը, բայց ծանր կերպով հիվանդացավ: Օսմանյան բանակում Լեվենդի գորամասը ապստամբություն բարձրացրեց և մի գիշեր նրանք՝ «Աջեմները հարձակվեցին» գոչելով՝ բանակում շփոթություն առաջացրին: Նադիր շահը այս առիթից օգտվելով հարձակվեց օսմանցիների վրա և նրանց բանակը խորտակեց: Եգեն-Մուհամմեդ փաշան վշտից մեռավ» (տես Թուրքական աղբյուրները..., հ. Ա, էջ 178):

\* Գօռել – թաղել:

\*\* Հրեշտակ – սուրհանդակ, լրաբեր, թղթաբեր:

Եւ յորժամ զԳրանջու փաշայն լուաւ զայս, նա ևս մարդ ուղարկեաց և խնդրեաց Նազիր շահէն, որ իւրեանց զօրացն ոչինչ վնաս չլինի՝ մեք ևս բերթն տանք, դուրս գանք զնանք:

Նազէր շահն հրաման արար այլևս նոյնպէս, որպէս յԵրևանանն զիւրեանց զէնքն թողուցուն և երթիցեն, որ և օսմանլուքն իւրեանց բոլոր զէնքն թողին, և ինքեանք դուրս ելին, դարտակ գնացին իւրեանց երկիրն:

Եւ թիֆլիզու փաշէն էլ ապահով չէր, նա ևս սիրով և խոնարհութեամբ բերթն ետ ղզլբաշին, և ինքեանք գնացին զերկիրն իւրեանց:

Եւ ինչ երկիր, որ օսմանցուն ձեռնուամն էր, Նազէր շահն բոլորն առաւ<sup>138</sup>, անդի յետս դարձաւ, եկաւ զնաց Դաղստան, զի զլագզիսն հնազանդեցուցանէ:

**ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ  
ՎԱՍՆ ՆԱԴԷՐ ՇԱՀԻՆ ԲԱՂԴԱՏ ԳՆԱԼՈՅՆ  
ԵՒ Ի ՇԻՐԱԶ ԹԱՂԻ ԽԱՆԻ ԱՊՍԱՄԲԻԼԷ,  
ԱՅՍԻՆՔՆ՝ ԴՕՆՄԻՇ ԼԻՆԵԼՆ**

Թիւն 1740 Նազէրն եկաւ չօլի Մուղան և բոլոր երկրին նախարարք, մեծամեծք և ի ժողովրդենէն հարուստք ղօլվաթաւորքն կոչեաց առ ինքն, որ և զնացին չօլ Մուղան<sup>139</sup> առ Նազէրն, որ և ասաց ցնոսա.

«Ես բազում նեղութիւն և չարչարանք կրեցի ձեր երկրին վերայ, ձեր թշնամեաց ձեռացն ազատեցի, ահա՛, զնացէք ձեզ համար մին թագաւոր ընտրեցէք, որ ձեր երկիրն կառավարի, ահա՛, բաւական է ինձ, կամիմ գնալ իմ երկիրն»:

<sup>138</sup> Աբդուլլա փաշայի փոխարեմ նոր սարասկար նշանակված Բաղդադի Ահմեդ փաշան հաշտության բանակցություններ սկսեց Նադիրի հետ: Թուրքերը համաձայնվեցին հանձնել Երևանի, Գանձակի ու Թիֆլիսի բերդերը և ետ քաշել զորքերը Անդրկովկասից (տես Չայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 184):

<sup>139</sup> Մուղանի կուռուլթայը տեղի է ունեցել ոչ թե 1740-ին, ինչպես նշված է քննադրում, այլ 1736 թ.: Նադիր շահի ընտրության մանրամասն նկարագրությունը տես Աբրահամ Կրետացի, Պատմություն, Ե., 1973, էջ 111-142:

ժողովուրդքն երկիւղ կրելով՝ դնացին արդ արարին, թէ:

«Մենք ում ընտրենք բաց ի քէն, դու մեր երկրին վերայ  
երախտաւոր աս և մեզ տէր աս, մեր (42ա) թագաւորն դու աս»:

Շահ Նաղիրն ասում այ.

«Թէպէտ ուզում չեմ, ապայ չուն դուք կամիք և խնդրում  
եք բարի այ, գնացէք գիր շինեցէք, ձեռն դրէք»:

Վասն որոյ ի ահու նոքա գիր ան հաստատում, ժողովուրդքն ձեռն ան դնում իբրև ինքեանց թագաւոր և տալիս ան իւրն:

Յետ այսորիկ Նաղիր շահն բազում զօրօք գնում է Բաղդատ, Բաղդատու Ահմադ փաշին հետ բարեկամ է դառնում<sup>140</sup>: Բաղդատ թողնում է, դնում Մոսուլայ քաղաքն առնում է, և կամենում է գնայ Քարկուտայ բերթն էլ առնու, որ մտ[ն]ի Օսմանցու երկիրն:

Սպահանայ չափառ է գալիս, գրում են, թէ Թաղի խանն<sup>141</sup> դօնմիշ այ ելէլ և բազում զօրք է ժողովել<sup>142</sup>: Յերփ Նաղէրն լսում է, գրում այ Սպահանայ խանին, որ Թաղի խանին Սպահան եղեալ որդին սպանեն և կինն ծախեն, որ և որպէս Նաղէրին հրամանն է լինում՝ Սպահանայ խանն կատարումն տալիս է: Լրտեսն գնում է Շիրազ, Թաղի խանին ասում է, Թաղի խանն Նաղէրին հայհոյում է՝ ասելով, թէ՛ կին շատ կան, էլ երեխայք կու լինեն: Լրտեսն գնում է, Նաղէր շահին նորայ ասացածն յայտնում է, և Նաղէր շահն վաղվաղակի բազում զօրք է աղարկում Շիրազ և պատուիրում է նոցա, որ Թաղի

<sup>140</sup> Ըստ Աբրահամ Երևանցու՝ Նաղիրը «դաշինս խաղաղութեան արար եւ եղբայրագիր եղեւ ընդ փաշայի քաղաքին, որ էր Ահմէտ փաշայն, սքանչանալով ընդ հաւատարմութիւն նորա, զոր պահէր առ սուլտանն իւր» (տես Աբրահամ Երևանցի, նշվ. աշխ., էջ 155):

<sup>141</sup> Թաղի խանի մասին Ջ. Յանգվեյը գրում է. «Սա ոչ միայն էր խան, այլև՝ բեկլարբեկի, և ունէր շնորիս մեծամեծս յառաջի Նատիրին, և ունէր հրաման կրելոյ գլխտուր ի ծախակողմն գլխոյն և ճստելոյ ի վերայ փղի և այս փառք մեծութեան երկուց կամ երից միայն էր շնորհեալ ի յնդհանուր թագաւորութեան Պարսից» (տես Յանուս, նշվ. աշխ., էջ 157):

<sup>142</sup> Թաղի խանի ապստամբությունը բռնկվել է 1744 թ.: Ապստամբների թիվը հասել է շուրջ 20 հազարի (տես Арунова М., Ашрафян К., указ. соч., с. 171):

խանին կենդանի բռնեն, տանեն Սպահան և ամորձիքն հանեն<sup>143</sup>, ախտայ առեն և մահլամ դնեն լաւացանեն, ինչ ժամանակ ուզեմ՝ աղարկեն:

Եւ Նադէր շահն բարկութեամբ, մեծաւ ցասմամբ, օսմանց-լոցէ առած բերթէրն վեր է գձում, գալիս է Համադան՝ ասելով, թէ՛ իմ թշնամին իմ երկրումն է, ես գնում եմ այլ երկիր: Որ և այսու պատճառաւ այնուհետեւ չարացեալ՝ կամեցաւ վնասել զժողովուրդսն և սկսաւ ի բոլոր քաղաքաց ժողովրդենէ գանձս բազումս պահանջելն և կողոպտելն և նեղութիւն տալն:

Եւ յետ այնորիկ Թաղի խանին Շիրազ բռնում ան<sup>144</sup>, բերում Սպահան: Սպահանայ խանն ջահռախ՝ այ կանչում<sup>145</sup>, Թաղի խանին [ամորձիքն] խանում ան, դեղ ան անում, լաւանում է: Նադէր շահին արզ ան անում, թէ.

«Ահա՛, կատարեցաւ հրաման քոյ»:

Եւ Նադէր շահն Թաղի խանին ուզում է, աղարկում են Համադան թագաւորին (42թ) ղուլուղն: Եւ թագաւորն բարկութեամբ ասում է.

«Վասն էր էնպէս խայինութիւն արարիր»:

Բայց Թաղի խանն շատ գրէր այ հանում, տալիս թագաւորին, ասում այ.

«Տե՛ս, որ ես այսոց կողմանէ անպարտ եմ»:

Յորժամ Նադէրն գրեանքն կարդում է, տեսնում, որ բազում քաղաքաց մեծաւորք և ժողովուրդք գրում ան, թէ. «Դու եկ, մեք զքեզ գանձօք և մարդօք կու օգնենք», և այլն: Որ այսու բանիւքս Թաղի խանին արարմունքն բաշխում է և հրա-

<sup>143</sup> Նադիր շահի սույն հրամանը, առաջին հերթին, պայմանավորված էր Թաղի խանի պատասխանով:

<sup>144</sup> Թաղի խանը իր մերձավորների հետ ձերբակալվել է 1744 թ. հունիսի 21-ին, դերվիշի հազուստով փախուստի փորձ կատարելիս: Նրա 40 մերձավորները դատապարտվել են մահապատժի (տե՛ս Арунова М., Ашрафян К., указ. соч., с. 172):

Չահռախ – հրապարակավ, բացահայտ, ի տես բոլորի:

<sup>145</sup> Հեղինակը ցանկանում է ասել, որ Նադիր շահի հրամանն ի կատար է ածվել հրապարակավ:

ման է անում, որ գնայ Քարուլն, տեղին խանին հետ ի միասին երկիրն կառավարեն<sup>146</sup>: Եւ հրամանաւ Նազէրին Թաղի խանն գնում է Քարուլն, և այնուհետև Նազէր շահին գուլթկն իսպառ ժողովրդենից կտրում է:

**ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ  
ՎԱՍՆ ՔԱԼԱԹԱՅ ՔԱՂԱՔԻՆ ՇԻՆՈՒԹԵԱՆՆ  
ԵՒ ԳԱՆՁ ԽԱԶԻՆԷՆ ՆԱԴԻՐԻՆ ՊԱՀԵԼՆ**

Շահ Նազիրն փոխարկելով զմիտս իւր՝ սկսաւ ոչ հնու ի Մաշատայ բերթէն, այսինքն՝ միոյ աւուր ճանայարհ գեղուջ, ուր ինքն ծնեալ էր, և դուրով գեղն այն ի մէջ երկուց լերանց և յոյժ ամուր տեղոջ, որոյ առաջն ունի երկու աղաջ տեղ դաշտս, և միոյ լերան երկու կողմանն նեղագոյն ճանապարհս ունեւելով՝ բազում պինդ է, արուեստաւոր է աղարկում նոյն լերինքն, ուր պիտոյ է լինում, տաշել է տալիս, որ ի յետուստ կողմանէ ապահով լինէն: Եւ բոլոր իւր անհամար խազինէն հրամայում է՝ Քալաթումն պնդում են, և ամենայն արուեստաւորից էլ հրամայում է՝ տանում են տեղն բնակեցուցանում են և սկսում են քաղաքն շինելն և բազում գէղարէք գծելն: Եւ հրամայում է՝ տասն տարուան չափով ապրիշում, բէգուստ, մահուտ և այլ ամենայն զանազան ապրանքից տանում են Քալաթ պահում են, որ ոչնչէ պակասութիւն չունենան, ևս ԵՌ (5.000) մարդ պահապան է դնում, որ Քալաթ պահեն:

Եւ յետ այս Քալաթայ շինութեանն շահ Նազիրն գնում է Սպահան: Տեղն Զուղայու ոմանց դուլթաւորաց իզուր մատնում են Նազէր շահին, ասում ան այսպէս, թէ՛ Շարիմանեանց

<sup>146</sup> Այդ կապակցությամբ Ջ. Գանվեյը գրում է. «Նատիրն երդուեալ էր չսպանանել զԹաղի խանն, վասն որոյ այսպիսի ցնորական պատժիք պատժէր զՆա, առանց ի բայց բառնալոյ զկեանս նորին: Շահն համարէր զՆա այր ուղիղ և առաւել գործունեայ, քան զայլ բազում նախարարս իւր, և շնորհելով նմա կեանս՝ յուսայր ի նմանէ մեծամեծ հաւատարմութիւնս» (տե՛ս Գանուէ, նշվ. աշխ., էջ 159):

Միքայելի որդի Յարութիւնն և խոջայ Մինասէնց Մինասի (43ա) որդի էմնիագն ի գաղտ թագաւորական զարդ և այլ իրք են գնեալ: Նոյնպէս և երկու կռապաշտ յնդուի և երկու մահ-մեղական թուրքի ան մատնում, որ և այն անգուլթն Նադէր շահ հրաման է անում՝ այս վեց անձանց տունքն սօնգ՝ ան անում, այսինքն՝ ամենայն ինչս նոցա տիրում ան ի գանձա-րանս իւր: Եւ այնու ոչ շատացեալ հրաման է անում՝ փայտ ան դիդում, վերոյ վեց անձինքն դնում ան կրակումն այրում<sup>147</sup>:

Եւ յետ այսմ չար գործոյն նորա, քանզի յառաջ հրամայել էր Շամախու քաղաքին տունք և բնակութիւնք քանդել ին և հրամանաւ թագաւորին Նոր Շամախի քաղաքն շինել<sup>148</sup>, վասն ապահով լինելոյ տեղոյն, որոյ տեղւոյն անունն կոչի Աղսու: Եւ բոլոր եղեալ ժողովուրդքն Հին Շամախու տանում են Նոր

---

\* Սունկ անել – բռնագրպել հարքունիս:

<sup>147</sup> Նոր Ջուղայի պատմագիր Յ. Տեր-Յովհաննացը նրանց ամբաստանությունը և մահապատիժը ներկայացնում է այսպես. «Իբրև կացուցան նոքա առաջի Լադիբ շահի՝ խօսեցաւ ընդ նոսա թագաւորն քաղցրութեամբ և ասէ, ո՞ր է ասպագէնն ականակուռ, զոր լսեմ գնեալ էք վասն իմ, և նոքա երկիրպագեալ առաջի նորա ցուցին զայն Նադէր շահին: Յայնժամ դարձաւ առ նոսա Նադէրն լի բարկութեամբ և ասաց, եթէ ստուգիս վասն իմ էիք գնեալ զայն, ընդ՞ր դուք ձեզն ոչ յայտնեցիք մինչև ես հարցի ձեզ յաղագս այնր, և հրամայեաց այրել զնոսա ի հրապարակ քաղաքին, և յաւարի առնուլ զամենայն ստացուածս նոցա» (տես Տեր-Յովհաննացն Յ., Պատմութիւն Նոր Ջուղայու, որ յԱսպահան, Կ. Ա, Նոր Ջուղա, 1880, էջ 256):

<sup>148</sup> Նոր Շամախի քաղաքը հիմնադրվել է 1736 թ.: Այդ քաղաքի հիմնադրման մասին անփոխարինելի տեղեկություններ է հաղորդում Աբրահամ Կրետացին. «Ձի գՇամախին ւաերեալ էր և քակեալ Վալիմամաթն, յորժամ էա՞ յառաջ քան զգալն ի Կենճէ, և Ը (8) ժամու ճանապարհ հեռու ի Շամախուցն հողէ բերդ մի շինեալ, հրամայեաց զմնացեալ շամախեցիքն անդ բնակեցուցանել: Եւ զի էր օդն ապականեալ, և տեղն շողային և ջուրն պակաս, և տաճկունք, որք են լակզիք և սուննիք, վշտացուցանէին և նեղացուցանէին զտառապետալսն, այսինքն՝ զագգն մեր, վասն որոյ խնդրեցին բազում անգամ կրկին բնակիլ ի ւաերեալ Շամախու քաղաքն, որ և բարկացեալ՝ իսպառ քանդեաց: Վասն որոյ անճարացեալ եկին առ իս աղերս: Որ և ես սրտապնդեալ արգ արարի մեծի Վալիմամաթին և խնդրեցի ի նմանէ տալ հրաման՝ շամախեցի հայոց արտաքոյ նոր շինած բերդին, ժամու մի ճանապարհ հեռի ի բերդէն, ի տեղի մի վայելուչ, զոր նոքա խնդրեցին, զի շինեսցեն վասն իւրեանց բնակութիւն... Եւ առժամայն շնորհօքն Աստուծոյ քաղցրացաւ սիրտն, և զիջաւ ի խնդիրս իմ» (տես Աբրահամ Կրետացի, Եշվ. աշխ., էջ 135-136):

Շամախի, որ է Աղսու, նորմէ տունք և բնակութիւնք ան շինում և անդ ակամայ կամօք բնակվում ան: Վասն որոյ ժողովուրդքն Աղսուոյ Նաղիւրիցն սրտաբեկեալ ապստամբեցան, և խորհուրդ արարեալ ոմն թագաւորի ազգական հանեցին, և բազում զօրս ժողովեալ կարգեցին, որ Նաղէր շահին հետ կուռեն:

Նաղէրն այս տեսանելով զորդին իւր Նասիրօլայ Միրզէն, աղարկում այ Նոր Շամախի բազում զօրօք և պատուիրում է՝ յետ ընկալնելոյ գՇամախին բերթի միջոյ ժողովուրդքն սպանցէ և զամենայն ինչսն աւար հարկանիցէ:

Եւ Նասիրօլայ Միրզէն գնում է Նոր Շամախի, նորագիւտ շահզատէն<sup>149</sup> բռնում այ և Շամախի տիրում է: Բաղաքին միջի ժողովուրդքն ոմանք փախչում են, ոմանց սպանում են և մնացելոցն գերի են վարում: Եւ բերթն Նաղէր շահին մարդն է նստում, որ այս գործեցաւ 1741 թուին:

**ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵԻԶՈՐՍԵՐՈՐԴ**  
**ՎԱՍՆ ՕՍՄԱՆՑՈՒՆ ՅԵՐԵՒԱՆ ԳՆԱԼՆ**  
**ԵՒ ՆԱԴԵՐ ՇԱՀԻՆ ԸՆԴԴԵՄ ՆՈՐԻՆ ԳՆԱԼՈՅՆ**  
**ԵՒ ԸՆԴ ՄԻՄԵԱՆՍ ԿՈՎԵԼՈՅՆ**

Թիւն 1742 սուլթան<sup>150</sup> հրաման է անում Ավդուլայ փաշային, որ ծանր զօրօք ելանիցէ ի պատերազմ ընդդէմ զզլբաշին: Որ և այս Ավդուլայ փաշայ սարասկարն ԳՃՌ (300.000) արամբք վեր է կենում, գալիս է ի մօտակայ յԵրևանու նստում է:

Եւ շահ Նաղիւրն իւր [զօրքն] վեր է դնում, որն՝ Թարվէզ, որն՝ այլ հեռու, և ինքն ոչ բազում զօրօք, այլ ՄՌ (50.000)՝

<sup>149</sup> Խոսքը ինքնակոչ Սամ-Միրզայի մասին է, որի քիթը կտրելուց հետո ազատ են արձակել՝ արժանի չհամարելով անգամ մահապատժի ենթարկել նրան (տե՛ս Арунова М., Ашрафян К., указ. соч., с. 205):

<sup>150</sup> Սուլթանի անունը բաց է թողնված: Այդ ժամանակ Օսմանյան կայսրության սուլթանը Մահմուդն էր:

արամբք գնում է (43թ) յԵրևան, դէմ յանդիման օսմանցոյն մին ապահով բլրոջ վերայ ընդ իւր զօրօքն նստում է: Եւ երկու զօրքն ընդ միմեանս կռվում են, օսմանցուն փաշայ Ավդուլայ սարասկարին գուլլի է կպչում, վեր է ընկանում, մեռնում<sup>151</sup>: Օսմանցիքն տեսնում են, որ իւրեանց սարասկարն վեր ընկաւ, սրտաբեկ ան լինում և ինքեանք փախչում են: Ղզլբաշի զօշունն բազում օսմանցիք ան կտորում և բազում կենդանիք մարդիկք ան բռնում<sup>152</sup>, և յոլով գանձ և զէնք նոցա Նադիր շահն տիրում է: Եւ յետոյ Նադիրն ըմբռնած օսմանցոց զօրացն կոչում է առ ինքն, ողորմութիւն է անում, արձակում է և բարձր ձայնիւ ասում է նոցա.

«Գնացէ՛ք ձեր յերկիրն, խեղջ էք»:

Դարձեալ հրամայում է սպանեալ Ավդուլայ փաշին տանեն, յանձնեն Ղարսու փաշային, որ ըստ մասաբին իւրեանց գօռեն: Եւ ինքն՝ Նադիր շահն, յետ է դառնում, գնում է Թէհրան, տեղն քաղաքումն նստում է:

Թիւն 1743-ումն հրամայում է Միրզայ Մէհթուն<sup>153</sup>, որ գնայ Սպահան, Աստուածայշունչ գիրքն բոլոր Հին և Նոր Կտակարանն թարգմանեն ի պարսից լեզու և հանդերձ իւ-

<sup>151</sup> Այս Աբդուլա Քեփրուլու փաշան էր «որդին սորին նախնի սարաքարին մեծի Քեփրուլուին, որ անկաւ ի պատերազմին ընդ յաղթօղ Նատիրին իմն ամօք յառաք» (տես Գանուէ, նշվ. աշխ., էջ 166):

<sup>152</sup> Ըստ Ջ. Գանվեյի՝ այդ ճակատամարտում օսմանյան բանակը տվել էր 28.000 սպանված, այդ թվում և երեք փաշա, ու 5000 գերի (տես Գանուէ, նշվ. աշխ., էջ 166):

<sup>153</sup> Միրզա Մուհամմադ Մեհդի խան Աստարաբադի - Նադիր շահի պալատական պատմագիրը: Նա սկզբում Թահմազ-Ղուլի խանի քարտուղարն էր: Սակայն, Նադիրի շահ հռչակվելուց հետո շահը ազատում է նրան այդ պաշտոնից և համծնարարուն գրել իր պատմությունը: Թողել է պատմագրական աշխատություններ հետևյալ վերնագրերով. 1) Թարիխ-ե Նադերի («Պատմություն Նադիրի»), հրատ. Թավրիզ, 1869 և Բոմբեյ, 1891/1892, 2) Ղուրբե-յե Նադիրե («Չագվագյուտ մարգարիտները»), հրատ. Թեհրան, 1341/1962: Այս գրքերը հիմք են հանդիսացել Նադիր շահի կյանքին և գործունեությանը նվիրված հետագա բազմաթիվ աշխատությունների համար: Նրա «Թարիխ-ե Նադերի» աշխատությունը դեռևս XVIII դարում թարգմանվել և հրատարակվել է ֆրանսերեն, անգլերեն և գերմաներեն լեզուներով:

րեանց Ղօռանովն տանեն, զի տեսանիցէ<sup>154</sup>: Եւ այսու հրամանաւն Սպահան Գէվորգ վարդապետն և Ստեփանոս վարդապետն, Մնացականի որդի Տէր Յովսէփն<sup>155</sup> և մին Ղզուխի պատրի<sup>156</sup> սկսում են սոյն գիրսն թարգմանելն: Որ և թարգմանում են և վեր են առնում, դնում են թէհրան, արզ են անում, հրամայում է՝ գրքէրն ուղում է: Յիշեալ վարդապետք և պատրին, հանդերձ թարգմանած գրքէրովն, դնում են թագաւորի մօտն, և թագաւորն հրամայում է, թէ էա գրքէրն տարէք պահեցէք: Եւ հրաման է անում՝ սոյն վարդապետք և պատրուն ումեմն 50 թուման, ումեմն 20 թուման փող ան տալիս<sup>157</sup>, և սոցայ արձակում է, դնում են Սպահան, Ջուղայ:

Եւ ոչ իմացաւ, թէ զինչ էր դիտաւորութիւն նորա, այլ նա գիտէ, որ ունի զսիրտ թագաւորաց ի ձեռին իւրում, որում փառք յաւիտեանս. ամէն:

<sup>154</sup> Իրանում Ռուսաստանի ներկայացուցիչ Ի. Կալուշկինը Պետերբուրգ ուղարկած իր հաղորդագրության մեջ հայտնել է, որ Նադիր շահն իր մոտ է հրավիրել հայոց քահանայապետերի, կաթողիկ եպիսկոպոսների, մուլլաների և ռաբբիների ու հանձնարարել նրանց պարսկերեն թարգմանել Ավետարանը, Գործք Առաքելոցը, Թալմուդը և Ղուրանը, որպեսզի սուրբ օրենքների միջև եղած տարբերությունները հաշվի առնելով ստեղծվի մի այնպիսի նոր կրոն, որն Աստծուն հաճու լինի: Նադիրը չէր թաքցնում, որ ինքը ձգտում է ոչ միայն Իսլամի գլխավոր աղանդների, այլև բոլոր մեծ կրոնների մերժեցմանն ու հավասարակշռությանը, քանի որ սուրբ գրքերի ուսումնասիրությունից համոզվել էր, թե Աստված բոլորի համար մեկն է, ուստի և Աստծո օրենքն էլ բոլորի համար պետք է միևնույնը լինի: Նադիրի կրոնական քաղաքականությունը մերժվեց Նաջաֆի իսլամական ժողովի կողմից (տես Բալայան Բ., Նադիր շահի կրոնական և հակաթուրքական քաղաքականությունը, «Իրան-Մամէ», 1993, N 5, էջ 12-15):

<sup>155</sup> Խոսքը Յովսէփ Ջուղայեցու մասին է, որն այդ իրադարձության մասին ուշագրավ տեղեկություններ է բողբել իր «Քննիկոն» աշխատության երկրորդ հատորի ԻՁ-ԻԸ գլուխներում (հրատ. տես Սիրոզյան Յ., Հայ-իրանական մշակութային համագործակցության պատմության արժեքավոր սկզբնաղբյուր, «ԲԵԳ», 1994, N 2, էջ 89-97):

<sup>156</sup> Ըստ Ջ. Հանվեյի՝ «Եւ հայր Դևսիկնեսն, որ էր պատրի մի ֆրանսից, էր մին ի թարգմանչացն» (տես Հանուէ, նշվ. աշխ., էջ 143):

<sup>157</sup> Հայ հոգևորականների վարձատրության մասով այս տեղեկությունը կարիք ունի սրբագրման: Ըստ Յովսէփ Ջուղայեցու՝ Նադիր շահը «իրամայեաց տալ մեզ հարիւր թուման, որ է վեցհարիւր դրամ ոսկի, և ուրախութեամբ արձակեաց զմեզ» (տես Սիրոզյան Յ., նշվ. աշխ., էջ 92): Կարծում ենք, Յովսէփ Ջուղայեցու հաղորդումն առավել հավաստի է:

**ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵԻՆՆԻՆԳԵՐՈՐԴ  
ՎԱՍՆ ՆԱԴԻՐ ՇԱՀԻՆ ԷԼՋԻ ԱՂԱՐԿԵԼՈՅՆ  
ԱՌ ՕՍՄԱՆՑԻՆ ԵՒ ԸՆԴ ՆՈՍԻՆ ՀԱՇՏԵԼՆ**

(44ա) Թիւն 1744-ուան Նադիր շահն մին էլչի ԲՌ (2000) արամբբ աղարկում է խօնթքարին<sup>158</sup>, և բազում պատուական ընծայիւք, և կամ[են]ում է հաշտելն ընդ նոսա, որ և էլչին գնում է Ստամբոլ: Օսմանցուն թագաւորն էլչուն սիրով ընկալնում է, և էլչուն ինամդէի գանձ է բաշխում<sup>159</sup>, և Նադիրին հետ նամակաւ իւրեանց ընդ միմեանս հաշտում են<sup>160</sup>:

Նոյնպէս և մին էլչի էլ աղարկում է Ռուստաց երկիրն՝ բազում ընծայիւք, ի նշան սիրոյ<sup>161</sup>:

Բայց ինքն՝ Նադէր շահ, միտքն իւր ծռում է, կամենում է գնալ Խորասան և անդի Քալաթն: Եւ սկսում է երկրին ժողովըրդեանն բազում նեղութիւն տալն, և այլ, և այլ պատճառանօք երկրին հարուստք մարդկանց փող է հաւալայ տալիս անողորմ պահանջութեամբ: Ոմանք ունենալով՝ ակամայ մեծիւ հառաչանօք տալիս ան, ոմանք չունենալով՝ փայտի ներք[ոյ] հարկանելով բազում մարդիք մեռանում են, և բազումք փա-

<sup>158</sup> Ըստ թուրք պատմագիր Սուբհիի՝ Նադիր շահի պատգամավորությունը կազմւած էր 3000 հոգուց՝ Յաջի-խանի ղեկավարությամբ, և իր հետ բերել էր 10 փիղ և մեծաքանակ թանկագին նվերներ (տես՝ Թուրքական աղբյուրները..., հ. Ա, էջ 177):

<sup>159</sup> Ըստ թուրք պատմագիր Սուլեյման Իզզիի՝ «Իրանի ղեսպանին, բացի բազմաթիւ և թանկագին նվերներից ու նախապես տրված հինգ քիսե դրամից, դարձյալ 30 քիսե, իսկ նրա մարդկանց՝ 6 քիսե է նվիրվում» (տես՝ Թուրքական աղբյուրները..., հ. Ա, էջ 193):

<sup>160</sup> Թուրք-իրանական 1743–1746 թթ. պատերազմն ավարտվեց 1746 թ. սեպտեմբերի 4-ի հաշտության դաշնագրով, որով վերահաստատվեցին Կասր-ե Շիրիհի 1639 թ. պայմանագրի սահմանները (տես՝ Թուրքական աղբյուրները..., հ. Ա, էջ 196–197):

<sup>161</sup> Նադիր շահը 1740 թ. թանկարժեք նվերներով բեռնված մի բազմամարդ պատվիրակություն է ուղարկել Ռուսաստան Սայրար և Յուսեին խաների գլխավորությամբ: Սայրար խանը Ղզլարում վախճանվել է, իսկ Յուսեին խանը Աստրախանի վրայով մեկնել է Պետերբուրգ և արժանացել թագուհու ընդունելությանը (տես՝ Յանուէ, նշվ. աշխ., էջ 140):

խըստական են լինում, գնում են այլ թաղաւորի երկիր, անդ բնակում են<sup>162</sup>:

Եւ այսպէս, զզլբաշի երկիրն աւիրվեցաւ, մանաւանդ մեր քրիստոնեայքն ամենայնէ զրկեցանք, բայց Աստուած պահեաց զուղղափառ հաւատս մեր և Սուրբ զեկեղեցիս, որում փառք յաւիտեանս. ամէն:

**ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ  
ՎԱՍՆ ՇԱՀ ՆԱԴԻՐԻՆ ԽՈՐԱՍԱՆ ԳՆԱԼՆ  
ԵՒ ՉԱՐԱՉԱՐ ՍՊԱՆՎԵԼՆ**

Թիւն 1747-ումն Նադիր շահն չար խորհրդով, հանդերձ զօրօք իւրովք, վեր է կենում, որ գնայ խորասան և տեղէն Քալաթն և կամենում է, որ զզլբաշի երկիրն իսպառ նուազեցուցանի: Ամենայն գաւառաց և քաղաքաց մեծ փող է ձգում, որ անկարելի լինի տալն, և երկրին խանէրին հրաման է գրում, թէ էա փողէրն ով ոք կուտայ՝ բարի է, առնէ՛ք, հասուցէ՛ք խաղինէն, և ով ոք որ կարող չի տալն՝ իւրն աղարկէ՛ք դայ խորասան և Քալաթ: Վասն որոյ երկրին խանէրն և ժողովուրդքն տեսին, որ այնքան բազում և անհամար գանձ տալն անկարելի է, ուրեմն բազում մարդիք ի ներքոյ փայտի հարկանմամբ կը մեռանեն: Շատ քաղաքացիք, անյոյս մնալով, տարակուսեալ մտածեցին այսպէս, թէ՛ որովհետև մեռանելոցք եմք, ընդդիմաբար պատասխանի են տալիս (44բ) և ապստամբում են Նադիրիցն:

Նադիր շահն զօրօք իւրովք գնում է, Մաշատայ Բ (2) աւուր ճանապարհ հեռու նստում է: Եւ իւրեան ԺԲԻ (12.000)

<sup>162</sup> Սկզբնաղբյուրները միաբերան վկայում են, որ հարկերի կտրուկ բարձրացում է նկատվում հատկապես Նադիր շահի կառավարման վերջին տարիներին: Ըստ 1745 թ. գրված մի հիշատակարանի՝ «Յոյժ նուագեաց ազգս Յայոց վասն հարկապահանջութեան սորա, և բնաւք ոչ մնաց գիւղ, գաւառք, և ոչ ապրանք, և զամենեսեան ցրուցան եղեալ, մակ ոչ մնաց վանք և յանապատ վասն ևս հարկապահանջութեան» (տես «Արարատ», 1888, թիւ Ա, էջ 32-33):

հաւատարիմ մարդիկը ունէր զզլբաշ, որ գիշերն ԶՌ (6000)-քն իւր վրանի բոլորն կու սպասին, և շահն ինքն միշտ իւր վրանումն ապահով գոլով կայր միշտ:

Եւ Նազիրն Ահմադ խան աղուանին<sup>163</sup> պատուէր է տալիս, աղարկում է, որ գնայ Քաբուլն՝ ԾՌ (50.000) աղուան զօշուն հաստատի, ինչ ժամանակ որ հրաման առի՝ վեր առնու գայ, ևս ասում է.

«Հնգստանայ խազինէն որ կու գայ՝ վերուս տաս նոր ժողոված աղուանի զօրացն տօնլուղ»:

Եւ յետ այսորիկ Նազիր շահն ի դաղտ կանչում է աղուանի և օգրեգի խանէրին, ասում է.

«Իմ հաւատարիմքն դո՛ւք էք, գնացէ՛ք, ձեր պատրաստութիւն տեսէ՛ք, վաղն առաւօտուն, որ դեռ լուսն բացվել չլինի՝ իմ համիշայ՝ քէշիկ՝՝ զզլբաշն կոտորեցէ՛ք, այլևս զզլբաշն ինձ պիտոյ չէ»<sup>164</sup>:

Որ և այսու բանիւ աղուան և օգրէգքն գնում էն, իւրեանց պատրաստութիւնն տեսանում, որ վաղն կատարեսցեն զհրաման թագաւորին: Բայց զխորհուրդս զայս ոմն ներքինի Նազէր շահին իմանում է և մթանալ երեկոյին զայս ներքինիս գաղտապէս գալիս է դուրս, զզլբաշի խանէրին ասում է, թէ.

«Ձեր հոգսն արարէք, որ մինչև ի լուսանալ առաւօտուն կենդանի չէք մնալոց, այլ սպանանիլոց էք»:

<sup>163</sup> Խոսքը Աֆղանստանի ապագա շահ Ահմեդ Դուրրամիի մասին է, որն այդ ժամանակ գլխավորում էր իրանական բանակի աֆղանական հեծելազորը:

\* Համիշայ – միշտ, մշտական:

\*\* քէշիկ – թիկնագոր, պահակագոր:

<sup>164</sup> Այս տեղեկությունը հաստատում է նաև Ջ. Հանվելը: Սակայն, մեզ թվում է, որ Նազիր շահն իր դեմ կազմակերպվող դավադրություն էր կանխագուս: Նման մտադրության մասին մի ակնարկ կա նաև Հանվելի երկում. «Ալի Դուլի խանն (ապագա Աղիլ շահը – Ա. Մ.) խոստովան լինէր, թէ ինքն կամակից էր սպանման հորեղբոր իւրոյ, և ասեմ, թէ ինքն ևս առաքեալ էր զայդ մի ի կողմանէ իւրմէ, դիտաւօրութեամբ սպանանելոյ գնա, ուրեմն հարկաւորապէս մեռանելոց էր նա, թէև սրածութիւնն լինէր պատճառ, ուստի կարելի է, թէ Նատիրն արդէն զգայր զդիտաւորութիւն եղբոր որդւոյն իւրոյ և կասկածանաց անտի խորհէր առնել զսրածութիւն» (տե՛ս Հանուէ, Եշվ. աշխ., էջ 173):

Որ և այս խորհուրդն ի ընկալնուլն թագաւորական վրանին դուրսն եղեալք անձինք ոմանք՝ Հազարապետք և խանէրն, խորհելով՝ ասում են ընդ միմեանս, թէ.

«Որովհետև մեք մեռանելոց եմք, եթէ Աստուած կու կամենայ՝ մեք սորայ գիշերս կու սպանեմք»:

Որ և տուեալ զհասկանութիւն ընդ միմեանս՝ կեսգիշերին յայնմիկ եօթն հոգիք պատրաստուում են, գնում մտանում չադիրին մեջն: Հանկարծակի մին ներքինի և մին աղախին վրանիցն դուրս են գալիս, հարցանում են, այսինքն, թէ՛ դուք ո՞վ էք, սոքա վաղվաղակի սպանում են նոցա:

Նադէր շահն, այս ձայնս ի յականջն ընկանելով՝ դուրս է գալիս տեսանէ, թէ ինչ խաբար է, մին թուրով հարկանում են Նադէր շահին: Եւ Նադէր շահն վազում է, որ գէնն վեր առնու, դուրս գայ, մութն (45ա) գիշեր այ լինում, ոտն ընկանում է չադիրին չլանի մեջն, վեր է ընկանում: Յայնժամ մեկ թուրով էլ տալիս ան, կարում չե ևս վեր կենալ, մին էլ վեր է ընկանում և խողխողեալ սպանում են զնա ի տեղին յայնմիկ<sup>165</sup>:

Եւ ի լուսանալ առաւօտուն օղբէկք և աղուանքն գալիս ան տեսնում, որ թագաւորին սպանել են, և զզլբաշն բոլոր իւրեանց զինուքն կան ի պատրաստի: Որ և սոյն աղուանք և օղբէկքն յետս ան դառնում օրդուն, ուրտեղ որ կարողանում են, թալանելով գնում են իւրաքանչիւր [իւրեանց] երկիրն: Եւ զզլբաշի զօշունն էլ համէն թիրայ՝ յետ է դառնում, գնում են իւրեան երկիրն: Եւ Նադէր շահին տանում են Մաշադն, անդ թաղում են:

Եւ Նադէրին եխաօր որդի Ալլահդուլի խանն Սիստան գոլով լսում է, որ Նադէր շահին սպանեցին, բաղում զօրօք գալիս է Մաշադն: Եւ Մաշադու զօրքն ժողովում են, Ալլահդուլի խա-

<sup>165</sup> Նադիր շահը դավադրաբար սպանվել է 1747 թ. հունիսի 20-ին, խորասանում (այդ մասին տես նաև Համուե, Աշվ. աշխ., էջ 172):

• Թիրա – ցեղ:

նին թագաւոր են կարգում և անուան կոչում են Ադէլ շահ<sup>166</sup>։  
Եւ այս Ադէլ շահս բազում զօրս է առաքում, գնում են Քա-  
լաթն, ներս են մտանում և անդ եղեալ ի պահեստի բազում և  
անհամար գանձան Նադէրին տիրում են։ Եւ Նադէրին որդի  
Նասիրօլայ Միրզէն փախստական է լինում, բռնում են, աղար-  
կում ան Ադէլ շահին ղուլուղն և անդ զնա սպանում են։

Եւ Ադէլ շահն զփոքր եղբայրն իւր ոչ բազում զօրօք  
կարգում է աղարկում, որ և գնում է Սպահան նստում է, մինչև  
ինքն էլ գնայ։ Որ և այս փոքր եղբայր Իբրահիմ Միրզէն հրա-  
մանաւ եղբոր իւրոյ Սպահան քաղաքումն նստում է։ Եւ Ադէլ  
շահն զզլբաշի ամենայն երկիրն գիր է աղարկում և երեք տա-  
րուան երկրին հարկն և ամենայն խարջն բաշխում է։

### ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՒԵՕԹՆԵՐՈՐԴ ՎԱՍՆ ԱԴԷԼ ՇԱՀԻՆ ՂԱԶՎԻՆ ԳՆԱԼՆ ԵՒ ԻԲՐԱՀԻՄ ՄԻՐԶԻՑՆ ԿՈՏՐՎԵԼՆ

Ադէլ շահն, որ Մաշատումն թագաւոր է, իւրն ոմն վրացի  
ծառայ է ունենում՝ Զօրապ խան անուամբ, իւրեան վէզիր է  
չինում։ Եւ բազում զօրօք վեր է կենում, որ գնայ Ղազվին՝  
լսում է, (45թ) որ Սպահան մեկ երկու խան իւր եղբօրն վաղ  
խրատ ան տալիս և վատ ճանապարհ ան ցոյց տալման։ Իւր վէ-  
զիրն, որ է Զօրապ խանին աղարկում է, որ գնայ Սպահան՝  
նոյն խաներն ըմբռնիցէ, մինչև ինքն էլ գնայ։

Ամիր Ասլան խանն<sup>167</sup> թարվէզ լսում է, որ Ադէլ շահն  
թագաւորվէլ այ, և Զօրապ խանին իւրան վէզիր է կարգել։  
Վասն որոյ նախանձեցաւ ի նախանձս չարութեան՝ ասելով,  
թէ՝ ես մեծ զօրապետ և նախարար լինեմ, գնայցեմ միոյ վրա-

<sup>166</sup> Ալի-Ղուլի խանը շահ է հռչակվել 1747 թ. հուլիսի 6-ին Սեշեդում և ընդունել Ադիլ շահ («արդարադատ») անունը։

<sup>167</sup> Ամիր Ասլան խան – Նադիր շահը 1738 թ. Երան Եշանակել էր Ատրպատակա-  
ցի կառավարիչ։ Գետազայում Ադիլ շահը վերահաստատել է Երան այդ պաշտո-  
նում (Միրզա Յուսուֆ Ներսեսով, ճշմարտացի պատմություն, Ե., 2000, էջ 48)։

ցու գլուխս խոնարհեցուցանեմ: Վասն որոյ Թարվիզու գիր է գրում Իբրահիմ Միրզէ, թէ. «Դու Սպահանայ եկ, ես էլ Թարվիզու իմ զօրօքն կու գամ Ղազվին, Ադէլ շահին կու բռնեմ, կտամ քոյ ձեռն»:

Եւ Սպահան Իբրահիմ Միրզէն Զօրապ խանին կոչում է և հրամայում է՝ սպանում ան զնա<sup>168</sup>, և իւր պատրաստութիւնն տեսման է, փոքր զօրօք գալիս է Ղազվին: Եւ Ամիր Ասլան խանն Իեֆ (25.000) զօրօք թէ ղզլբաշ կամ աղուանօք, իւր հետ պերում է, Իբրահիմ Միրզէ օգնում է: Որ և Ադէլ շահին և Իբրահիմ Միրզէ զօրքն ընդ միմեանս պատերազմում են, բայց Ադէլ շահին զօրքն հախթվում են, և ինքն փախչում է, բայց բռնում են<sup>169</sup>: Որ և փոքր եղբայրն զօրութիւն է ստանում և ինքն թագաւորվում է<sup>170</sup>, իւր զօր[օ]քն գնում է Ղազվին նըստում է:

Եւ թիւն 1749-ումն Իբրահիմ շահն կամենում է, որ գնայ Մաշադն: Շա[հ]ուլի Միրզէն<sup>171</sup>, որ Նադէր շահին թոռն է,

<sup>168</sup> Իբրահիմ Միրզայի հրամանով Ձոհրաք խանը բաղնիքում լողանալու ժամանակ մորթագերծ է արվել (տես Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, Ե., 2005, էջ 384):

<sup>169</sup> Ադիլ շահի և Իբրահիմ Միրզայի զորքերի միջև զլխավոր ճակատամարտը տեղի է ունեցել Սուլթանիեի և Ձեմշամի միջև ընկած Սաման-արխ վայրում: Ճակատամարտում Ադիլ շահը պարտվել է և փախել Թեհրան, որտեղ ընկել է Իբրահիմ Միրզայի մարդկանց ձեռքը: Շուտով եղբոր՝ Իբրահիմ Միրզայի հրամանով նա կուրացվել է (տես Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, էջ 384):

<sup>170</sup> Իբրահիմ Միրզան շահ է հռչակվել 1748 թ. դեկտեմբերի 8-ին և սկսել իր անունով դրամ հատել (տես Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, էջ 384):

<sup>171</sup> Շահուլի Միրզա – հանդիսանում էր երկու դինաստիաների՝ Սեֆյան և Աֆշար շահերի թոռը: 1749 թ. գահընկեց է արել Իբրահիմ շահին: 1749 թ. դեկտեմբերին Խորասանում Շահուլիի դեմ խռովություն է բարձրացրել Մեշհեդ քաղաքի շիա հոգևորականությունը, որը նրան հայտարարել է այլակրոն ու Նադիրի քաղաքականության հետևորդ, և առաջ քաշել գահի իր թեկնածուին՝ Միրզա Սեյիդ Մուհամմադին (Միր-Սեյիդ), որը տապալել է Շահուլիին և կուրացրել: Սակայն, 1750 թ. հունվարի 14-ին զորավար Յուսուֆ Ալի խան Ջալայիրին իր հերթին գահընկեց է արել նրան և գահի վրա վերականգնել Շահուլիին: Վերջինիս կառավարումը Խորասանում ընդմիջումներով շարունակվել է մինչև 1796 թ.: 1754 և 1770 թթ. նա ստիպված էր իրեն ծանաչել որպես Աֆղանստանի Ահմեդ շահ Դուրրանիի վասալ: Վախճանվել է 1796 թ. (տես Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, էջ 385-387, Шабани Р., указ. соч., с. 209):

Մաշատէն դուրս են գալիս՝ հանդերձ զօրօք, ընդ Իբրահիմ շահին կռվում են: Որ և այս Իբրահիմիս զզլբաշք զօրքն դօնմիշ ան լինում, Իբրահիմ շահին բռնում են, տալիս են Շա[հ]ռուխին<sup>172</sup>: Եւ երկու ղօշունն միաւորվում են, և Շա[հ]ռուխին թագաւոր են դնում, և ի միասին Շա[հ]ռուխ շահիս վեր են առնում, գնում են Մաշատն:

Այնուհետև Սպահան մնում է առանց թագաւորի, բայց Միր Հասան խանին ձեռնումն: Յետոյ քաղաքականքն Միր Հասան խանին էլ ան սպանում, և Սպահան մնում է առանց զօրաց և առանց խանի:

**ԳԼՈՒԽ ՔՍԱՆՈՒԹՆԵՐՈՐԴ**  
**(46ա) ՎԱՍՆ ՄԱՇԱՏԻՆ ՄՈՒԹԱՎԱԼՈՒՆ,**  
**ՈՐ Ի ՊԱՏՃԱՌԷ ՍՈՐԱՅ**  
**ՇԱՀՌՈՒԽ ՇԱՀԻՆ ԱԶՔԻՆ ՀԱՆՈՒՄ ԵՆ**

Թիւն 1750-ումն Մաշադին մութավալին, որ ղուլում Ռեզային<sup>173</sup> սպասաւոր է, սայ քաղաքին ժողովրդաց հետ խորհուրդ է անում, և այսու միաբանութեամբ Շա[հ]ռուխ շահին բռնում են, աչկերն հանում են: Այս մութավալուս մականումբ Հալիմխոր կասեն: Եւ Շա[հ]ռուխն մին տան միջում իւր քանի սպասաւորօքն մնում է առանց օգնականի:

Միր Ալամ խանն ի հեռաստանէ լսում է այս լուրս, թիւն 1751-ումն գալիս է Մաշատն, Հալիմխոր մութավալուն բռնում է, սպանում է: Եւ Շա[հ]ռուխ շահին դուրս է բերում, այլևս թագաւոր է շինում. թէպէտ աչկ ոչ ունի, զի տեսանիցէ, բայց

<sup>172</sup> Իբրահիմ շահը 1749 թ. դեկտեմբերին Ղալափուր ամրոցում ձերբակալվել է և հանձնվել Շահռուխի մարդկանց, որոնք նրան գլխատել են (տե՛ս Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, էջ 385):

<sup>173</sup> Խոսքը իմամ Ռեզայի դամբարանի մասին է:

ունի երկուս որդիս<sup>174</sup>: Որ և այս Շա[հ]ուռլիս ղզլբաշի թագա-  
ւորին դատերիցն է ծնած, որ Նադէր շահն իւր մեծ որդի Ռզայ-  
Ղուլի Միրզին էր տված, և միայն Մաշադն իւր գաւառօքն սո-  
րայ ձեռին էր:

Դարձեալ Ահմադ խանին, որ Նադէր շահն յուղարկեալ էր  
Քարուլն՝ այսու հրամանաւ, որ անդ ԾՌ (50.000) զօրք աղ-  
ուանաց ժողովիցէ ռոճկօք: Որ և սայ Քարուլումն գոլով պատ-  
րաս[տ] զօրօք իւրովք լսում է, որ Նադէր շահին սպանեցին,  
սա ևս անդ թագաւորվում է<sup>175</sup>: Բազում զօրօք գնում է Հնդս-  
տան<sup>176</sup>, քանի քաղաք է առման և բազում գանձ, իրք և խաղի-  
նայ տիրում, յինք առնում, յետ է դառնում, գալիս է Մաշատն  
ևս է առնում, և Միր Ալամ խանին սպանում է: Եւ կրկին Մա-  
շատին բերթն իւր գաւառօքն բաշխում է Շա[հ]ուռլիս շահին, և  
հազար զօրս աղուանից վեր է դնում Շա[հ]ուռլիս համար,  
վասն օգնական և ապահով պահելոյ զնա, և ինքն յէտ է  
գնում: Եւ այս սորայ օգնելոյ պատճառն այս է, զի Շա[հ]ուռլիս  
շահն իւր թագաւորին թոռն է<sup>177</sup>:

<sup>174</sup> Շահուլիը 1760-ական թթ. կեսերից իշխանությունը բաժանում էր իր որդի-  
ների՝ Նադիր Միրզայի և Նասերուլլահ Միրզայի հետ: Նրա մահից հետո խորա-  
սանի իշխանությունն անցել է Նադիր Միրզային, որը 1803 թ. սպանվել է Ֆաթա-  
լի շահ Ղաջարի (1797–1834) կողմից (տե՛ս Шабани Р., указ. соч., с. 209-210):

<sup>175</sup> Ահմեդ խանը թագադրությունից հետո ստացել է Ահմեդ շահ Դուրրանի  
(1747–1773) անունը: Նա 1747 թ. Աֆղանստանը հայտարարեց Իրանից այլևս  
կախում չունեցող առանձին պետություն և հիմք դրեց անկախ աֆղանական  
պետության գոյությանը՝ Ղանդահար մայրաքաղաքով: Կատարել է հաջող ար-  
շավանքներ դեպի Չնդկաստան, Իրան և Հարավային Թուրքեստան (նրա մասին  
տե՛ս Мир Гулам Мухаммед Губар, Ахмед шах – основатель афганского госу-  
дарства, М., 1959; Рейснер И., Возникновение и распад Дурранийской держа-  
вы, «Очерки по новой истории стран Среднего Востока», М., 1951):

<sup>176</sup> Ահմեդ շահ Դուրրանիի դեպի Չնդկաստան կատարած արշավանքների մա-  
սին տե՛ս Рейснер И., Развитие феодализма и образование государства у аф-  
ганцев, с. 367-386; Синха Н., Банерджи А., указ. соч., с. 279-280.

<sup>177</sup> Ոչ մի կերպ չի կարելի համաձայնվել հեղինակի այս պարզունակ մեկնաբա-  
նության հետ: Իրականում Ահմեդ շահ Դուրրանին իրենից վասալական կախ-  
ման մեջ էր գցել Շահուլիսին:

**ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՒԻՆՆԵՐՈՐԴ  
ՎԱՍՆ ՔԱՐԻՄ ԽԱՆԻՆ ԶԱՆԴ,  
ՈՐ ԳԱԼԻՍ Է ԵՒ ՍՊԱՀԱՆ ՏԻՐՈՒՄ Է**

(46բ) Թիւն 1752-ումն Քէրիմ խանս այս և Ալի Մարդան խանն<sup>178</sup> ի միասին, զօրօք հանդերձ գալիս են Սպահանու քաղաքն պաշարում են: Եւ Սպահան քանի խանէր ան լինում, փոքր զօրօք գնում են ընդդէմ նոցա, դաշտումն կռիւ են անում, Սպահանու խանէրն փախչում են: Քէրիմ խանն իւր զօրօքն մտանում է, Սպահանայ քաղաքն տիրում է:

Թիւն 1753-ումն աղուան Ազատ խանն Թարվէզ գուլով ընդ եօթն հազար աղուան զօրօք, որ յետ Նադէր շահին Թարվէզ զաֆտում է և տեղն մնում է, ևս զզլբաշից էլ նոքար է վարձում, և զօրովիւն է ըստաման և Թագաւոր է դառնում<sup>179</sup>: Եւ բազում զօրք է պատրաստում՝ որն աղուան, որն զզլբաշ և որն վրացի ազգից, գնում է Սպահանու վերայ: Բայց Քէրիմ խանն, զօրս փոքր ունենալով, պատերազմում են ընդ միմեանս՝ Քէրիմ խանին զօրքն յաղթվում է, կոտրվում և փախչում են: Ազատ խանն Սպահանու քաղաքն առնում է, և բազում գանձ է պահանջում յինք առման: Եւ Քէրիմ խանն կրկին գնում է Շիրազ, բազում մարդիկք զօրք է վեր առնում, գալիս

<sup>178</sup> Բախտիարական ցեղերի առաջնորդ Ալի Մարդան խանը գահակալական պայքարում 1753 թ. սպանվեց Քերիմ խան Ձենդի կողմից, որը դարձավ Իրանի փաստացի տիրակալը (տես **Иванов М.**, Очерк истории Ирана, М., 1952, с. 107):

<sup>179</sup> Ֆրանսիացի հեղինակ Մ. դե Պեյսոնելը այդ մասին գրում է. «Աֆղանները օրեցօր դառնում էին ավելի անտամելի: Նրանց գեներալը՝ Ազատը, տիրացել էր Ուրմիայի ամրոցին՝ այնտեղ իր համար մի պատսպարան պատրաստելու համար: Նա 1752 թ. հունվարին տիրում է նաև Թավրիզին: Նույնիսկ հավատացնում են, թե նա Ադրբեջանի թագավորի կոչում է ստանում՝ օրինակ վերցնելով Էմիր-Արսլան խանից, որն իրենից առաջ նույն ձևով էր վարվել» (տես **Զուլայան Մ.**, Հայ ժողովրդի XIII–XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գիրք Ա, Ե., 1990, էջ 328):

է 1754-ու մն Ազատ խանին հետ պատերազմում է, Ազատ խանին զօրացն հաղթում է՝ փախչում են, զնում են Թարվէզ<sup>180</sup>:

Քէրիմ խանն կրկին Սպահանայ քաղաքն տիրում է, և քաղաքին բոլոր ժողովրդացն բազում յոյս է տալիս, և քաղաքն լաւ պահում է, մանաւանդ ողորմելի ազգին հայոց խըղջում է, որ և բոլոր Սպահանու ժողովուրդքն մնում են հանգիստ: Որ և այս Քէրիմ խանն շատ խոհեմ, քաղաքավար, բարի և ողորմած մարդ գոլով՝ ղզլբաշին երկրի իւր տէրութեանն ներքոյ եղելոցն երեք տարուան երկրին թագաւորական հարկն բաշխում է: Մանաւանդ ևս ողորմութիւն է անում երկրին գեղորայքն, որքան որ քանդվել է կամ մարդիքն փախստական են լինում՝ թագաւորական գանձից տալիս է, որ գեղարէքն շինեն: Եւ մարդկանցն գեղացւոց՝ իւրաքանչիւր ըստ արժանեաց իւրոց եզն, կով, ոչխար և ցորեան է տալիս, որ գնան գեղարէքն շինութիւն դձեն և վարուցանք առեն: Եւ քանի տարի գեղարէնքիցն ոչինչ խարջ չե յինք առնում: Որ և այսպիսի շնորհ առնելով՝ երկրին գաւառօքն և գեղօրիւքն շինութիւն եղև և ժողովուրդքն հարուստացան:

(47ա) Եւ այնպիսի սիրեաց և պատուեաց զժողովուրդան, մինչ զի սպասաւորք թագաւորին ոչ կարեն ոչ ինչ իւրիք զրկել կամ նեղել զժողովուրդան, այլ որ երկրին ռահաթն խանին ծառայեացն պատահմամբ կու հարկանէին, քանզի այնչափ սիրեաց և պատուեաց զնոսայ:

Եւ ինքեանք՝ ժողովուրդքն, ևս յոյժ սիրեցին և ընդունեցին Քէրիմ խանին այնքան, որ բազում մարդիք նամազ անելիս յերկար կեանս խնդրէին Աստուածանէ վասն խանին:

Եւ Քէրիմ խանն ինքն հրաման արար ընդ ամենայն տէրութիւն իւր, որ իւր տիրուլն, այսինքն՝ մեծութեան անունն

<sup>180</sup> Սեկ տարի տևած պայքարից հետո՝ 1754 թ., Ազատ խանը հարկադրված էր զենքը վայր դնել և հանձնվել Քերիմ խանին (տես Բայբուրդյան Վ., Սշվ. աշխ., էջ 388):

կոչեն թագաւորին վէքիլ<sup>181</sup>, որ է թագաւորին քօլ ախտիարէ :  
Եւ որչափ որ զգլբաշի երկրնոցէն խարաբ ին ելէլ՝ այլև շինու-  
թիւն ձգեաց և իւրն բազում զօրս ժողովեաց, և բազումք եկին  
առ ի ծառայել նմայ :

Եւ այսպէս, բազում զօրութիւն ստացեալ կառավարէ և  
կեայ խաղաղութեամբ : Որ և այս Քէրիմ խանս Նադէր շահին  
նօքարն էր, որ իւր առաջևն փայտն ձեռին կու կանգնէր կամ  
ջլավումն\*\* կսպասէր և էշիկաղասի կու կոչիւր : Որ և այս  
պատմութիւնքս համառօտաբար յաղագս իմանալոյ գրեցաք,  
որքան գտանեցաւ ի Ֆռանկաց պատմագրքում :

## ՎԵՐՋ

---

<sup>181</sup> Քերիմ խանը երկարատև գահակալական կռիվներից հետո իրեն ենթարկեց  
գրեթե ողջ Իրանը և 1761–1779 թթ. իշխեց վեքիլ (լիազոր) հորջորջմամբ :

\* Քօլ ախտիար – լիազոր, փոխամորդ :

\*\* Ջլավ – առջև :

# ՎԱՍԻԼԻ ԲՐԱՏԻՇՉԵԻ

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ  
ԱՆՑԻՑՆ ԱՆՑԵԼՈՑ Ի ՄԷՁ  
ՇԱՀ ՆԱԴԻՐԱՅ ԵՒ ԱԻԱԳ ՈՐԴԻՈՅ ՆՈՐԻՆ  
ՌԶԱ-ՂՈՒԼԻ ՄԻՐՁԻՆ  
ՏՐՏՄԱԼԻ ՊԱՏԱՀՄԱՆՑ  
Ի ՅԵՐԿՐԻՆ ՊԱՐՍԻՑ  
ՅԱՄՍ 1741 ԵՒ 1742

Յամի 1778 թարգմանեցեալ ի բարբառս Հայոց  
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԴԱԻԹԵՆԻԻ ԶՈՒՂԱՅԵՑԻՈՅ



## (48բ) ԱՌ ԸՆԹԵՐՑԱՍԷՐՍ

Բազումք ի յայլասեռ հեղինակաց տքնին, զի ի զանազան լեզուս ի լոյս ածիցեն զճառս պատմաբանականս յաղագս գործոց և անցիցն անցելոց արքային պարսից Նազիր շահի, սակայն որովհետև այնքան հեռաւորագոյն բացակացութեան գոլով կողմունսն Պարսկաստանայ, և շուրջ ամենայնի աշխատանօք շարադրողքն զայնս հարկադրեն և աշխատ առնեն զինքեանս սակս արժանաւոր յիշատակի ճառեցմանէն հռչակաւոր առնս այսորիկ, բայց ես ինքնին գոլով անդ և լինելով ի բնիկ յերկիրն Պարսից և ունելով զբաւական յարմար և զդիպուկ ժամանակս իմանալ հաւաստի յաղագս կացութեանց և որպիսութեանցն տեղոյն յայնորիկ, վասն որոյ ոչ կամեցայ լռել, այլ պարտականութիւն համարեցի ինձ ծառայել հասարակութեան:

Արդ, նախայայտ արարից այժմ, զի սոյն ասիացի այրս քաջայաղթ ի յառաջներորդ կիսոյ յայսմ դարու սկսաւ ցուցանել զփառս և զհռչակաւորութիւնս իւր այնքան և այնպէս, մինչ զի ընդ ժամանակս ժամանակս ամենայն հնարիւք, այսինքն՝ ի միում կողմանէ յաղթագոր բռնութեամբ, հետայոյզ պարփակմամբ և շուտափոյթ շարժողութեամբ, և ի միուսում կողմանէ քաղաքավար և քաջահնար գործովք և արիաբար հետևողութեամբ վերականգնեաց զհայրենին իւր և նստաւ յաթոռ իշխանութեան, զաղուանս նուաճեաց, յաղթեաց նաև զթագաւորն հնդկաց, որպէս առաջիկայ գրեցելոցս համառօտաբար ցուցանի: Իսկ ես յառաջին նուագիս նախաժաման եղէ, զի կարացից յաղագս լայնատարած և ընդարձակ պատմութեանցն նորա միայն զգողբալի գործսն նորայ, զորս ինչ առ որդին իւր անցիցն լիագոյն ասացուածովք և առ նոյնն պատկանեցեալ որպիսութեամբքն առ ի բաւականութիւն ընթերցա-

սիրացոյ յայտնի առնել, քանզի ի բազմաժամանակեայ լինելութեան իմում ի յերկրին Իրանայ, նաևս առաւել գոլով իմ դրունսն արքունական Նազիր շահին աստիճանաւ Ռուստաց կայսերական դեսպանութեան, նաևս ոչ սակաւ, այլ ըստ չափու և կարողութեան իմոյ գիտելույս զլեզուս պարսից ունէի բարեգոյն և վայելուչ հնարս (49ա) պատկանաւոր ձեռամբ զանազան հաւատարմաց սակս զստուգութեան այնպիսի անցիցն անցելոց զհաւաստի որպիսութիւնսն ստանալ և հաստատել ի նոսա, նաևս յաղագս բազմաց ականատեսս ես իսկ լեալ:

Եւ ի աւարտիլ բանիցս մնամ առ քեզ, ո՛վ բարեմիտ ընթերցող, հանդերձ պատուով իմով.

Վասիլի Բրատիչչով

(50ա) Յորժամ շահ Նադիր արշալաստյր յաղթութեամբ էառ զանուանի քաղաքն աղուանից զՂանդազար, եդ ի մտի իւրում և ձգեաց զդիտաւորութիւն իւր առ ի դնալ զինու զօրութեամբ ի հնդիկս և յաղթել զնա, որ և ընդ առաջին պատահման թարց ամենայն աշխատանաց էառ և տիրապետեաց զքաղաքն Զէլիլաբաթ<sup>182</sup> ի սահմանս Հնդկաց:

Բայց ապա մտածեալ նորա սակս այնպիսի երևելի գործառ[ն]ութեանց և պատահմանցն որպիսութեանց ընդ կողմունս օտարս և հեռաւորագոյնս՝ յառաջադրեաց ի դատողութեան իւրում լինիլ յաջողութիւն, նաև զձախորդութիւն, և զսկսեալ արշաւումն ի վերայ օտար յերկրի ոչ կամեցաւ ի բաց դնել, ենթադատեաց բարեպետս լինիլ զերէց որդին իւր զՌզայ-Ղուլի Միրզա, առ որ յատկապէս ծնողական վառեալ գութս սիրոյ ունէր, օգտակարս գոլ համարեաց յանձնել ի ցեղս իւր զժառանգութիւն թագաւորութեանն երկրին Իրանայ, սակս կասկածանաց իւրոց յայսմիկ արշաւմանէ վնասուց, վասնզի յայնմ ժամանակի շահ Թա[հ]մազ ընդ դեռահասակ որդովքն իւրովք<sup>183</sup> ենթակնարկութեան պահապանաց տակաւին կենդանի էր՝ կարգադրելով հաստատեաց զորդին իւր զՌզայ-Ղուլի Միրզա ի տեղի իւր փոխանորդ և տեղակալ թագաւորութեանն Պարսից<sup>184</sup>, տալով նմա լիապէս բարձրագո[ւ]յն իշխանութիւն

<sup>182</sup> Պարսից բանակը Ջալալաբադ է մտել 1738 թ. հոկտեմբերին՝ անանց որևէ դիմադրության հանդիպելու (տե՛ս Кишмишев С., указ. соч., с. 164):

<sup>183</sup> Նադիրի կողմից գահընկեց արված շահ Թահմասպ II-ը իր դեռահասակ որդիների՝ Աբբաս III-ի և Իսմայիլի հետ արքայվել ու պահվում էր Սաբզդվար քաղաքում (տե՛ս Քյուչուք Արուսիմ, Պատմություն Թահմազ Դուլու, էջ 124):

<sup>184</sup> Նադիր շահն իր որդի Ոգա-Ղուլի Միրզային Իրանի փոխարքա է նշանակել 1738 թ. նոյեմբերի 7-ին (տե՛ս The Cambridge History of Iran, vol. 7. From Nadir Shah to the Islamic Republic, Cambridge, Cambridge University Press, 1991, p. 39):

կառաւարութեան, ի բաց Հանելով միանգամայն ի ժառանգութեանէն զհարազատ եղբայր իւր զԻբրահիմ խան<sup>185</sup>: Եւ յաղագս այսպիսիք գործառ[ն]ութեանց ինքն թաքուցանէր զանհանգստութիւն մտաց իւրոց՝ սակս հեռանալոյն իւրոյ ի պարսից և բացակացութեան: Եւ որպէսզի յայսմ պատահման դատաստանք և իրաւունք՝ արժանաւորաց պարզ և ամբարշտաց պատիժս, բաւականութիւնն զրկեցելոց և զայլ բարեգոյն կառավարութիւնքն ըստ կարգին և ըստ կանօնաց ի թագաւորութեանն լինիլ կարասցէին՝ հրատարակեաց և ծանոյց բոլոր երկրին հրովարտակօք: Եւ ընդ յանձնելոյն զիշխանութիւնն Պարսից (50թ) հօրէն առ զորդին թարց երկբայութեան տուեալ է նմա նաևս ծածուկ և յայտնի զոմանս պատուէրս լեզուաւ<sup>186</sup>:

Եւ յայպէս, ի յերկրորդ կիսոյ 1739 յամին երկարեաց շահ Նադիր զճանապարհորդութիւնն իւր հեռաւոր ի կողմանս Հնդկաց<sup>187</sup>, և Ռզա-Ղուլի Միրզա եկն ի աթոռանիստ քաղաքն Խօրասանու գաւառին ի Մաշադ և եմուտ անդ և կալաւ զկառաւարութիւնսն թագաւորական: Նախ և յառաջ ունեաց նա յոյժ հետեւողութիւն և փոյթ՝ սակս անթերի ժողովման զզանազան հարկսն թագաւորական, և սկսաւ յաւելուլ զնոսին զանազան պատճառանօք, և այնպէս մուտն եղև բազմաթիւ յոյժ ներկայ դրամոց, յայնժամ յաւել և ս նա արս պատերազմական ըստ մեծի մասին ձիաւորս՝ լիացուցանելով զնոսա առատապէս ամենայն իրօք հարկաւորօք, նաև յենեալ և ապաւինեալ զապահով կացութիւն իւր, քանզի տեսանէր յիշխանութեան իւրում, զի ի միում կողմանէ ամենայն աստիճանաւորք թագաւորութեան և

<sup>185</sup> Նադիր շահի եղբայր Իբրահիմ խանը Ատրպատականի փոխարքան էր, որը նստում էր Թավրիզ քաղաքում (տե՛ս Փափազյան Գ., Հայ-իրանական զինակցությունը 1726–1736 թթ. և Արևելյան Հայաստանի քաղաքական իրավիճակը Նադիր շահի օրոք, «Բանբեր Երևանի համալսարանի», 1972, N 2, էջ 81):

<sup>186</sup> Ըստ Քյուչուք Արուքինի՝ այդ «պատվերների» թվում էր և շահ Թահմասպ II-ի ու նրա ընտանիքի ոչնչացումը (տե՛ս Քյուչուք Արուքին, Պատմություն Թահմասպ Դուլու, էջ 127):

<sup>187</sup> Նադիր շահի արշավանքը դեպի Հնդկաստան սկսվել է 1738 թ. մայիսի 21-ին (տե՛ս Мухаммад-Казим, Поход Надир-шаха в Индию, с. 8):

բոլոր ժողովուրդք լռութեամբ ի հնազանդութիւն ինքեան կան, և ի միւսում կողմանէ անդադար և խորին մտածմամբ խոր[հ]էր իբր երկբայիւի լինիլ գոլ զվիճակ հօր իւրոյ զսկսումն պատերազմին ընդ հնդկաց Մօղօլին<sup>188</sup>, վասն որոյ կամեցաւ ի գործ ածել զհնարս առ ի անկասկած լինելոյ զիշխանութիւն թագաւորութեան իւրոյ:

---

<sup>188</sup> Սեծ Մողոլներ – Հնդկաստանի տիրակալների դինաստիա 1526–1858 թթ.: Օգտվելով Հյուսիսային Հնդկաստանի անկայուն վիճակից՝ Քաբուլի կառավարիչ Բաբուրը ներխուժել է այնտեղ և 1526 թ. հիմնել Սեծ Մողոլների պետությունը: Մողոլներ անվանումն առաջացել է Հյուսիսային Հնդկաստանի և Սիջին Ասիայի մահմեդականներին հնդիկների տված մուղալ անունից: Սեծ Մողոլներ անվանել են XVII դ. եվրոպացի ճանապարհորդները: XVII դ. Սեծ Մողոլների պետությունն իր մեջ ընդգրկել է ամբողջ Հնդկաստանը (բացի ծայր հարավից), այժմյան Աֆղանստանի տարածքի արևելյան մասը և Փենջաբը: Հզորության գագաթնակետին է հասել Շահ Ջահանի (1627–1658) ժամանակ: Նադիր շահի արշավանքի ժամանակ Հնդկաստանի տիրակալն էր Մուհամմեդ շահը: XVIII դ. կեսին տիրել են միայն Դելիին և նրա շրջակայքը: Ձևականորեն համարվել են Հնդկաստանի կառավարիչներ մինչև 1858-ը, երբ անգլիական գաղութային իշխանությունները վերացրին դինաստիան (նրանց մասին մանրամասն տես Синха Н., Банерджи А., указ. соч., с. 275-277; Паниккар К., указ. соч., с. 227-243; Бернье Ф., История последних политических переворотов в государстве Великого Могола, М.-Л., 1936; Антонова К., Очерки общественных отношений и политического строя Могольской Индии времен Акбара, М. 1952; Антонова К., Бонгард-Левин Г., Котовский Г., История Индии, М., 1979, с. 211-250; Гаскойн Б., Великие Моголы. Потомки Чингисхана и Тамерлана, М., 2010):

Արդ, գկեանք լինելութեան շահ Թա[Վ]մազին, որ իբր յա-  
ռաջ եկեալ իցէ ի Հնագոյն ցեղէն Սօֆիականէ<sup>189</sup>, ընդ որդ-  
ւոժքն իւրովք երեւէր ի յաչս նորա խոչընդակն և ընդ[ղ]իմա-  
կան նպատակ. այնքան և մինչև ցայն վայր ոչ հանդեաւ սիրտ  
նորա, մինչև ըստ հրովարտակի իւրոյ զպաբախտ շահ ԹաՎ-  
մազ ընդ որդովքն և ընդ յղի կանամբքն առաջի կիսոյ 1740  
յամին ի քաղաքոջն Սաւգիվար տմարդապէս և դազանաբար ոչ  
ես սպանանել զնոսա<sup>190</sup>: Եւ իսկոյն տարածեցաւ զլուր յայսմ  
սպանութեանց ընդ ամենայն Պարսկաստան և ոչ եղև այլ ինչ,  
եթէ ոչ զգալի աւաղումն աշխար[Վ]ումն և ի խորոց սրտէ հա-  
ռաչումն, և եղեն ամենեքեան ի խորին լուութեան, քանզի  
(51ա) բռնութեամբ տիրապետութիւնն շահ Նադիրայ և իշխա-  
նութիւն կառավարութեան որդւոյ նորին այնքան վիրավորեալ  
էր զսիրտս պարսից, զի գրեթէ խելացնորք էին լեալ և յայնմ  
ժամանակի որպէս ի քուն թմրութեան կային:

Իսկ մնացեալ էր մի միայն դուստր Սօֆիական ցեղէն, որ  
էր հարազատ քոյր շահ Թա[Վ]մազին և օրինաւոր կին Ռզա-  
Ղուլի Միրզին<sup>191</sup>, որ համբերեաց նեղութեանց և դառնութեանց  
մինչև ցապաբախտ խղճալի վախճան իւր, քանզի թէպէտ և  
որքան ի սմանէ զլուրն սպանութեանց եղբօրն և որդւոց նորա  
թաքուցեալք լինէին, սակայն էհաս համբաւն յականջս նորա,  
իսկ նա ի առաջին պատահման տեսութեան յետ այսու լրոյն ի  
հարճնարանի անդ անհամբեր դառնութեամբ, կսկծալի սրտիւ  
սկսաւ զանբաւականութիւնս իւր լալագին աչօք և հառաչ-  
մամբ սրտիւ ասել զայս.

<sup>189</sup> Ակատի ունի Իրանում 1502–1736 թթ. իշխած Սեֆյան արքայատոհմը, որն իր  
անվանումը ստացել է շիա մահմեդականների Սեֆևիյե աղանդի առաջնորդ  
շեյխ Սեֆի-էդ-Դիմի անունից: Սեֆյան թագավորական տոհմի հիմնադիրն էր  
շեյխ Սեֆիի սերունդից Իսմայիլ I-ը, որն իշխել է 1502–1524 թթ.: Հզորության գա-  
զաթնակետին է հասել Ծախ Աբբաս I-ի (1587–1629) օրոք: 1736 թ. Սադիր շահը  
վերացրել է Սեֆյան արքայատոհմի իշխանությունը:

<sup>190</sup> Արա սպանության մասին տես Քյուչուք Արուսիմ, նշվ. աշխ., էջ 127:

<sup>191</sup> Ոգա-Ղուլի Միրզայի կինը շահ Սուլթան Հուսեյնի դուստր Ֆաթիմա Սուլթան  
Բեգումն էր (տես՝ The Cambridge History of Iran, vol. 7. Genealogical Tables, p. 960):

«Շահ Թա[Ն]մազ՝ եղբայր իմ գոլով, ի սկեսրառնէ իմմէ զրկեցեալ յամենայն ժառանգութենէ Պարսից աթոռոյն<sup>102</sup> և բնակելով ի յաքսորս՝ ոչ արար ընդդիմութիւն կամ վնաս ինչ առ իշխանութիւն Իրանայ երկրին, գոնեա և ոչ արարողութիւն ինչ գործեաց առ ի պատճառս տալոյ կացուցման առ նախկին կացութիւնս իւր, այլ մանաւանդ թարց նենգութեան և տրտնջանաց ետ զբոլոր տիրապետութիւնն Պարսից ցՆաւիր, և ըստ կարգաւորութեան և ըստ կամաց հաճութեան զօրաւոր Տեառն՝ միայն զհարկաւոր սակս ապրուստի նորա ոսծիկօք նորին թարց տրտնջանաց ողորմելի միակեցութեամբ և անարգ յանկեան միում անցուցանէր զտառապեալ կեանս իւր, իսկ զայս զի՞նչ հարութիւն իցէ, զի՞նչ վազանաբարոյութիւն և որպիսի տմարդութիւն, որ բառնալ զկեանս նորա, որ սակս այնորիկ հրաժարեաց ի բոլոր թագաւորութեանէն, կորուսեալ զնա, որ զկորուսանելոյ որդւոցն ներեաց, մեռուցանել զնա՝, ընդ որով փառօք և պատուով ինքեանք կենդանացան, ո՛հ երախտամոռ և անշնորհակալ ցեղ և ազգ Նադիրի, չորքոտանի անասուն, անգութ և անզգայ խստապարանոց դազան»:

Եւ այսպէս լեզու վշտալից և սրտաթափ թագաւորազն դստեր այլևս յաւել տարածեալ բանիւք երկարել կարեր, սակայն ո՛չ համբերեաց Ռդա-Ղուլի Միրզա այսոց վիրաւորեցուցիչ նախատական բանից, իսկոյն սուսերաւն ձեռամբ իւրով զբանսն ընդ նոսին և զկեանս նորա բառնալով (51բ) եհատ և սպանեաց զնա՝ տալով նմա զպատիւն վերջին ի թաղման մարմնոյ նորա ի միում տեղւոջ ընդ եղբօր նորին յերեւելի և յատուկ գերեզմանատան ի Մաշադ քաղաքի:

<sup>102</sup> Նկատի ունի այն հանգամանքը, որ Նադիրը 1732 թ. օգոստոսի 22-ին «ընկեց զՇահ Թահմազն ի թագաւորութենէն, և առաքեաց զնա ի Խորասան ի քաղաքն Սաւաբար, յորում պահել զնա զգուշութեամբ հրամայեաց: Իսկ ի տեղի Սորա կարգեաց թագաւոր զփոքրագոյն մանուկ որդի Սորա և անուամեաց զնա Շահ Աբաս» (տես Տեր-Ավետիսյան Ա., Նադիր շահի արշավանքները, էջ 36–37, նույնի՝ Походы Тамас-Кули-хана (Надир-шаха) и избрание его шахом в описании Акопа Шамахеци, Тифлис, 1932, с. 9):

Եւ ընդ յաւուրսն ընդ այնոսիկ եկն եհաս Համբաւ քաղց-  
 րալուր բարեբախտ և յաղթող շահ Նադիրայ՝ սակս յաղթելոյ  
 զգլխաւոր և անուանի վերակացու և կառավարող երկրին Մօ-  
 ղօլայ զնէսիրիան<sup>193</sup>, որ եկեալ էր մերձ Փիշաբար անուանեալ  
 տեղոյն ընդդէմ շահին ութն հազարաւ<sup>194</sup>, նաևս լուրս բարիս  
 վասն զօրութեանց և որպիսութեանց պատերազմական գոր-  
 ծառնյութեանց, որ յառաջադրեալ էր շահ արշաւել ի կողմն  
 յայն հեռաւոր: Եւ ապա յետ Համբաւոյս այսորիկ թարց յամեց-  
 ման նորագոյն ևս էհաս լուր սակս առման հնդկաց հնագոյն  
 աթոռանիստ քաղաքին Լահօուու<sup>195</sup>, և ընդ յայսմ ազդարարա-  
 կան Համբաւոյն շահ Նադիր զժողովուրդն յուսադրելով նա-  
 խածանոյց առնէ<sup>196</sup> նաևս տիրելոյ զաթոռանիստ քաղաքն  
 Զհանաբաթ, այն է՝ Շահջանաբաթ<sup>197</sup>:

Սակայն այսպիսի նախագուշակումն ոչ եղև Ռզա-Ղուլի  
 Միրզին կատարեալ Հաւատալի, նաև բաց ի սմանէ մանաւանդ  
 արգելէին զնա փառասէր կամեցողութիւնք նորա, որ և սկսաւ  
 պատրաստիլ ինքն ծածկաբար առ ի տիրապետել զթագաւորու-  
 թիւն Պարսից, ընդ յոր կամեցողութեան զհետևեցեալ որպիսու-  
 թիւնք կարծեաց նորա զնա պնդապէս հաստատեցին: Նախ, զի  
 յետ ստանալոյ վերջի[ն] Համբաւոյն սակս առման Լահօուայ,  
 մերձ յամիսս երիս այլևս ոչ եկն ամենեկին այլ լուրս նորագոյն  
 ի հօրէն իւրմէ կամ ի զօրացն պարսից, և այն, իհարկէ, վասն  
 հեռաւորութեան և ղժվարութեան ճանապարհին եղև: Երկ-  
 րորդ՝ բնակօղքն ի պարսիկս յազգէն հնդկաց, սակս խորոց

<sup>193</sup> Փեշավարի Նասր խանի գորքի դեմ Նադիր շահի մղած կռվի մասին տես՝  
 Мухаммад-Казим, указ. соч., с. 72-79, Զյուլուք Արուքին, նշվ. աշխ., էջ 108:

<sup>194</sup> Նադիր շահի բանակը Փեշավար է մտել 1738 թ. նոյեմբերին (տես՝ Синха Н.,  
 Банерджи А., указ. соч., с. 278):

<sup>195</sup> Նադիր շահի բանակը Լահոր է մտել 1738 թ. դեկտեմբերի 20-ին:

<sup>196</sup> Նադիր շահը Լահորից Ղելի վրա է շարժվել 1739 թ. հունվարի 15-ին (տես՝  
 Кишмишев С., указ. соч., с. 189):

<sup>197</sup> Շահջանաբաթ – Ղելի քաղաքը XVII–XVIII դդ. հայտնի էր նաև Շահջանաբաթ  
 անունով՝ ի պատիվ Շահ Ջահանգի (տես՝ Абрамян Р., Армянские источники  
 XVIII века об Индии, Е., 1968, с. 182):



Տաղիր շահի նուտքը Փեշավար  
 (Մանրանկար Մուհամմադ Քյազիմի  
 «Նամե-յե ալամարա-յե Տաղերի» աշխատության ձեռագրից)

սրտէ դառնութեանց և աւաղմանց վասն հայրենեաց իւրեանց, տարածեցին ընդ ամենայն ուրեք զհամբաւս սուտապաճոյճս, իբր թէ բազմաթիւ զօրքն հնդկաց յաղթեալ իցեն զչահ Նազիր նորոգելով և հաւաստելով զնոյնն ձեռամբ զանազան քաղաքականաց իւրեանց զհաստատութիւն ասացելոց իւրեանց<sup>198</sup>:

Եւ ընդ ամենայն ժամանակս զայս Ռզա-Ղուլի Միրզա ոչ եկաց դատարկ, (52ա) քանզի լիապէս յղփացեալ իշխանութեամբ ընդ կողմամբքն վերագոյն յիշեցելովք և զբաղեալ փառօք թարց առողջ դատողութեան՝ սակս ձեռնարկութեան առ ի կատարել զկամեցողութիւն իւր ձևակերպեալ տպաւորեաց ի սրտի իւրում:

Եւ այսպէս ի Մաշադայ նորակերտ զօրօքն իւրովք ճանապարհորդեալ գնաց ի քաղաքն Թէհրան, վասն մերձ լինելոյ առ միջակէտս պարսից, նաև ուր կային գյատուկ գունդս զօրաց պատերազմօղաց արանց սակս զանազան նախազգաստութեանց: Եւ կոչեաց անդի հրովարտակօք իւրովք զգլխաւորս, զօրավարս, գաւառապետս և զայլ կառավարիչս՝ անուամբ իբր տալոյ նմա հաշիւս արքունական ելումտից, և ի ժողովելոցս յայտոսիկ սակս ոմանց անձանց ծանուցին նմա բանիւ զանհաճելութիւն նոցա առ ի մատնումն զկեանս նոցին բառնալոյ: Եւ եկեալ տեղակալն աթոռոյն ի կողմանս Թէհրանայ, և հարեալ բանակս ի դաշտաւէտ և պատկանաւոր տեղիս, և սկսան զալ զօրավարք և պետք, գաւառակալք և զայլ իշխանս ի տեղի անդ: Եւ սկսաւ Ռզա-Ղուլի Միրզա ի մէջ այլոց գործառ[ն]ութեանցն իւրոց զհաշիւս ի նոցունց ստանալ, և վերահասու եղեալ ետես, զի ի բազում քաղաքաց կառավարիչք ո՛չ էին եկեալ անդ: Առաքեաց կրկին զսուրհանդակս՝ հարկադրել և ստիպել զնոսա, և այսպէս օրաւոր պարապելով առ արտաքին գործս կառավարութեան և կարգադրութեան՝ ենթադատեալ

<sup>198</sup> Նման ասեկոսների տարածման մասին է վկայում նաև Ջ. Գանվեյը. «Ի սկզբբան տարւոյս համբաւ ինչ տարածիւր ի Սպահան թէ զօրք Պարսից պարտեցան ի Գնդուստան և Նատիր շահն սպանաւ» (տե՛ս Գանուէ, Եջվ. աշխ., էջ 137):

յառաջադրեաց նաևս զհետևողութիւնն և զկամեցողութիւնն իւր յայտնի առնել կատարելապէս, վասն որոյ յոյժ հարստագոյն ջղայ (պսակ), որ առ պարսիկս ի տեղի թագի դնեն ի յաջ կողմն գլխոյն կազմեալ պատրաստեցաւ, տիպս հատանելոյ զգլխամս ոսկեա և արծաթեա քանդակեալ եղեն, կնիքս նոր յարդարեցաւ, և խիլայս սակս բաշխելոյ յոյժ բազումս կարեցաւ: Ապա և զայլ առ սոյն գործ պատկանաւորք և հարկաւոր զիրս կիր առնելեաց անթերի պատրաստեցան, քանզի պակասութիւնս իւրք ամենևին ոչ ունէր: Եւ մնաց միայն (52բ) օր և ժամ ի պարսիկս լսելի լինել սակս փոխարկման անուան տեղակալին ի տիրապետութիւն թագաւորութեանն Իրանայ, ուստի և զաւուրս լուսնական առ նոյն գործ նշանակեցեալ էր:

Սակայն, նախասահմանութիւնն զամենայնն արգելեաց, քանզի յառաջ քան զաւուրս ինչ յանկարծակի և անսպասելի միջոցաւ սակս հաւաստի յաղթութեան և խորտակելոյ զգլխաւոր զօրքն հնդկաց և տիրապետելոյ զբանակս նոցա<sup>199</sup>, և սակս խոնարհեցուցանելոյ զՄօղօլն ենթ հովանաւորութեան Նադիր շահի ի նմանէ առաքեցեալ հրովարտակս ստացեալ ելև<sup>200</sup>, նաևս թէ իւրոյ մեծութիւնն բախտաւոր յաղթանակիչ փառաւորապէս մտանել ի աթոռանիստ քաղաքն հնդկաց Շահջանաբադ յուսա իսկապէս:

Եւ ի ստանալ համբաւոյս այսորիկ Ռզա-Ղուլի Միրզա, ճանաչելով զարարողութիւնն իւր, վարէր հնարիւք և համեստաբար՝ այնպէս, զի ոչ բազումք, այլ ի հրաժարելոցն ի նմանէ սիրելեաց իւրոց յաղագս համբաւոյս այսորիկ, որք տեղեակք էին, ի ծածուկ պահել կարացին, և նա ոչ եցոյց ումեք զդէմս իւր տխրատեսիլ, այլևս առաւել արտաքին նշանակութեամբ իբր ուրախանայր յոյժ՝ սակս այնպիսի փառաւոր յաջողու-

<sup>199</sup> Նադիր շահի զորքերը 1739 թ. փետրվարի 24-ին Կաոնալի ճակատամարտում ջախջախեցին Չնդկաստանի տիրակալ Մուհամմեդ շահի բանակը:

<sup>200</sup> Այդ հրովարտակով Նադիր շահը որդուն ավետում էր իր հաղթանակի մասին և Իրանի բնակիչներին երեք տարով ազատում հարկերի զգալի մասից (տես Арунова М., Ашрафян К., Государство Надир-шаха Афшара, с. 87-93):

Թեանցն հօր իւրոյ: Եւ առաքէ պատկամս ընդ ամենայն գալառս Թագաւորութեան Պարսից՝ սակս յաղթելոյ զհնդկաց Մօղօլն և հրատարակէ ամենայն ուրեք<sup>201</sup>:

Եւ ապա, յետ անցանելոց աւուրց ինչ և շաբաթուց, սկսաւ Ռգա-Ղուլի Միրզա բարեկարգօրէն և խաղաղութեամբ զոմանս զօրապետս, գաւառապետս և զայլ քաղաքական կառավարիչս ի բաց արձակել յինքենէ՝ երթալ ի տեղիս իւրեանց, ուստի եկեալք էին, նաևս ի թիւս նոցա և զայնոսիկ, որք մատնեալք էին ի մահ՝ զերծան ի մահուանէ և մնացին ամբողջ: Իսկ ինքն երկարեաց զքնակութիւնն իւր ի դաշտս Թէհրանայ ենթ անուան և նշանակութեան՝ իբր պահանջելոյ ի նոցունց զհաշիւս (53ա) արքունի յեկելոց ի հռաւոր տեղեաց քաղաքական կառավարչաց և բռնաւորաց:

Սակայն, բոլոր միտք և դիտաւորութիւնք նորա իսկապէս էին երկբայելի՝ սակս գործառ[ն]ութեանց Հնդկաց երկրին պատերազմական որպիսութեանցն հօր իւրոյ. ձեակերպէր ի կարծիս իւր, իբր ի մտանել նորա ի քաղաքն Շահջանաբադ սակաւ զօրօք ի յօտար և լայնատարած քաղաքի անդ, շրջապատեալ, այսինքն՝ պաշարեալ լինի անհաւասար զօրացն իւրոց ընդ բազմութեան զօրացն թշնամեաց, ենթարկիցի ապաբախտ վտանգից և փորցութեանց:

Բայց, սակայն, մտածմունք ընդ մտածմանց յոյժ տարբեր և հռազոյն պատահեցան, և կարծիք նորա ո՛չ ընդ այնմ եղև, քանզի ի մտանել Նադիր շահին ի Շահջանաբադ ել վաղվաղակի ի մէջ հնդկաց զապստամբութիւնս և խռովութիւնս յոյժ սաստիկ<sup>202</sup>. այնպէս և այնքան, զի հասարակ երկուց կողմանց բոլոր բազմութիւն յոյժ արանց մտելոց անդ պարսից, յայնմա-

<sup>201</sup> Անգլիացի ծանապարհորդ Ջոնս Դանվեյը այդ կապակցութեամբ գրում է. «Արդ, ցնծութիւն մեծ լինէր Պարսից ի լսելն գաղթութիւնն թագաւորին իւրեանց ի վերայ Գնդկաց արքային» (տես Գանուէ, Եշվ. աշխ., էջ 119):

<sup>202</sup> Ջոնս Դանվեյը Դելիի բնակիչների խռովության մասին գրում է. «Աէխտ Նիագ խանն ընդ այլ երևելի արամց գլուխ լինէր մոցա, և սպանանէին գՊարսիկսն» (տես Գանուէ, Եշվ. աշխ., էջ 116):

նէ խռովութեանցն հազիւ թէ ենթ մահաբեր վնասուց և սաստիկ կոտորուածոց պարսիկք ո՛չ էին անկեալք, սակայն Նազիր գոլով փութածաման, խոհեմ և արի ի գործս իւր, յոյժ սաստիկ և ահարկու շարժողութեամբ զինքն և զգօրս իւր ազատեաց ի վտանկէն յայնմանէ՝ հեղլով դարիւնս բազում իբրև վտակս ջուրց ի տեղին յայնմիկ խառնիճաղանջ իռովարար ամբոխաց:

Եւ Ռզա-Ղուլի Միրզա ի գարնան մինչև ցբոլոր ամառն 1740-երորդ յամին անցուցանէր զժամանակն ի կողմանս Թէհրանայ և սպասելով մնայր համբաւոյ ըզձալի կամեցողութեան իւրոյ ի յերկրէն Հնդկաց, իսկ հակառակ նմին առաքեալն շահ Նազիրայ յեւանելոյն իւրոյ ի Հնդկաց ճանապարհէ անդի դաստիճանաւոր այր ոմն, որում անունն Քէրիմ բէգ, առ Դուռն Օսմանցուոց հանդերձ արքունական գրովք, և ի դնալն նորա ի վերայ երկրին Պարսից ժամանակս աշնան ներկայացեալ յայտնեցաւ առաջի Ռզա-Ղուլի Միրզին և պատմեաց նմա զհաւաստի որպիսութիւնքն ամենայն, և թէ շահ բարեյաջող (53բ) առողջութեամբ զօրօքն իւրովք անդրէն դառնալով դայ, բայց տեղակալն աթոռոյն ասացելոցն ևս յոյժ դժՎարին կամէր հաւատալ:

Եւ ապա, յորժամ սկսան ի բանակէ շահին դալ յաճախակի սուրհանդակս առ նա՝ հանդերձ հրովարտակօք, ընդ յոր և ի մէջ այլոց բանից հրամայեցեալ էր նմա երթալ ընդառաջ ծնողին իւրոյ ի սահմանական քաղաքն Հէրաթ: Յայնժամ Ռզա-Ղուլի Միրզա հարկաւորեալ լինի զրկիլ ի լրացուցմանէ կամեցողութեան իւրոյ: Բայց, սակայն, մասամբ ինչ ոչ սակաւ փափկանայր ճաշակմամբ բարձր իշխանութենէն և քաղցրանայր ի պտղոց նորա, քանզի ո՛չ կարաց համբերել արդէն, զի միջնորդութեամբ պատրաստութեանն ի ժամանակի իւրում սպասել, այլ սկսաւ ձեռնամուխ լինիլ առ ի փութապէս իւրացուցանել զիշխանութիւնն Պարսից այլովք հնարիւք՝ այսու կերպիւ:

Յայ[ն]մ ժամանակի էր ի մօտ նորա ըստ կարգաւորու-  
թեան հօր իւրոյ զհարազադ քեռի մօր նորա՝ զսարդար (գլխա-  
ւոր զօրապետ) Լօթֆալի խան, որ առաջին կարգադրօղ, գիտակ  
և մասնակից ծածուկ խորհրդոց և գործոց Ռզա-Ղուլի Միրզին,  
խորհրդակից էր նմա: Արդ, քեռորդին ընդ քեռոյն իւրոյ  
առանձին սկսաւ ասել հառաչմամբ սրտիւ այսպէս.

«ժամանակ և բախտն ո՛չ ետուն թոյլ առ ի լցուցանել  
ինձ զկամեցողութիւնս իմ. թէպէտ ո՛չ եմ երկբայ սակս ջերմա-  
գոյն սիրոյ հօր իմոյ, որ ունի առ յիս, և ըստ օրինաց աթոռն  
հայրենական ինձ պատկանի, քանզի ես անդրանկածին եմ իսկ,  
սակայն յոյժ համբերութիւն և բազում ժամանակ սպասել  
պարտիմ, բայց ո՞վ որքան կենդանի մնալ կարէ, զայն իմանալ  
ո՛չ է կար: Հայր իմ այժմ այսպիսի յաղթանակութեամբք փա-  
ռաւորի և ամրակազմ անձամբ իւրով ո՛չ երբէք կամեսցի խա-  
ղաղութեամբ կեալ, զի ի նմա գոն երկարատես մտածմունք  
կամեցողութեան և օրաւոր նորագոյնս ծնանին, ամենայն  
ուրեք ի գործառ[ն]ութիւնս և ի բանս ինքնին ի յատեան դա-  
տողութեան նստի, զինքն հռչակաւոր փառօք զարդարէ,  
անուն նորա ահաւոր ձայնիւ տարածի, սաստիկ պատերազմաւ  
յաղթեցեալքն յաւելու, և գերկիրս Պարսից աւերել ո՛չ դադա-  
րի: Այժմ ես (54ա) բարեգոյն չափու հասակի եմ, իղձ և զուար-  
թութիւն արիութեան իմոյ կորուսանել պարտաւորիմ: Լուար  
յինէն դու, թէ որպէս գրէ սակս գնալոյ իմոյ Հէրաթ ընդառաջ  
նորա: Նա այժմ ոչ է այն, որ ի Ջէլիլաբադ հաստատեաց զիս  
լինիլ տեղակալ Պարսից աթոռոյն, սակս որոյ ընդ իս առանձին  
ծածուկ խօսակցեաց. նա յայնմ ժամանակի, ի գնալն իւրում [ի]  
հնդիկս, ո՛չ յուսայր այնքան բազումս ստանալ անդի: Իրաւի,  
բախտաւոր է հայր իմ և բախտաւորագոյն, այլ ես այժմ զիս  
ապաբախտ անուանել կարեմ, քանզի պարտաւորիմ առ նա  
գնալ և լինիլ հաւասարակից կարգաւ այլոց օտարաց, բայց  
միայն թագաւորազնութեան անուամբ յօտարաց զանազանիլ  
կարեմ: Զի՞նչ ապա ուրեմն մխիթարութիւն և ապաւէն ի սմա-

նէ ինձ, որպիսի կերպիւ ենթադատել կարես, ո՛վ սիրելի քեռի իմ, ի գործոցս յայսցանէ»:

Եւ Լօթֆալի խան յաղագս այսորիկ հրաժարեցաւ զհետեւեցեալ բանիւքս այսոքիւք.

«Ո՛վ բարձրապատիւ, մի՛ տրտմիր, քանզի ըստ օրինաց իրաւունս ունիս ծննդեամբդ, նաևս յատուկ իմն շնորհս պարգւ[և]աց գոն ի քեզ, և յոյժ գովելի են որպիսութիւնք և դերագանցութիւնք քո, մանաւանդ ո՛չ սակաւ փորձառութեամբ ցուցան իմաստնաբար կառավարութեան քում, զորս գ[ե]րեցին զսիրտք պարսից նոքա միշտ ի սրտէ ցանկան լսել զանուն թագաւորութեան քոյ: Թո՛ղ ուրեմն, թէպէտ հայր քո շահ Նադիր ուրախացուցեալ է զնոսա, շնորհելով նոցա զհարկսն երեքամեայ, սակայն զինչ լինելոց իցէ, ապա ըստ յայտնի բնութեան նորա, որ պահանջիցէ ևս քան զևս առաւել ի նոցունց: Արդ, պարսիկք պատուեն և սիրեն զքեզ, որպէս բարձրապատուութիւն քո զիտէ, որ ի կառավարութեան քում ի զանազան պատահմունս նշանակեալ փորձեցեր զնոսա, իսկ այժմ արդելէ ժամանակն, տէ՛ր իմ, որ քոյին բարձրագոյն արժանապատուութիւնն ընդ արձակութեան իւրում ի կիր առնել կարասցէ: Արդ, այժմ արա՛ շնորհս ստանալ զհամբերութիւն»:

Առ այն ասաց Ռդա-Ղուլի Միրզա. «Մինչև ցե՞րբ կսրեմ համբերել»:

(54բ) Իսկ Լօթֆալի խանն ընդառաջ մատուցեալ ասաց.

«Իրաւի, զի հնագոյն և նորագոյն պարսից և այլ թուրքմանաց տարեցուցք հաստատուն ցուցանեն, թէ որով կերպիւ իցեն պատահեալ զստացումն որդւոց զժառանգութիւնն հայրենեաց, այսինքն՝ միջնորդութեամբ ելանելոյ աստի կենացս առ հանդերձեալն հարց իւրեանց: Ահա՛, յայտնի իսկ է, զի Նադիր՝ հայր քո, բաւական փառօք եկաց, իսկ արդէն ընթանայ նա առ հասակս վերջին, ահա ժամանակ է նմա անդրաբնակիլ յերկինս, և քեզ իսկ՝ փթթեալ հասակաւ թագաւորագնիդ, իշ-

խել արժան է ի վերայ երկրիս, և զայս ո՛չ է նորագոյն, այլ ի վաղուց հետէ եղեալ գործ»:

Քեռորդին էհարց ի քեռւոյն. «Ուրեմն այսպիսի պատահման ո՞րպիսի կերպիւ կարէ հետեւել հնագոյն օրինակին»:

Եւ Լօթֆալի խան հրամանաւ նորա ել արտաքս առ ժամ մի, և կոչեաց ի յազգականացն զհազարապետ մի, որում անունն Մահմէդ բէկ, ի ցեղէն ավչարաց, ուստի և զՆազիր շահ ունի զսկիզբն իւր: Հրամայեաց նմայ, զի բերցէ զանուանի հրացանակիր նշանահար ոմն ի պարսից<sup>203</sup> տարաշրջիկ արանց, յոյժ հմուտ ի արհեստս իւր. առ ներկայութեան Ռզա-Ղուլի Միրզին, իբր թէ յաղագս զբօսանաց ցուցանիցէ նմա զճարտարութիւն իւր: Իսկ նա այնքան հմուտ էր, զի չափ ստակի միոյ բոլորակութեան գնտակաւ հարուկ կարէր անսղալ: Հաւանեաց յայսմ քաջն համարձակ, և ո՛չ մնաց նմա սակս այլոյ իրիք խորհուրդ առնել ընդ քեռոյն իւրոյ՝ ունելով ի ձեռին իւրում նիւթս յարմար և հնարաւոր ընդ արձակութեան, որ ի գործ ածիցէ: Եւ այսպէս թարց ամենայնի յամեցողութեան խորհուրդ վասն հայրասպանութեան ի մէջ երից անձանցն հաստատեցաւ ենթ երդման, սակայն զնոյնն ոչ յառաջ ի գործ կատարել, քան զդառնալ շահ Նազիրին անդրէն ի Պարս, նաևս ի յայնմ ժամուկարի յոյժ զգուշութեամբ, և ընտրել զժամանակ և պատկանաւոր յարմար տեղիս:

Յաղագս խորհրդոյ այսորիկ նաև հազարապետն Մահմէդ բէկ գիտակ եղև, որպէս սակս այսորիկ առաջիկայ գրեցելոցն (55ա) յայտնի լինելոց է: Եւ Ռզա-Ղուլի Միրզա, բացի խոստմանցն յոյժ բազում պարգևաց ընդունեողին զայնպիսի եղեռնագործութեան, ետ նմա վասն ապրուստի նորա մինչև զերեք հարիւր թուման, որում ենթ անուանակոչութեան եկամուտ առն թողեալ՝ զնաց ի ճանապարհս իւր առ կողմունսն սահմանական, յորմէ յետէ սպասէր ի գալստեան Նազիր շահին իսկ:

<sup>203</sup> Ըստ Ջ. Գանվեյի՝ այդ դիպուկահարը ոչ թե պարսիկ էր, այլ աֆղան (տե՛ս Գանուէ, նշվ. աշխ., էջ 138):



Նադիր շահ Աֆշար  
(1736-1747)



Թահմազ-Ղուլի խան  
(ապագա Նադիր շահը)



Նադիր շահ  
(գործ՝ անհայտ նկարչի)



Նադիր շահ




Նադիր շահ Աֆշար




Նադիր շահը Կառնալի ծակատամարտում



Նադիր շահ  
(Մկարիչ՝ Միրզա Ջանի)



Հերաթի արշավանքը



Կարճալի ճակատամարտը  
(24 փետրվարի 1739 թ.)



ճակատամարտի տեսարան Միրզա Մեհդի խան Աստարաբադիի  
«Թարիխ-ե Նադերի» աշխատության ձեռագրից



Մանրանկար Միրզա Մեհդի խան Աստարաբադիի  
«Թարիխ-ե Նադերի» աշխատության ձեռագրից



Նադիր շահն իր որդիների հետ



Նադիր շահն իր թիկնապահներով



Նադիր շահն իր որդու հետ (հատված Ակարից)



Պարսկական հեծելազոր



Նադիր շահի դիմանկարը



Նադիր շահի մանրանկարը



Ադիլ շահ  
(1747-1748)



Ահմեդ շահ Դուրրանի  
(Աֆղանստանի շահ  
1747-1773 թթ.)

*Terock-Sere.*



*Schander-Shan.*



*Nader*



*Shan.*

*Mahammed Shan.*



*Allumaire II.*



Նադիր շահի դինանկարը՝ շրջապատված Մեծ Մողղների պետության տիրակալների Ֆարուխ Սիյարի (1713-1719), Ջահանգար շահի (1712-1713), Մուհամմեդ շահի (1719-1748) և Ալամգիր II-ի (1754-1759) նկարներով



Նադիր շահ

Եւ տեղակալն աթոռոյն ընդ յառաջ ելանել Տօր իւրոյ յոյժ յամրապէս պատրաստիւր, սակայն ստացեալ կրկին զհարկադրական հրովարտակ յաղագս այնորիկ, նաևս վասն հաշուից ի ժամանակի կառաւարութեան իշխանութեան արքունական ելուամտից, յայնժամ հարկադրեալ եղև կատարել զկամս ծնողին իւրոյ: Եւ ընդ ժամանակսն ընդ այնոսիկ ի բոլոր կառավարութեան իւրում՝ զժողովեալսն ի պարսից ենթ զանազան զրպարտական պատճառանաց և յափշտակողական կերպիւ, բացի հարկիցն արքունական, դրամս երկու հարիւր հազար թումանս ետ ի պահեստ ի ձեռս առն հաւատարմի: Եւ ինքն ընդ պատերազմական գնդիւ զօրօքն իւրովք, նաև զքեռին իւր ընդ նմա, ի միջակետէ պարսից ել խաղաց գնաց անապարմամբ ի ճանապարհ՝ առ նշանակեալ տեղին, և վերջապէս ի մօտաւոր կողմանցն Հէրաթայ<sup>204</sup> ներկայացեալ յայտնեցաւ որդի արքային առաջի ծնողին իւրում և մատոյց նմա գրով զհրամայեցեալ հաշիւսն:

Եւ շահ Նադիր յայնմ ժամանակի, վասն յաղթելոյ զհնդիկըս, շահունշահ անուանիւր, որ և ընկալաւ զորդին իւր առաւել իբրև զթագաւոր, քան թէ ծնօղ: Աստ մարթէ իմանալ, զի զայս փոխարկութեան սիրոյ պատճառն յամեցողութիւն յանդիման գնալոյ որդւոյն իւրոյ եղև: Եւ Նադիր այլևս ի նմին աւուր մեծամեծ նախարարովքն իւրովք արար հանդէս տեսութեան զօրականացն գնդին բերեցելոյ որդւով նորին, և հրամայեաց բաժանել գնոսին ի գունդսն իւր, և Ռզա-Ղուլի Միրզին լինիլ և մնալ ի դրուես արքունի, սակայն թարց ամենայնի դործակալութեան<sup>205</sup>, քանզի կառավարութիւնն գլխաւոր ի վերայ Պարսից վերստին անուամբ շահին (55թ) գործ առեալ եղև,

<sup>204</sup> Սադիր շահի բանակը Չերաթ էր հասել 1740 թ. հունիսի 4-ին (տե՛ս Киш-мишев С., указ. соч., с. 211):

<sup>205</sup> Ոգա-Ղուլի Միրզան կառավարել է Իրանը մինչև 1740 թ. մայիսը, երբ Սադիր շահը վերադարձել է Չնդկաստանից (տե՛ս Սատենաղարանի պարսկերէն վավերագրերը. հրովարտակներ, պր. IV, կազմեց Ք. Կոստիկյանը, Ե., 2008, էջ 14):

և ետ ցԼօթՖալի խան ըստ աստիճանի նորա նախարարութիւն ի վերայ սահմանական զօրացն պատերազմողաց:

Եւ ապա, յորժամ շահ Նաղիր առ ի տիրապետել զԲուխարայ և զԽիւայ ճանապարհորդեաց և եմուտ յերկիրն թշնամեաց, կարգաւորեաց զորդին իւր սպառազինութեամբ՝ առ ի որոնումն և ըմբռնումն զօգբէզս ի զանազան շրջակայ կողմունսն արշաւանօք, առ յորս նա առաւել կորոյս, քան թէ ստացաւ, նաև փութով հիւանդացաւ այնպէս, զի հայրն ոչ հանդուրժեաց զտեսանել զնա, որ և ի նոյն ժամանակի բոլոր զօրքն պարսից սակս ջերմագոյն սիրոյ հօրն առ զորդին ականատես հաւաստի գոլով վկայաբանէին: Եւ Նաղիր մխիթարէր զորդին իւր զՌզա-Ղուլի Միրզա քաղցր բանիւք, նաև խոստացաւ շնորհել նմա ի յառողջանալ նորին՝ զնալ ի գաւառն Խորասանու ի քաղաքն Մաշադ, վասն հանգիստ բնակութեան նորին, որ և ի ժամանակին անդ զնացեալ եղև իսկ և կատարեալ առողջացաւ ի հիւանդութէնէ իւրմէ:

Եւ ի դառնալն հօր նորին՝ նորապէս յաղթօղն Բուխարու և Խիվու ի Խորասան յամի 1741, տօնախմբեցին որդևովն ի միասին զօր տարեմտին պարսից, որ կարգաւորեալ է ի նոցունց ի սկսանիլ դարնան, քանզի հասարակաբար պատահի ըստ սոմարի տեղուոյս իննեորդ աւուր մարտի ամսոյն: Ի ամին աւուր Նաղիր, ըստ կամեցողութեան իւրոյ, շինեցեալ անհամեմատ զնոց պսակն (դիարեմ), որ անուանեալ էր նաղիրաւ կամ պատուական ոստ պսակի՝ զչորս խաչածև ջղայից, յոյժ հարստագոյն և մեծագին պատուական ակամբ զարդարեալ, ի նշանակութիւն իշխանութեան իւրոյ ի վերայ չորս թագաւորութեան, այսինքն՝ Պարսից, Հնդկաց, Մեծի Թաթարաց և զՕսմանցուոց թագաւորութեան, քանզի նա՝ տիրելով զպարս, յաղթեաց զհնդիկս, և Բուխարայ ընդ Խիւաւ և զԲալխ, որ է գլխաւոր երկիր Թաթարաց, և զսուլթանն Օսմանցուոց ի սրտի իւրում կանխապէս տպաւորեալ էր յաղթել, որ և զայսու խորհրդով զպատուական ջղայն գայն եդ ի գլուխ իւր: Այնուհետև, ընդ ամե-

նայն ժամանակս կենաց իւրոց մինչև ցվախճան իւր, միջոցաւ վեց և կէս ամաց, այլևս ոչ երբէք եդ զպսակն զայն ի գլուխ իւր, բայց միայն հռչակիւր զանուն նորին՝ անգին պսակ կամ ջղայ Նադիրայ:

Եւ որպէս անփոփոխ կամեցողութեամբ յօժարեաց (56ա) նա ուժգին զօրու զօրութեամբ և արշաւանօք խաղալ գնալ և յարձակիլ ի վերայ Դաղստանայ լեռնաբնակաց ի վրէժխնդրութիւն անդր կորուսելոյ զհարազադ եղբօր իւրոյ զԻբրահիմ խանին<sup>206</sup> (սակայն զստուլլ) և էութիւն յայսմ գործառնութեան ի նմա զայլ իմն երկարատես մտածմունք գոյին, յաղակս որոյ աստ յիշելն ոչ է մեզ տեղի)<sup>207</sup>, նոյնպէս և կարգաւորելով զճանապարհս իւր՝ ընթանալ ի կողմանս գաւառացն, եղելոց առ ծովեզերքն Կասպիական՝ թողլով զայնս ի յաջակողմ առ յետկոյս լերանցն, առ յոր կողմունս, մանաւանդ՝ ընդ յայս ճանապարհ յանդիման Մազանդարանայ և Գիլանայ, ուր ամենայն եզերտքն են անտառախիտ տեղիս: Իսկ գլխաւոր դիրք բնի զօրացն կային բանակաւ բացատութեամբ ի միմեանց ի վերայ ոմանց վերստաց՝ մօտ առ քաղուլլ) և գումբէթ ի կողմանսն Թէհրանայ, ուր հրովարտակօք շահ Նադիրայ յառաջագոյն կոչեցեալք էին յամենայն քաղաքաց բոլոր Պարսկաստանայ յամենայն ազգաց հոգևոր անձանց, նախարարաց, քաղաքապետաց, ծերակուտից և արանց աստիճանաւորաց: Սակայն առ զի՞նչ վախճան այսպիսի ընդհանրական ժողովքն կազմեցաւ պատրաստեցաւ, առ այս հաւաստին զիտացեալ ոչ եղև, քանզի խորին և ծածուկ կամք շահ Նադիրայ ճանաչել և իմանալ էր յոյժ գժուարին:

<sup>206</sup> Նադիր շահի եղբայր Իբրահիմ խանը սպանվել էր 1738 թ. Լեզգիների դեմ մղած կռիվներից մեկում (տե՛ս Иванов М., Очерк истории Ирана, с. 102):

<sup>207</sup> Ըստ այլ կարծիքների՝ Նադիր շահի դաղստանյան արշավանքը կովկասյան լեռնականների շրջանում Ռուսաստանի աճող ազդեցությունը թուլացնելու նպատակ էր հետապնդում (տե՛ս Кишмишев С., ук. соч., с. 214; Очерки истории Дагестана, т. I, Махачкала, 1957, с. 167-168):

Եւ յազգաւ այսորիկ տարածեցաւ ի մէջ ազգացն զանազան կարծիս. ոմանք կոչուամ զայս միայն առ այս հաստատէին, թէ Նազիր ի աւարտել զայնպիսի հռչակաւոր և երեւելի յաղթութիւնսն, կամեցաւ փառաւորապէս ցուցանել յաշխարհի իւրում, այլք կարծէին, թէ նա զանմեղութիւն իւր սակս արեան շահ Թա[հ]մազին առաջի այնքան բազմութեան ժողովելոց կամի խոստովանիլ: Իրաւի, զի յառաջակայք (56բ) յանդիման շահ Նազիրայ, ի մէջ այլոց խօսակցութեանց, ի բերանոյ նորին անգամ մի լուեալ են զտրտունջս, իբր թէ ասոսայր այսու կարճաւօտ բանիւս. «Անպիտան պարսիկք սպանին զողորմելին Թա[հ]մազ Միրզա»:

Իսկ այլքն հմտագոյնք, իմանալով զբարձրաթուիչ միտք արքային և հասու գոլով շաւղաց նորին (զի ըստ հրամանի նորա գրեանքն Օրինաց, զսուրբ Աւետարանն, զհինգ գիրքն Մովսէսի, Սաղմոսն և Ղօռանն ի լեզուս պարսից ի քաղաքն Ասպահան թարգմանեցեալ էին), եզր կացուցեալ հաստատէին, թէ պարտ էր լինիլ վերահասութիւն՝ սակս նոր հաւատոյ ապագայ հաստատմամբ Նազիրին<sup>208</sup>:

Սակայն, զայսոց երից կարծեացն և ոչ զմինն կատարեցաւ ի հոլթեան իւրում՝ ի պատշառէ ժամանեցեալ ապա չարավնաս պատահմանն, որ հետեւել տեսանի: Եւ ընթացք ճանապարհորդութեան հետեւեր, և շահ Նազիր մեծի մտածմամբ սակս գործառ[ն]ութեանց և որպիսութեանցն ի վերայ Դաղստանայ և առ յայլ հեռաւոր տեղիս մտածէր, և Ռզա-Ղուլի Միրզա ի սիրտս իւր ուրախանայր յաղագս յարմար հնարին առ ի կատարումն հայրասպանութեան ընդ ճանապարհաւն ընդ այն ըղձալի կամեցողութեան իւրոյ: Իսկ կաշառակուր հրացանակիրն այն սակս կորստական գործոյն իւրոյ, յորժամ լուաւ փութով զգալուստ շահի առ վերոյ գրեցեալ ճանապար-

<sup>208</sup> Նազիր շահի կրոնական քաղաքականութեան մասին տես նաև հրապարակվող նախորդ աշխատության XXIV գլխում և կից բերվող ծանոթագրություններում:

հաւ, ոչ յամեցաւ թողուլ զժամանակն և հասանիլ ընդառաջ ի պատկանաւոր և յարմար տեղիս և թագչիլ ի մէջ անտառի ընդ ճանապարհաւն այն:

Իսկ Նազիր ի դառնալն իւրում ի Հնդստանայ, բացի պատահմանց՝ սակս գործառւ[ն]ութեան ինքեամբ վասն հետազօտելոյ և արշաւելոյ ընդդէմ թշնամեաց, գրեթէ մշտապէս ի ճանապարհագնացութեան իւրում ընթանայր ընդ հարճսն իւր՝ հեծեալք ի յերիվարս, և վասն փառաց և մեծութեան անուան իւրոյ և պահպանելոյ զկեանն իւր, նաև՝ զի զճանապարհն ոչ արգելցի յուճեքէ, հասարակաբար երկու գունդս զօրաց յառաջադիմաց կարգաւորեցիւր ընդ իւր. մինն ընթանայր ընդառաջ բացատութեամբ կէս (57ա) վերստոյ, և միւսն գնայր ի յետուստ նոյնքան հեռաւորութեամբ, և ի մէջ այսոց զօրաց շահն ընդառաջ հարճից իւրոց ընթանայր:

Եւ սակաւ ինչ մնաց զանտառախիտ տեղիսն այն անցանել, բայց յայնմ միջոցի ի սպառիլ ճանապարհին այնորիկ նշանակեցեալ կարգաւորութեամբ, յորժամ հաւասարեցաւ Նազիր յանդիման նոյն ծառոյն, որ էր խիտ առ խիտ և ոստալի, ի վերայ որոյ նստէր թշնամին հանդերձ հրացանիւ, ի յառաջնում աւուրք մայիսի ամսոյն յամի 1741, յանկարծակի թռեսու զընտակ մի (գուլլայ), հպելով առ բոյթ ահեակ ձեռին շահին և էանց: Եւ շահ, ի թօթափիլ յական, հայեցաւ առ յաջակողմն անտառին, ուստի ձգեցաւ գուլլին, և սրագոյն տեսողութեամբն իւրով ետես ի վերայ ծառոյն զդէմք թշնամւոյն իւրոյ, և իսկոյն ի նոյն ըրպպէի անկաւ յերիվարէն ի վերայ երկրի և եղև սուտ մեռեալ:

Իսկ թշնամին ձգումն հրացանին նպատակեալ էր ի կուրծքս նորին, և հարկանումն համարեալ էր նա կատարեալ գոլ ի ձեռաց իւրոց՝ էջ ի ծառէն և սկսաւ անտառաւն ընդ այն շուտափոյթ աճապարմամբ ընթանալով հեռանալ:

Իսկ բոլոր կանայք շահին ի վերայ ժողովեալ՝ ամենեքեան լալով ողբային և կոծելով զաղաղակ բարձին, և գունդն զօրաց,

որք ի յետուստ կողմէն էին, ընդ յորս էր և զՌզա-Ղուլի Միրզա, ի լսել ձայնի աղաղակին՝ իսկոյն անյապաղ ընդ իշխանութեան իւրոյ զօրօքն ի վերայ վազեալ հասանեն: Որդին տեսեալ զհայրն իւր անկեալ ի վերայ երկրի, և շուրջ զնովաւ բազմութիւն կանանց աղաղակողաց՝ յարձակեաց ի վերայ համարձակալէս և յետս քարչեաց զնոսա (որում ոչ երբէք ի կենդանութեան իւրում հրամայեցեալ էր մօտաւորիլ հարձիցն), զի թերևս հաւաստալէս տեսցէ աչօք իւրովք զկորուստ հօր իւրոյ: Իսկ Նադիր ի լսելն միայն զձայն դոփման ոտիցն երիվարաց և ի ձայնից վազեցողաց առ նա՝ եբաց զաչս իւր և ասաց մեծածայն. «Մի՛ երկնչիք», և յայտնեաց՝ նշանակելով առ որդին և ասաց. «Թշնամին ի յանտառէն ձգեաց ի վերայ իմ զհրացան», զի աճապարեալ հասանիցէ ըմբռնել զնա՝ առեալ ընդ իւր ի յօգնութիւն (57բ) զինուորս յառաջադէմ հեծելագօրաց:

Եւ Ռզա-Ղուլի Միրզա նոյն ժամայն ընդ մասամբք ինչ զօրօքն յարձակեցաւ ի յանտառսն՝ ցրուելով զնոսա ընդ ամենայն տեղիս, իբր գտանել զմարդասպանն: Բայց ապա իմացան, զի Ռզա-Ղուլի Միրզա այնպիսի արշաւամբքն, ինքն մնալով ի խիստս անտառին, թաքոյց զչարածճիկն զայն:

Իսկ շահ Նադիր կոչեաց զմիւսս գունդն յառաջադէմ զօրացն և յուսադրեաց զնոսա, պատեաց զմատն վիրաւորեալ, նստաւ ի ձի և էհաս առ նշանակեալ տեղին իւրայնովքն ամենայնիւ: Եւ բժիշկն պալատական ապահով արար զարքայն իւր, թէ՛ ի վիրացն այն ո՛չ յետևի զվնաս ինչ, քանզի միայն եղրատեալ էր, և եղ ի վերայ սպեղանի, սակայն Նադիր, ընդդէմ սովորութեան իւրոյ, աւուրս ինչ ո՛չ ել ի դատողական և կառավարական տաղավար:

Եւ ապա փութով եկն ևս Ռզա-Ղուլի Միրզա ի յանտառէ անտի և յայտնեաց ծնողին իւրոյ, թէ՛ ամենայն ջանիւք որոնեցաք ի յանանցանելի անտառսն այն, բայց չարածճիկն զայն գտանել ոչ կարացաք, վասն այսորիկ ժամանակ ինչ լուեաց շահ՝ ոչ առնելով հետագօտութիւն բնաւ սակս այնպիսի չա-

րութեան, այլ զորդին իւր, որ յայնժամ առանձնացեալ բնակէր ի հարճնարանին, կոչէր շահ առաջի իւր բազում անգամ, որ և ի յետևեցելոցս կարէ նկատիլ, զի արքայն հմտագոյն սակս նշմարելոյ և վերահասու լինելոյ ի դիմաց և ի բանից նորա՝ կամեցաւ յոյժ ողորմածաբար և յատուկ քաղցրութեամբ ընդ որդին իւր խօսակցել:

Եւ յորժամ շահ Նազիր սկսաւ ըստ առաջնոյ սովորութեան ներկայանալ առաջի բազմութեան, յայնժամ սկսան յայտնի լինիլ ամբաստանիչք՝ սակս պատահեալ չարութեան: Իսկ նա թոյլ ետ նախ զամենեցուն գալ առաջի իւր, և ապա հասու եղեալ ստութեանց մատնչացն՝ արձակեաց զնոսա թարց պատժոց, ոչ ևս ընդունելով զայնպիսի զրպարտութիւնք: Բայց միանգամայն երկբայելիք եղեն նմա ըստ ենթադատութեան մտաց իւրոց զերկուս գլխաւոր զօրապետս, որք էին բացակացք յինքենէ ի հեռաւոր տեղիս: Հրամայեաց հրովարտակօք ենթ պահապանաց պահել զնոսա, և ապա հրամայեաց կոչել թարց յամեցողութեան զպատկերահանս (58ա) հմուտս ի Ասպահանայ, զի եկեսցեն առ դուռն արքունի:

Եւ Նազիր, կառավարելով զիշխանութիւնն բարեյաջող կենցաղավարութեամբ և սակս բարեգուտ պատճառաց և խորհրդոց, հրամանաւ իւրով զժողովեալսն յամենայն տէրութեան իւրոյ զանազան արսն աստիճանաւորք արձակեաց ամենեցունց դառնալ իւրաքանչիւր ոք ի տեղիս իւրեանց:

Եւ ինքն մօտաւորեալ առ Թէհրան՝ բարեգոյն համարեաց անուամբ յայտնելով ցուցանել զծնողական գութս, իբրու թէ ոչ կամի առ դժուարագնաց ճանապարհորդութեանն հարկադրելով աշխատ առնել զորդին իւր զՌեզա-Ղուլի Միրզա, և թողուլ զնա ի նոյն քաղաքով՝ առ ի հանգիստ բնակութեան՝ նորա, թարց յանձնելոյ նմա զգործս արքունական պարտականութեանց՝ հրամայեաց նմա զբօսնուլ անդ, բնակելով ի զուարճալի տեղիս: Եւ սակս ծախից և ապրելեաց նորա ընդ սպասաւորս և պաշտօնեայս իւր և կարգաւորեաց դրամս բաւական չափով

ստանալ նմա ի մտիցն Թէհրանայ, և ըստ երևելի կամեցողութեան շահին, իբր սակս առաւել հաւատարմաբար պահպանութեան զառողջութիւնն որդւոյն, տուան նմա զերկուս պալատական ներքինիս շահի, բայց ըստ ծածուկ դիտաւորութեան նորա՝ կացուցեալ էր զնոսա ընդ նմա, զի վերատեսուչ իրնիցին նմա, և անքուն ակամբ զննեսցեն և իմասցեն՝ գուցէ Ռզա-Ղուլի Միրզա խօսիցէ երբէք բանս ինչ սակս պատահեալ փորձութեան շահին: Եւ բացի ներքինեացն կարգաւորեցին ընդ նմա նաևս պատուաւոր այր ոմն՝ ատենադպիր Միրզա Ահմէդ անուն, ի սպասաւորութիւն Ռզա-Ղուլի Միրզին վասն գրագրութեան գործոց:

Եւ այսպէս որդին մնաց ի Թէհրան, և հայրն ըստ առեալ կամեցողութեան իւրոյ՝ երկարեաց զճանապարհորդութիւն իւր առ Դաղստան<sup>209</sup>: Յայ[ն]մ ժամանակի եկին արշաւանօք, ըստ կերպի սուրհանդակի, պատկերահանքն ի բանակ շահին: Նադիր ոչ վաստակեալ և ոչ ձանձրացեալ յանդադար ճանապարհորդութեանցն և աշխատանացն ի կառաւարութենէ թագաւորութեան գործոցն (58թ) անձամբ անձին իւրով բաժանեաց նաև զժամանակ ի վերայ նախիշեցեալ գործոցն՝ ասելով պատկերահանացն մի [ը]ստ միողէ զնշանակութիւն և զձևակերպութիւնս դիմաց չարածձիկ հրացանակրիճին:

Արդ, ոչ գոյ սակս յայսմ հակասութիւն, զի պատկերահանքն պարսից թէպէտ դէմք մարդոյ երանօք ի բնական նմանութեան կենդանութիւն տալ ոչ են հմուտք, սակայն նմանութիւնն պատկերակերպել կարողք են: Արդ, նկարեցեալ եղեն պատկերք մարդասպանին չափաւոր համարաւ և զամենայն զնոսին իւրաքանչիւրն հրովարտակաւ շահ Նադիրայ ի տեղիս տեղիս ընդ ամենայն գաւառ ձեռամբ յատուկ արանց առաքեցեալք եղեն սաստիկ հրամանաւ, որպէսզի իւրաքանչիւր կա-

<sup>209</sup> Նադիր շահը Դաղստան է արշավել 100 հազարանոց բանակով (տե՛ս Алиев Б., Борьба народов Дагестана против иноземных завоевателей, Махачкала, 2002, с. 247):

ուսմանը յիշուած իշխանութեան ամենայն կերպիւ հետեւելով որոնիցէ և գտանիցէ զայր ըստ նմանութեան առաքեցեալ պատկերին, և յորում ժամու գտանեցեալ լինի՝ զնա երկաթակապ շղթայիւք ենթ սաստիկ պահապանաց թարց յամեցողութեան առաքեսցեն ի բանակ իւր:

Յետ այսորիկ, առաջիկայ ժամանեալ ամսոյ նոյն յամին, առ ճանապարհորդութեամբն ի վերայ Դաղստանայ՝ յայտնեցեալք գտանեցան ի բանակի անդ գիրս ընկեցեալս յերկիր, ասելով ի նոցին՝ վասն սիրոյ երկոտասան պատգամաւորաց, ելելոց ի ցեղէն Մահմէդի, սակս ողջակիզելոյ պատրաստեցեալ է երկոտասան գուլլայս՝ առ ի ջնջել զկեանս հալածիչ և չարչարողին մերոյ: Բայց ահարկու հնչումն և ոչ սակաւ իւրք ինչ խռովեցոյց զանձն մեծի առնս ի դարի իւրում, մանաւանդ՝ ոչ վրդովեաց բարձրաթռիչ միտք նորա, քանզի նա զայն ունայնական բանսն ոչինչ համարեաց և ոչ եմոյծ ի լսելիս իւր, այլ ի ճանապարհորդութեան իւրում զուարճանայր թագաւորութեամբն Պարսից և յաղթութեամբ յերկրին Հնդկաց, քանզի իմաստութեամբ կառավարեաց, մեղաւորս պատժեաց զանազան մահուամբ, զարժանաւորս պարգևատրեաց զօրս իւր ըստ կարգին պահեաց, միով բանիւ՝ ասացից Նադիր ըստ սովորութեան լեզուին արաբացւոց ընդիր ընդիր գործս գործեաց:

(59ա) Եւ յամսեանն հոգտեմբերի յամի 1741, յորժամ շահ Նադիր ըստ անբախտութեան իւրոյ յաղթեցաւ առ լերամբն Դաղստանու<sup>210</sup>, հարկաւորեալ եղև հուպ առ կողմամբն Դարբանդու մնալ և ձմերնանալ ի յերկրի լեռնական իշխանին Իսմու<sup>211</sup>, մօտ ծովեզերն Կասպիական:

Յայնմ ժամանակին բերին սաստիկ կապանօք զչարածիկն այն մարդասպան մերձ ի մէջ գիշերոյ, որ ըմբռնեալ էին

<sup>210</sup> Դաղստանում Եղիշի շահը կորցնում է իր զորքի 2/3-ը և ձիերի մեծ մասը (տե՛ս Кишмишев С., указ. соч., с. 215):

<sup>211</sup> Իսմի – Դաղստանի ֆեոդալներից (նրա մասին տե՛ս Աբրահամյան Ա., Սի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Ե., 1953, էջ 29, 181):

զնա առ սահմանաւն Բուխարու յերկրին, որ և իսկոյն ի նոյն ժամու սակս նորա ի հարճնարանն շահին իմացուցին նմա: Իսկ Նադիր իսկոյն հրամայեաց (թէպէտ ոչ էր սովորական ժամանակ) ի նշան ուրախութեան իւրոյ փողս հարկանել և ընդ ամենայն բանակն պատգամաւորօք իմատարօք ցուցանել, թէ չարակամ թշնամին կենաց իւրոյ գտանեցեալ է, որում և հրամայեաց մինչև ցգալ աւուր պահել ենթ սաստիկ պահպանութեամբ պահնորդաց:

Եւ ընդ առաւօտն շահն ել և եմուտ ի դատողական տաղաւար, և նոյն ժամայն հրամայեաց բերել առաջի իւր զմարդասպանն՝ ի յատեան ներկայութեանն հասարակական առաջիկայից իւրոց արանց աստիճանաւորաց մինչև ցերեք հարիւր անձանց, և կոչեաց զնա առ մերձ և ասաց ի ձայն.

«Մեք երգնումք քեզ ամենաբարձր Աստուծով և գրովն Ղօռանաւ, զի զքեզ ոչ սպանանեմք, ասա՛ մեզ զճշմարիտն, ո՛վ ամբարիշտ, ցած և չնչին արարած, որթն և ոստան սարդի, ո՞ր պէս յանդգնեցար դու խորհել զչարութիւն և գործել զանօրէնութիւն ի վերայ կամեցողութեամբն բարձրելոյն յԱստուծոյ կարգեցեալ մեզ մեծ թագաւորիս կամ, ո՛վ դու որդի կորստեան, ոչ ի միտ առեր, զի ամենաբարձր Արարիչն անյայտաբար պահպանէ զընդրեալն իւր ամենազօր աջովն իւրով»:

Եւ թշնամին երկիրպագանելով՝ պատասխանեաց նմա.

«Մեծ տէր և հզօր թագաւոր, կացցէ՛ առողջ յաւիտեան, կեանք և մահ իմ կանխին այժմս ի կամաց քոց, ահա ճանաչեմ (59բ) ես, զի ամենաբարձրն Աստուած զքեզ՝ սիրեցեալդ իւր պահպանէ և ողորմի, եթէ ես ի ժամանակին յայնմիկ գիտացեալ էի, որ դու անկեալ յերիվարէն ի վերայ երկրի կենդանի էիր, ես զքեզ և ի յայնմ տեղուջ գործս փութացուցանել կարէի, քանզի առ յիս ունէի ի պատրաստի զգուլլայս բազում, իսկ այժմ կամք քոյ է ընդ իս»:

Եւ լուեալ շահ Նադիր զբանս զայս՝ կոչեաց առաջիկայք իւր մշտապէս եղեալ դահիճքն, և հրամայեաց առաջի իւր կու-

րացուցանել զչարակամն, որ և կատարեցաւ իսկոյն: Եւ յանձնեաց զնա առ ոմն երեւելի և հաւատարիմ առն պահել զնա, և շնորհեաց նմա ի նոյն ժամու և բաւականութիւնն ապրելոյ նորա յիսուն թուման: Նաև իսկոյն հրամայեաց առաքել ի Հերաթ՝ առ երէց որդին իւր. համբաւս զայս ուրախութեան, այսինքն՝ ըմբռնելոյ մարդասպանին:

Եւ Ռզա-Ղուլի Միրզա ի ստանալ զլուրս զայս, առ ի ցուցանել արտաքուսդ իբր ուրախութիւնն իւր՝ շնորհեաց առաքեցելոյն զխիլայս հարուստս և բոլոր հանդերձիւք յոտից մինչև ցզլուխ զգեցոյց նմա (քանզի առ պարսիկս սովորութիւնն է սակս մեծի ուրախական համբաւոց), և անդրէն յուղարկեաց զառաքեալն հանդերձ գրով, ի յորում առ ծնողն իւր ի խորոց սրտէ զուրախութենէն մասնաւորիլն իւր ընդարձակ վկայութեամբ յայտն արար:

Եւ յետ այսու, ի հանդարտիլ ցաւոյն և առողջանալ աչաց չարակամին, Նադիր ծածկաբար ի ժամս գիշերային առնոյր զնա և կացուցանէր առաջի իւր, և անձամբ անձին առանձին հարցափորձ առնէր զնա, թէ ում ուսուցմամբն յանդգնեցաւ նա սողնուլ առ այնպիս[ի] գործ անօրէնութեան: Իսկ ապստամբն թարց ամենայնի դիմադարձութեան և բացասութեան, առանց սղալանաց, ստուգապէս մի ըստ միոջէ պատմեաց զճըմարիտն՝ ասելով, թէ՝ երէց որդին քոյոյ մեծութեան Ռզա-Ղուլի Միրզա և սարդար Լօթֆալի խանն սակս այն արարողութեան հաւանեցուցին զիս, վասն որոյ նոքա ընդ իս երեքեանս միայն դաշինս եղինք, ևս (60ա) թէ հազարապետն Մահմէդ[ը] բէգ եբեր զիս առ Ռզա-Ղուլի Միրզա, և թէ՝ ետես նա, զի ես հրացանաւ որպիսի ամբողջ ձգելով հարի առ նպատակն և այլն:

Հնարագէտն Նադիր յորժամ իմացաւ զհաստատութիւնն խորհրդոցն չարակամաց անձին անձին իւրոյ, այնքան համբերութիւն ստացաւ ի հրաբորբոք և ընդարձակ բարկութեան իւրում, մինչ զի սակաւ իւրիք կերպիւ նշան ևս ոչ եցոյց առ ի

վրէժխնդրութեան այնց գործոց մինչև ցպատէ՛հ և յարմար ժամանակի իւրում, այլ մանաւանդ ևս առաւել ցուցանէր ի պալատի իւրում եղեալ աներորդւոյն իւրոյ Լօթֆալի խանին անփոխարկելի սէր ողորմածութեանս: Եւ այսպէս, յաւել քան զամիսս վեց յաղագս այսոց գործոց կային բոլո[րո]վին ի խորանին լռութեան:

Եւ յամիսս ամառնային յամի 1742 շահ Նադիր ինքնին հետամուտ լինէր լեռնական արանց ճանապարհորդութեամբն ի տեղիսն և իջևանսն թշնամեաց՝ յանկարծակի[ի] հրամայեաց կոչել առ ինքն զհազարապետն Մահմէդ բէգ, և առաջակայ հետևակին իւրոյ հրամայեաց խեղդել զնա: Իսկ նա ունեցաւ ժամանակ միայն ըրպէ մի խնդրել զողորմութիւնն, որ և խնդրեաց, սակայն Նադիր ասաց զբանս զայս.

«Յայնժամ ողորմիցէի զքեզ, եթէ մեք զՌզա-Ղուլի Միրզին ևս խնայիցէաք»:

Եւ հազարապետն իսկոյն զրկեցեալ եղև ի կենաց, և ի յայս պատահանս մեծամեծքն պարսից խորին մտածամամբ մեծացուցանէն զասացեալ բանսն շահին: Սկսան կարծիս անկանիլ վասն Ռզա-Ղուլի Միրզին՝ սակս խորհրդոյ սպանութեան հօրն և թագաւորին իւրոյ: Բայց Լօթֆալի խան վարէր զինքն խոհեմութեամբ և կեղծաւորութեամբ՝ այնպէս, իբր թէ առ այն գործն ինքն ամենևին ոչ իցէր մասնակից երբէք:

Եւ Ռզա-Ղուլի Միրզա, մնալով ի թէհրան, զբօսնոյր փափկակեցութեամբ ի զուարճալի և ուրախարար տեղիսն արտաքոյ քաղաքին, և զերկոսին ներքինիսն, որք տուեալք (60ք) էին նմա ի ծնօղէն իւրմէ՝ մեռոյց զնոսա: Աստ մարթէ իմանալ իհարկէ վասն այնորիկ, զի իմացեալ եմիտ էառ, զի զնոսին ոչ եթէ վասն պահպանութեան առողջութեան նորա էին զարքեալք, այլ վասն փորձառութեան և վերահասութեան էին զնոսա յարկացեալք ընդ նմա:

Եւ շահ Նադիր ի յելսն ներկայ ամռան առաքեաց հրովարտակ սիրալիր ողորմութեան որպէս առ երէց որդին, նմա-

նապէս և առ միւս որդիսն իւր, նաև՝ առ յատկապէս ջերմ սիրով սիրեցեալ դեռահասակ թոռն իւր Շա[հ]ռուխ Միրզա, որ ծնեալ էր ի կնոջէ Ռզա-Ղուլի Միրզին՝ արքայազնուհէ Սօֆիականէ, կոչել զնոսա առ ինքն այսու օրինակաւ, թէ՛ սրովհետև իւրոյ մեծութիւնն շրջի անդրէն ի հեռաւոր տեղիս՝ յազազս հնազանդեցուցանելոյ զթշնամիսն իւր, իսկ վասն բազմաժամանակեալ[ի] կարօտութեան իւրոյ զերեսս որդւոց իւրոց փափակմամբ տեսանել կամի: Այժմ սրտի մտօք ցանկայ լցուցանել զկամեցողութիւն իւր և մխիթարիլ, և վասն այսորիկ բարեմտաբար հրամայէ միջակ որդւոյն՝ Նէսիրօլլահ Միրզէ և կրտսեր որդւոյն Իմամ-Ղուլի Միրզէ և սիրելի պատուական թոռան իւրոյ Շա[հ]ռուխ Միրզէ, զի ամենեքեան ի միասին ելանիցեն ի Մաշադայ և գալով ընդ յարմար ճանապարհաւ գնասցեն ի Թէհրան, ուր միաւորեսցի ընդ սիրելի Ռզա-Ղուլի Միրզին, և ամենեքեան ի միասին եկեսցեն ի դուռն իւրոյ մեծութեան:

Եւ այսպիսի կարգաւորութեամբ զերեք որդիսն շահ Նազիրայ և զթոռն նորա չուեցին ի Թէհրանայ և սկսան գալ: Բայց Ռզա-Ղուլի Միրզա ի ճանապարհի անդ զչարեցաւ բարկութեամբ ի վերայ ատենադպրին, և ոչ ապրոյր նա ի մահուանէ, եթէ ոչ թագչիցէր ի նմանէ, և ի յայտնիլ նորա առ թագաւորն իւր՝ ասաց ցնա, թէ՛ ի որդւոյ քոյին մեծութեան զերկու ներքինիսն կորուսեալ եղեն, և կամէր զիս ևս սպանանել:

Եւ յամսեանն հոգտեմբերի 1742 յամին եկին թագաւորագունքն ամենեքեան ի Դարբանդ և կալան բնակութիւնք ի պալատին արքունի աւուրս (61ա) երիս վասն դանչելոյ, և ապա զնացին ի բանակ շահին, քանզի յայնմ ժամանակի էր շահ ենթ Ռաշու<sup>212</sup> գեօղին՝ բացատութեամբ ի քաղաքէն քառասուն վերստ, զի սակս ձմերնանալոյ ընդ զօրսն իւր անդ ժողովեալք էին:

<sup>212</sup> Բաշու – գյուղ Դերբենդի հյուսիսային կողմում (տե՛ս Բարխուտարեանց Ս., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, Ե., 1999, էջ 42):

Եւ ըստ հրովարտակի շահին, վասն գնալոյ նոցին Դարբանդոյ մինչև ցբանական, նշանակեցեալ էր նոցա տեղի երեկօթն առնել առ կիսոյ ճանապարհաւ առընթեր Բաշբուղամ գետով, և յորժամ եկին նոքա անդ և մտին ի տաղավար սակս նոցա պատրաստեալ, յայնժամ եկն առ նոսա փութով էշիկաղայ մին ընդ հրովարտակի շահին, յորում հրամանէր, զի միջակ և կրտսեր որդիք և զթոռն Շա[հ]ուլի Միրզայ գնասցեն ի պալատն տաղավարական, և Ռզա-Ղուլի Միրզի մնալ, զի ի միուսում առուր գնասցէ անդ:

Եւ ի մտանալ նոյն երեք անձանց առ բանակն ընդառաջ ելին նոցա պալատական աստիճանաւորքն հանդերձ հանդէսիւք, և ընկալաւ շահ գերկու որդիսն և զթոռն իւր յոյժ սիրով և ողորմածութեամբ, և արժանաւորեաց հրամայելով նոցա համբուրել զքղանցս պարեգօտին իւրոյ:

Եւ միւսում առուր եկն և զերէց որդին Ռզա-Ղուլի Միրզա, որում ամենեկն պատիւ ինչ ոչ ետուն, և եմուտ նա ի գաւիթն պահնորդաց տաղավարին, որ կայր յանդիման դատաստանական տաղավարին, և էջ յերիվարէն և մերկեաց յինքենէ զթուրն և զաղեղն հանդերձ նետիւքն (քանզի ըստ սովորութեան պարսից առաջի երեսաց արքայի սպառազինեալ և ընդ գօտի ածեալ սրով ոչ մտանեն):

Յայնժամ մատուցեալ ազդեցին շահին յաղագս գալստեան նորա, և նա հրամայեաց թողուլ զնա ընդառաջ նորա, և Ռզա-Ղուլի Միրզա ընդ առաջնորդութեամբ էշիկաղային հանդերձ զօրականօք, եմուտ յետկոյս վշեղէն վարագուրին, այսինքն արգելանոցին, երկիր եպագ արքային և ծնօղին իւրոյ, և եկաց հեռագոյն, քանզի թարց հրամանի ոչ ոք իշխէ մօտաւորիլ նմա:

Եւ հայեցեալ նադիր ի վերայ որդւոյն ետես զսուր կապեալ ըստ սովորութեան ի գօտուջ նորա, որ էր խանջալն, գոչեաց ասելով ահարկու (61բ) ձայնիւ.

«Բարձէ՛ք ի դմանէ զգէնն սրոյ»:

Եւ ընդդէմ նմին Ռզա-Ղուլի Միրզա պատասխանեաց խրոխտանօք, թէ՛ ոչ ունի ի վերայ իւր սպառազէնս ինչ, և առեալ յինքնէ գխանջալն կամէր ձգել զերկիր, բայց էշիկա-դայն իսկոյն յափշտակեաց զայն ի ձեռաց նորա:

Եւ շահ, ասելով Ռզա-Ղուլի Միրզա՝ յիմար, հրամայեաց դնել ի վերայ նորա զկոծղ և ենթ պահապանաց պահել զնա ի բանդի, սակայն ի մէջ տաղավարի՝ մօտ առ կառավարական տաղավարին:

